ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՁԵՌՆԱՐԿ

Երևան 2022

Ձեռնարկը պատրաստել է «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող «Համագործակցություն հանուն արդարադատության ոլորտում բարեփոխումների» ծրագրի շրջանակում: Ձեռնարկի բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմիայն «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությանն են և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ-ի տեսակետներին:

Հեղինակներ՝

Անահիտ Հովհաննիսյան,

Աշխեն Դաշյան,

Մարիա Թևոսյան,

Նունե Բալյան,

Քրիստինա Հովհաննիսյան

Խմբագիրներ՝

Ռիմա Գրիգորյան,

Ազնիվ Նասլյան

Էջադրումն ու ձևավորումը՝ Content Media Production-ի

«Իրավունքի ուժ» ՀԿ, 2022 թ., 124 էջ

Սույն ձեռնարկը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի՝ «Քաղաքացիական հասարակություն» (ՔՀ) թեմայով: Շարքն ընդգրկում է զրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

Քննադատական մտածողություն (ՔՄ)

Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)

Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)

Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

ՀՏԴ 347.64(07)
ԳՄԴ 67.404.5ց7
Դ 194

Հովհաննիսյան Ա., Դաշյան Ա., Թևոսյան Մ., Բալյան Ն., Հովհաննիսյան Ք.
Դ 194 Խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների անդամների համար նախատեսված ձեռնարկ / Ա. Հովհաննիսյան, Ա. Դաշյան, Մ. Թևոսյան, Ն. Բալյան, Ք. Հովհաննիսյան.- Եր.:
«Իրավունքի ուժ» իրավապաշտպան ՀԿ, 2022.- … էջ:

Սույն ձեռնարկը ստեղծվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների մասնագիտական կարողությունների հզորացմանը աջակցելու նպատակով:

Ձեռնարկն օգտակար կլինի նաև այն մասնագետների համար, որոնք հետաքրքրված են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին անդամակցելով կամ համագործակցում են դրանց հետ, ինչպես նաև տրամադրում են սոցիալական ծառայություններ:

Երեխաների իրավունքներին առնչվող մասնագիտական հարցերը և ընթացակարգերը ձեռնարկի առանցքային թեմաներն են: Ներկայացվում է հայաստանյան փորձը՝ անդրադառնալով կարևոր հարցերի լուծումների նախադեպերին և առօրյա աշխատանքում կիրառվող գործիքակազմին:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության փորձը ցույց է տալիս, որ նրանց անդամները համայնքում աշխատում են առանձին ընտանիքների, երեխաների կամ այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ: Հաշվի առնելով այդ իրողությունը՝ ձեռնարկը մշակվել է այն տրամաբանությամբ, որ դրանում արտացոլվի ինչպես առանձին սոցիալական դեպքերի հետևանքների մեղմման, չեզոքացման, այնպես էլ երեխաների պաշտպանության գործող համակարգի այլ օղակների հետ աշխատանքի մեթոդաբանությունը:

Ձեռնարկում նախանշվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքի հիմնական բայլերը և սկզբունքները, որոնք իրականացվում են մտածված և համաչափ գործողությունների միջոցով. դրանց առանցքում երեխայի լավագույն շահն է և մարդու հիմնարար իրավունքների իրացումն ապահովելու նպատակը: Բացի նշվածից՝ խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրվում են մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափորոշիչներից և ձևավորված առաջատար փորձից բխող որոշակի ցուցումներ, որոնք կնպաստեն նրանց արդյունավետ գործունեությանը որոշումների կայացման փուլում: Թեպետ ձեռնարկի ուշադրության կենտրոնում երեխաներն են, ցուցումները ու առաջարկվող օրինակելի պրակտիկան կիրառելի են նաև այլ խոցելի խմբերի հետ աշխատանքի կազմակերպման ժամանակ:

ՀՏԴ 347.64(07)
ԳՄԴ
67.404.5ց7

ISBN 978-9939-1-1344-9
© «Իրավունքի ուժ» իրավապաշտպան ՀԿ, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 8

ԳԼՈՒԽ I

ԽՀՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ 12

ԽՀՀ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 13

ԽՀՄ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 16

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔԸ 16

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ 17

ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԵՎ
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ 17

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԴԻՐՔԻ
ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ 18

ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԵՐԵԽԱՅԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ 18

ԳԼՈՒԽ II

ԽՀՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ
ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 21

ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԸ ԵՎ ԽՀՄ-Ի ԴԵՐԸ
ԴՐԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 22

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ
ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 35

ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 38

ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄ 48

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ
ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 48

ԳԼՈՒԽ III

ԽՀՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ
ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ 56

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԼՍՈՒՄՆԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 59

ԽՀՄ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻՆ 59

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ 66

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ 68

ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ 78

ՏՆԱՅՑԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ 85

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 91

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 105

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռնարկը ստեղծվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների (այսուհետ՝ նաև ԽՀՄ) մասնագիտական կարողությունների հզորացմանը աջակցելու նպատակով:

Ձեռնարկն օգտակար կլինի նաև այն մասնագետների համար, որոնք հետաքրքրված են անդամակցելու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին (այսուհետ՝ նաև ԽՀՀ) կամ համագործակցում են դրանց հետ, ինչպես նաև տրամադրում են սոցիալական ծառայություններ:

Երեխաների իրավունքներին առնչվող մասնագիտական հարցերը և ընթացակարգերը ձեռնարկի առանցքային թեմաներն են: Ներկայացվում է հայաստանյան փորձը՝ անդրադառնալով կարևոր հարցերի լուծումների նախադեպերին և առօրյա աշխատանքում կիրառվող գործիքակազմին:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության փորձը ցույց է տալիս, որ նրանց անդամները համայնքում աշխատում են առանձին ընտանիքների, երեխաների կամ այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ: Հաշվի առնելով այդ իրողությունը՝ ձեռնարկը մշակվել է այն տրամաբանությամբ, որ դրանում արտացոլվի ինչպես առանձին սոցիալական դեպքերի հետևանքների մեղմման, չեզոքացման, այնպես էլ երեխաների պաշտպանության գործող համակարգի այլ օղակների հետ աշխատանքի մեթոդաբանությունը:

Ձեռնարկում նախանշվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքի հիմնական քայլերը և սկզբունքները, որոնք իրականացվում են մտածված և համաչափ գործողությունների միջոցով. դրանց առանցքում երեխայի լավագույն շահն է և մարդու հիմնարար իրավունքների իրացումն ապահովելու նպատակը: Բացի նշվածից՝ խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրվում են մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափորոշիչներից և ձևավորված առաջատար փորձից բխող որոշակի ցուցումներ, որոնք կնպաստեն նրանց արդյունավետ գործունեությանը որոշումների կայացման փուլում: Թեպետ ձեռնարկի ուշադրության կենտրոնում երեխաներն են, ցուցումներն ու առաջարկվող օրինակելի պրակտիկան կիրառելի են նաև այլ խոցելի խմբերի հետ աշխատանքի կազմակերպման ժամանակ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնք: Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է և վարչատարածքային միավոր: Այն հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Սոցիալական պաշտպանվածություն: Վիճակ, երբ (1) համայնքի բնակիչների հիմնարար իրավունքներն ու ազատություններն իրացվում են, (2) նրանց պահանջմունքների բավարարման և բնականոն կենսագործունեության համար առկա են անհրաժեշտ պայմաններ ու բավարար ռեսուրսներ, (3) բնակչության տարբեր խմբեր արդյունավետորեն պաշտպանված են սոցիալական ռիսկերի ազդեցություններից:

Սոցիալական ռիսկ: Որոշակի գործոններով պայմանավորված հնարավոր անցանկալի վիճակ կամ իրավիճակ, որի իրականություն դառնալու դեպքում կսահմանափակվեն մարդու (մարդկանց) սեփական պահանջմունքները բավարարելու հնարավորությունները կամ կդառնան անհնարին:

Երեխա: 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված դեպքերում և կարգով լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերում կամ լրիվ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխա (այսուհետ՝ ԱԾԽՄ երեխա): ԱԾԽՄ երեխա է համարվում 18 տարին չլրացած այն անձը, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացած են (մահացած է), զրկված են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են: ԱԾԽՄ երեխաների դեպքում կյանքի դժվարին վիճակը իրավական ձևակերպում է ստացել:

Կյանքի դժվարին իրավիճակ: Հաշմանդամության, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ է, որն անձը ինքնուրույն հաղթահարել չի կարող:

Երեխայի լավագույն շահ: Երեխայի խնամքի որակի գնահատման հիմնական չափանիշն է, որը պետք է ամրագրի պետությունը, ճանաչի և ընդունի հասարակությունը, կիրառվի նախ ընտանիքում, ապա երեխայի պաշտպանության համակարգում: Երեխայի լավագույն շահի պաշտպանությունը ներառում է բոլոր այն պայմանների համակցումը, որոնք անհրաժեշտ են

նրա հիմնարար կարիքների բավարարման համար՝ սկսած ֆիզիկական պայմաններ ստեղծելուց մինչև դաստիարակություն, պաշտպանություն, երեխայի հիմնական արժեհամակարգի ձևավորում նրա իրավունքների իրացման և տվյալ հասարակության մշակույթի համատեքստում: Այլ կերպ ասած՝ խոսքը բոլոր այն պայմանների, հնարավորությունների և գործողությունների մասին է, որոնք կարող են ապահովել երեխայի պահանջմունքների համարժեք բավարարումը, իրավունքների պաշտպանությունը, անձնային աճն ու բնականոն զարգացումը: Երեխայի լավագույն շահից բխող որոշման կայացման գործընթացում պետք է ընդգրկվի հենց ինքը՝ երեխան, և նրա կարծիքը պետք է հաշվի առնվի նրա տարիքային առանձնահատկություններին և հասունության մակարդակին համապատասխան:

<u>Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների այլընտրանքային խնամք:</u> Այս երեխաների խնամքի կազմակերպման ձևերն են հաստատություններում խնամքը, խնամակալությունը, խնամատարությունը և որդեգրությունը:

<u>Խնամատարություն:</u> Որևէ պատճառով խնամքից մշտապես կամ ժամանակավորապես զրկված երեխայի ընտանեկան տիպի այլընտրանքային խնամքի կազմակերպման ձևն է: Այն ենթադրում է երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպումը մեկ այլ՝ բարենպաստ ընտանեկան միջավայրում: Խնամատար ծնողի/ծնողների աշխատանքը կարելի է համարել ընտանեկան պայմաններում կատարվող մասնագիտական աշխատանք:

<u>Խնամակալություն:</u> Խնամակալությունն սահմանվում է տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ: Տասնչորս տարին չլրացած երեխայի խնամակալությունը ստանձնելիս խնամակալը պարտավորվում է իրականացնել վերջինիս խնամքը և դաստիարակությունը, ինչպես նաև ապահովել օրենսդրությամբ սահմանված իրավունքների իրացման համար նպաստավոր պայմաններ:

<u>Հոգաբարձություն:</u> Հոգաբարձությունը սահմանվում է տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ: Այս պարագայում ևս երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են ընտանեկան միջավայրում, ընդ որում՝ հոգաբարձուն, ինչպես և խնամակալը, կարող է երեխայի հետ որևէ կերպ փոխկապակցված կամ չփոխկապակցված անձը լինել:

<u>Սոցիալական պաշտպանության համակարգ:</u> Պետության կարևոր համակարգ, որի գործառումը միտված է ապահովելու հասարակության բոլոր շերտերի սոցիալական պաշտպանությունը սոցիալական տարբեր ռիսկերից, ինչպես նաև ստեղծելու սոցիալական իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմաններ:

<u>Սոցիալական խոցելիություն և անպաշտպանություն:</u> Այնպիսի վիճակ, երբ անհատների, խմբերի և

համայնքների կենսական պահանջմունքների բավարարումը, լիարժեք գործառումը վտանգվում են կարողությունների սահմանափակության, վիճակի առանձնահատկության կամ նրանց նկատմամբ վերաբերմունքի հետևանքով: Հասարակության մեջ առկա բարիքների քանակը միշտ ավելի փոքր է դրանց կարիքից, հետևաբար դրանց համար մղվող պայքարում որոշ խմբերի և համայնքների հնարավորությունները սահմանափակ են:

<u>Սոցիալական ճկունություն:</u> Անհատի և/կամ ընտանիքի՝ տարբեր տեսակի սոցիալական իրավիճակների հարմարվելու կարողությունն է:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են: Խնամակալության և հոգաբարձության մարմնի առաքելությունն է իրականացնել երեխաների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը, իր գործառույթների շրջանակում աջակցել երեխայի՝ ընտանիքում ապրելուն և դաստիարակվելուն, ապահովել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը:

ԽՀՄ-ի առաքելությունը միտված է նաև երեխայի լավագույն շահի բացահայտմանը և պաշտպանությանը, ընտանեկան առողջ միջավայրի ապահովմանը, իսկ դրա անհնարինության դեպքում այն պետք է աջակցի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխայի և ծնողների միջև փոխհարաբերությունների առողջացմանը:

ԽՀՄ-ն իր որոշումներով և գործառույթներով պետք է նպաստի ընտանեկան վեճերի լուծմանը՝ օգտագործելով արտադատական վարչական բոլոր ռեսուրսները, իսկ լուծում չստանալու դեպքում դիմի դատարան: Պետք է հիշել, որ այն վեճերը, որոնք հնարավոր է լուծել արտադատական եղանակով, չպետք է լուծվեն դատական կարգով: Դատական պաշտպանությունը պետք է դիտարկել որպես պաշտպանության վերջին միջոց վարչական բոլոր ռեսուրսների սպառումից հետո՝ խնայելով ժամանակ և դրանով թոթափելով նաև դատարանների ծանրաբեռնվածությունը:

ԽՀՄ-ի դերը ընտանեկան վեճերում պետք է լինի առանցքային և փոխհավասարակշռի բոլորի իրավունքների պաշտպանությունը. ընտանիքի բոլոր անդամները պետք է ստանան հավասար հնարավորություններ և պաշտպանություն:

Ընտանիքը հասարակության պատմական զարգացման արդյունք է և, որպես հասարակական-պատմական երևույթ, փոփոխվում է հասարակության փոփոխմանը զուգընթաց: Հաշվի առնելով

ներկայիս սոցիալ-տնտեսական փոխակերպումները և դրանց ազդեցությունը ընտանիքի վրա՝ այսօր, առավել, քան երբևէ, կարևորվում է ընտանիքի՝ որպես հասարակության կարևորագույն բջջի հանդեպ հոգածությունը: Սա իր հերթին հանգեցնում է պետության ու հասարակության կայունությանը:

Երեխաների և խնամակալության կարիք ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունն իր հերթին նպաստում է նրանց կյանքի որակի բարձրացմանը, սոցիալ-հոգեբանական խնդիրների առաջացման կամ խորացման կանխարգելմանը, հակասոցիալական միտումների նվազմանը և ի վերջո ծառայում ոչ միայն անհատի, այլև հասարակության պաշտպանության և առողջ զարգացման շահերին:

ԳԼՈՒԽ I

ԽՀՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ԽՀՀ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքի ղեկավարներն են:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, որոնք խորհրդակցական մարմիններ են և գործում են հասարակական հիմունքներով, դրանց կազմը հաստատում է համայնքի ղեկավարը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ: Հանձնաժողովը կարող է ունենալ աշխատակարգ, որը հաստատվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ): Կարևոր է, որ հանձնաժողովի կազմը ձևավորելիս համայնքի ղեկավարը առաջարկի այն անձանց թեկնածությունները, որոնք այս կամ այն կերպ առնչություն ունեն երեխայի իրավունքների պաշտպանության գործընթացին: Այս հարցն, օրինակ, ծագում է համայնքապետարանի համայնքային ծառայող-խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամի թեկնածության պարագայում, և համայնքի ղեկավարը, հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ապահովելու իր նկրտումներով պայմանավորված, հարկ է, որ առաջադրի հանձնաժողովի գործունեությանն առնչակից ոլորտ ներկայացնողի թեկնածություն:

Այն պարագայում, երբ հանձնաժողովը քննարկում է երեխային վերաբերող հարցեր, հանձնաժողովի կազմում մշտապես ընդգրկված պետք է լինեն մանկավարժներ, հոգեբաններ և սոցիալական աշխատանքի մասնագետներ: Սա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ հանձնաժողովը պետք է լսի երեխայի տեսակետը և նրա հետ զրուցի խորհրդապահական պայմաններում:

Խնամակալության և հոգաբարձության գործունեության արդյունավետությունը շեշտակի կարող է բարձրանալ, եթե հանձնաժողովի անդամները խորությամբ տիրապետեն երեխայի

հետ տարվող զրույցի մասնագիտական գործիքակազմին: Հաշվի առնելով վերը նշվածը՝ հանձնաժողովի նախագահը պարբերաբար կարող է կազմակերպել հանձնաժողովի անդամ-հոգեբանի վերապատրաստումներ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև ապահովել սերտ համագործակցություն երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների հետ, որտեղ ամենօրյա աշխատանք է տարվում երեխայի հետ, և բոլոր նման կառույցների մասնագետները տիրապետում են մասնագիտական բոլոր նրբություններին:

Բուժօգնության տրամադրմանը կամ երեխայի առողջական վիճակի գնահատմանը թեկուզ մասնակի առնչվող վեճ ինելիս իրավիճակը ճիշտ գնահատելու համար հանձնաժողովը պետք է ներգրավի նաև բուժաշխատողների: Օրինակ՝ լսումների ընթացքում կամ հավաստի այլ աղբյուրներից ԽՀՄ-ն ստացել է տեղեկություններ, որ երեխան կարիք ունի անցնելու բժշկական զննություն, սակայն ծնողը ուշադրություն չի դարձնում այդ հանգամանքին: Այստեղ բուժաշխատողի ներգրավվածությունը ոչ միայն անհրաժեշտ է երեխայի առողջության պահպանման իրավունքն իրացնելու համար առաջնային քայլերի ձեռնարկման աջակցության, այլև ծնողի հետ համապատասխան աշխատանք տանելու տեսանկյունից: Մեկ այլ իրավիճակում երեխայի խնամքին հավակնող անձը կարող է բողոքով դիմել ԽՀՄ-ին՝ նշելով, որ մյուս ծնողը խնամքի ընթացքում երեխայի առողջական վիճակը վատթարացնող կամ հակացուցված դեղահաբեր է տալիս և իրականացնում թերի բուժում: Նշված դեղերի հակացուցված լինելը կամ երեխայի առողջական վիճակի վրա դրանց ազդեցության հանգամանքը կարող է նախնական ստուգել ԽՀՀ անդամ համապատասխան բուժաշխատողը, քանի որ հարցը մասնագիտական մոտեցում է պահանջում:

Եթե հանձնաժողովի կազմն արդեն իսկ հաստատվել է, և հետագայում է նման անհրաժեշտություն առաջացել, ապա հանձնաժողովի նախագահը դրա մասին կարող է տեղեկացնել համայնքի ղեկավարին, որպեսզի վերջինս հանձնաժողովի կազմը լրացնելու կամ փոփոխելու մասին առաջարկություն ուղարկի համայնքի ավագանուն: Եթե հանձնաժողովի նախագահը համայնքի ղեկավարն է, ապա անձամբ կարող է նման առաջարկություն ներկայացնել համայնքի ավագանուն:

Հանձնաժողովի անդամների ընտրության ժամանակ ցանկալի է հաշվի առնել հանձնաժողովի գործունեության բազմակողմանիությունը, գործառույթների առանձնահատկությունները, պահանջվող գիտելիքների և հմտությունների բնույթը: Հանձնաժողովը պետք է համալրվի բազմամասնագիտական թիմի սկզբունքով՝ ներառելով տարբեր մասնագիտական ուղղվածությամբ անձանց, որոնց շարքում առավել կարևորվում են իրավաբանը, մանկավարժը, սոցիալական աշխատողը, հոգեբանը և բժիշկը: Բացի մասնագիտական գիտելիքներից՝ խիստ կարևոր է նաև, որ մարդու իրավունքների և արժանապատվության նկատմամբ հարգանքը առաջնային լինեն հանձնաժողովի բոլոր անդամների համար:

Պակաս կարևոր չէ, որ հանձնաժողովի անդամներն իրենց մասնագիտական որակները և

համապատասխան գիտելիքները հավաստող փաստաթղթեր ունենան և ներկայացնեն ԽՀՄ-ին: Դրանք կպահպանվեն ԽՀՄ գործավարության անձնական գործերում, որպեսզի հետագայում նրանց տված մասնագիտական եզրահանգումներն այդ հիմքով կասկածի տակ չդրվեն և արժանահավատ համարվեն: Չի բացառվում, որ որոշ դեպքերում հանձնաժողովի անդամների մասնագիտական որակները վեճի կողմերից մեկը կասկածի տակ դնի և համապատասխան տեղեկություններ ստանալու հարցմամբ դիմի ԽՀՄ:

Հանձնաժողովի նիստը նախապատրաստելու և զեկուցմամբ հանդես գալու համար հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ հանձնաժողովի կազմից նշանակվում է հիմնական զեկուցող:

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստի վերաբերյալ բոլոր մանրամասները և դրա ընթացքում հանձնաժողովի անդամների գործառույթները մանրամասն շարադրված են «ԽՀՄ գործառույթները լսումների ժամանակ» մասում:

Խնամակալության և հոգաբարձության մարմնի առաջարկով հանձնաժողովը կազմում և երեխայի խնամքի հարցը որոշելու վերաբերյալ վարույթում ԽՀՄ-ին է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրակացություն, որն արտացոլում է խնդրի մասին հանձնաժողովի դիրքորոշումը և դատարանի համար ունի խորհրդատվական բնույթ:

Հանձնաժողովի անդամները մասնակցում են հանձնաժողովի նիստերին, կարող են հարցեր ուղղել զեկուցողին, հանդես գալ առաջարկություններով, հայտնել իրենց դիրքորոշումը քննարկվող հարցերի վերաբերյալ: Հանձնաժողովի որևէ անդամ չի կարող իր մասնագիտական կարծիքի, դիրքորոշման կամ առաջարկության համար թիրախավորվել կամ հետապնդվել, արժանանալ անհարգալից վերաբերմունքի: Նման իրավիճակները բացառելու պատասխանատուն հանձնաժողովի նախագահն է, որը պետք է նիստը վարի պատշաճ ընթացակարգով՝ ապահովելով առողջ քննարկման մթնոլորտ: Ավելին՝ հանձնաժողովի անդամները պարտավորվում են ապահովել նիստերի ընթացքում ներկայացված դիրքորոշումների գաղտնիությունը՝ այդպիսով ապահովելով նաև հանձնաժողովի անդամների անվտանգությունը:

ԽՀՄ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մասնագետները բավական պատասխանատու աշխատանք են կատարում և հարկ է, որ իրենց աշխատանքի ընթացքում հաշվի առնեն բարեվարքության մոտեցումների կարևորությունը: Արհեստավարժ մասնագետի համար էթիկայի նորմերը նախ և առաջ սեփական մասնագիտական գործունեության կարգավորիչն են, արհեստավարժության ներքին չափանիշը:

Էթիկական նորմերի հիմքում ընկած է Հիպոկրատի «Մի՛ վնասիր» սկզբունքը, որը ենթադրում է պատասխանատվություն երեխայի կյանքի և առողջության համար: Էթիկական նորմերը մասնագետի համար լոկ վերացական կանոնների ամբողջություն չեն, այլ գիտակցված և հստակ ընկալում առ այն, թե ինչպես են իրականում տեղի ունենում անվտանգ, ապահով միջավայրի ձևավորումը և մասնագիտական հարաբերությունների տարբերակումը առօրյա կյանքից, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում կատարել մասնագիտական աշխատանքը:

Ակնհայտ է, որ երեխաների, անչափահասների հետ աշխատող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մասնագետներին բնորոշ պետք է լինեն համամարդկային, մարդասիրական, քաղաքական և բարոյական բարձր արժեքները, որոնք հնարավորություն կընձեռեն նվազագույնի հասցնելու հոգեբանական և սոցիալական հավանական վնասը երեխաների մասնակցությամբ համապատասխան արտադատական և դատավարական գործընթացների անցկացման ժամանակ: Քանի որ մինչդատական և դատավարական գործընթացին մասնակցությունը ուժեղ սթրեսածին գործոն է անչափահասի համար, այդ բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է աշխատել պահպանել էթիկական նորմերը: Հանձնաժողովի անդամի գործունեության ընթացքում կարևորվում է հատկապես էթիկական բարեվարքությունը, որը պահանջում է, որ անհատի արժեքները և համոզմունքները ունենան որոշակի սահմանագծեր:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Անհրաժեշտ է ցուցաբերել միայն մասնագիտական օգնություն, այսինքն՝ կատարել այն աշխատանքը, որը հիմնված է ստացած կրթության, հատուկ պատրաստվածության ու մասնագիտական փորձի վրա, և գիտակցել սեփական կարողունակության սահմանները: Ոլորտի մասնագետների իրականացրած բազմաբնույթ գործունեությունը պահանջում է բարձր մասնագիտական կարողություններ, որոնք ներառում են

գիտելիքներ իրավական, սոցիալական, հոգեբանական, մանկավարժական ոլորտներում: Մասնագետները պետք է տիրապետեն հետազոտական, փաստաթղթավարության, որոշումների կայացման, եզրակացությունների պատրաստման և մի շարք այլ հմտությունների, կարողանան կիրառել դրանք՝ հաշվի առնելով ուսումնասիրվող դեպքի առանձնահատկությունները, և, ըստ այդմ, ցուցաբերեն անհատական մոտեցում:

Անհրաժեշտ է ջանքեր գործադրել՝ հարստացնելու գիտելիքների պաշարը և կատարելագործելու աշխատանքային հմտությունները: Երեխաների հետ աշխատող մասնագետները պարբերաբար պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան ճիշտ շփվել երեխաների հետ, պահպանեն տեսական և տեխնիկական հիմնական պահանջները ու սկզբունքները, տեղին ու ժամանակին գնահատեն այլ՝ հարակից մասնագետների ներգրավման անհրաժեշտությունը և համագործակցեն նրանց հետ: Նրանք պարբերաբար հաղորդակից պետք է լինեն երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին, տիրապետեն օրենսդրությանը, ծանոթանան հարակից օրենքներին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են իրենց գործունեությանը:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի չխախտվի անձի մասնավոր կյանքի պաշտպանության իրավունքը: Երեխաների և նրանց ընտանիքների վերաբերյալ մասնավոր տեղեկություններ պարունակող տեսաձայնագրությունները, փաստաթղթերը և նիստերի բովանդակությունը պետք է լինեն խիստ գաղտնի և հասանելի չդառնան այլ անձանց: Այդ նյութերը կարող են տրամադրվել միայն գործի հետ ուղղակիորեն առնչվող և սահմանված կարգով լիազորված անձանց: Երեխայի ներգրավվածությամբ գործի վերաբերյալ չպետք է հրապարակվի որևէ տեղեկություն, որը կարող է բացահայտել նրա ինքնությունը: Ցանկության դեպքում ծնողները կարող են միջնորդել գործի քննությունը դռնփակ անցկացնելու համար:

ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Մասնագետը պետք է խորությամբ գիտակցի սեփական արժեքները և համոզմունքները և դրանք չպարտադրի այլ անձանց, ինչպես նաև հարգանքով վերաբերվի այլոց անձնային արժեքներին և մշակութային առանձնահատկություններին: Նմանօրինակ հարգալից վերաբերմունք նա պետք է դրսևորի երեխայի և նրա ընտանիքի անդամների նկատմամբ՝ անկախ նրանց տարիքից, ռասայից, կրոնից, սեռից, սեռական կողմնորոշումից, լեզվից, ազգային, սոցիալական ծագումից, կարգավիճակից, ընտանեկան կամ տնտեսական դրությունից, հաշմանդամությունից, արտաքին տեսքից, քաղաքական հայացքներից և այլ համոզմունքներից կամ կարգավիճակից:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Քանի որ երեխան բավականին խոցելի է, և մասնագետի հետ նրա հարաբերությունները անհավասար են, անթույլատրելի է, սեփական դիրքը չարաշահելով, ազդել նրա և նրա ընտանիքի անդամների վրա, ճնշում գործադրել, ընդունել նվերներ կամ ծառայություններ: Նույնը վերաբերում է նաև սեփական մասնագիտական կարգավիճակը կամ երեխայի և ընտանիքի՝ մասնագետի որոշումներից կախյալ վիճակը, նրանց վստահությունը որևէ կերպ չարաշահելուն:

Մասնագետը պետք է խուսափի շահերի բախումից (ֆինանսական, աշխատանքային և անձնական) և բացառի ցանկացած հարաբերություն, որ դուրս է օրենսդրությամբ սահմանված կարգավորումների շրջանակից: Անհրաժեշտ է գնահատել նախորդող և խաչվող հարաբերությունների հնարավոր ազդեցությունը առաջիկա աշխատանքի ընթացքի վրա: Ցանկացած պարագայում հարկ է երեխայի կենսաբանական ծնողներին, խնամակալ ծնող դառնալ ցանկացող անձանց իրենց համար մատչելի և հասկանալի եղանակով ներկայացնել օրենսդրությունը՝ բացառելով հանձնաժողովի անդամից կախվածության մեջ դնելու հնարավոր դեպքերը: Պետք է գիտակցել, որ խնամակալ ծնող դառնալ ցանկացող անձանց կամ երեխայի կենսաբանական ծնողներից մեկի հետ երեխայի հետագա խնամքի կազմակերպման ցանկալի տարբերակի վերաբերյալ հանձնաժողովի անդամի մասնավոր պայմանավորվածությունները պատժելի են օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԵՐԵԽԱՅԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Մասնագետը պետք է հաշվի առնի երեխայի չափազանց զգայուն լինելը իր անձի, արժեքների և նախասիրությունների վերաբերյալ ցանկացած խոսքային կամ ոչ խոսքային գնահատականի կամ վերաբերմունքի նկատմամբ: Այդ պատճառով նա պետք է խուսափի հնարավոր ուղղակի կամ անուղղակի հորդորից, հրահանգից, պարտադրանքից, գնահատականից:

Մասնագետը ոչ մի պարագայում չպետք է շոշափի իր անձնական արժեքները, մշակութային, կրոնական ու սոցիալական համոզմունքները և առավելագույնս զերծ մնա սեփական գնահատականները, զգացմունքները, շահագրգռվածությունն ու ցանկությունները արտահայտելուց:

Նա պետք է լինի անկողմնակալ՝ թույլ չտալով համակրանքի, հակակրանքի, հուզական այլ դրսևորումների, անձնական հայացքների և պատկերացումների ազդեցություն գործընթացի վրա: Էլ ավելի կարևոր է, որ նա չունենա անձնական շահագրգռվածություն գործընթացի տևողության կամ արդյունքի նկատմամբ:

Երեխաների հետ աշխատելու մեթոդները պետք է լինեն հարմարեցված՝ հաշվի առնելով նրանց տարբեր կարիքները: Ամեն ինչ պետք է նախապատրաստել այնպես, որ նրանք կարողանան արտահայտել իրենց կարծիքը:

Անձնային արժեքներից բացի՝ ցանկացած մասնագիտություն մասնագետից պահանջում է յուրահատուկ մասնագիտական արժեհամակարգի առկայություն: Հանձնաժողովի արհեստավարժ անդամն իր աշխատանքում առաջնորդվում է մասնագիտական հմտություններով, գիտելիքներով և արժեհամակարգով:

Այս երեք բաղադրիչները հանձնաժողովի անդամի ամենօրյա աշխատանքի հենքն են.

- Մարդը բարձրագույն արժեք է, հետևաբար նրա նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի անվերապահորեն դրական և միայն հարգալից:

- Մարդը բացառիկ է, նա իր բացառիկությունը հաստատում և զարգացնում է այլ մարդկանց հետ փոխազդեցությունների ընթացքում:

- Մարդը ունակ է փոխվելու, կատարելագործվելու, հետևաբար կյանքի յուրաքանչյուր իրավիճակում ունի ընտրության իրավունք:

Կարևոր է հետևել ծառայողական էթիկետին (վարվելաձև), որը հիմնվում է հանձնաժողովի անդամների, նրա շահառուների և գործընկերների շահերը հարգելու և հաշվի առնելու վրա: Աշխատավայրում, ծառայողական փոխհարաբերություններում գործում են քաղաքավարության բոլոր այն կանոնները, որոնք անհրաժեշտ է պահպանել հասարակական վայրերում և կենցաղային զանազան իրավիճակներում:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև էթիկետի որոշ կանոններ, որոնք կարող են նպաստել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամի մասնագիտական գործունեության արդյունավետ իրականացմանը:

- Արտաքին տեսքի և հագուստի կանոններ: Հանձնաժողովի անդամի համապատասխան արտաքին տեսքը կարևոր նշանակություն ունի, ցույց է տալիս հարգանքը գործընկերների և շահառուների նկատմամբ: Այն էական դեր ունի հանձնաժողովի

մասին կարծիք կազմելու, հուսալիության զգացումի և հանրային վստահության համար, քանի որ գործառույթն իրականացվում է հանրային միջավայրում:

- Խոսքային էթիկետի կանոններ: Հարկ է խուսափել «դու» դիմելաձևից: Դիմե՛ք տվյալ մշակույթում ընդունված վարվեցողությանը համապատասխան ձևով (եթե ընդունված չեն պարոն, ընկեր դիմելաձևերը, ապա մի՛ գործածեք), հակառակ դեպքում նրանց արժանապատվությունը կարող է վիրավորվել:

ԳԼՈՒԽ II

ԽՀՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, վարում նրանց սկզբնական հաշվառումը և, պայմանավորված ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներով, ձեռնարկում անհրաժեշտ միջոցներ նրանց հետագա խնամքի և դաստիարակության կազմակերպման ձևերի որոշման նպատակով:

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա հետևյալ իրավիճակներում՝ ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանօրինակ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց հրաժարվելը), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում:

ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԸ ԵՎ ԽՀՄ-Ի ԴԵՐԸ ԴՐԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ինչպես արդեն նշվել է, երեխայի լավագույն շահը նրա խնամքի որակի գնահատման հիմնական չափանիշն է, որը պետք է ընդունեն և կիրառեն ինչպես հասարակությունը, այնպես էլ երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող համապատասխան կառույցները:

Երեխային առնչվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից, որոնց ապահովումը նախատեսված է երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացման, ինչպես նաև նրա բազմակողմանի զարգացման համար:

Երեխայի լավագույն շահը առնվազն ներառում է նրա մտավոր և ֆիզիկական կարիքները, դրանց բավարարմանն ուղղված համապատասխան խնամքը: Ծնողի (ծնողների)՝ որպես ընտանիքի անդամի (անդամների) հետ անվտանգ պայմաններում շփվելը խիստ կարևոր է երեխայի զարգացման համար: Մշակութային, լեզվական կամ հոգևոր-կրոնական կապերը, դաստիարակությունը ևս մեծ նշանակություն ունեն երեխայի զարգացման և լավագույն շահի տեսանկյունից: Կարևոր է, որ ընտանեկան միջավայրում պատշաճ ուշադրություն դարձվի այս հարցերին, երեխան կարողանա արտահայտել իր հայացքներն ու նախասիրությունները, և դրանք հաշվի առնվեն:

Երեխայի լավագույն շահի իրացման և պաշտպանության առաջնային պատասխանատուներից մեկը ընտանիքն է, հատկապես երբ երեխան խնամվում է այդտեղ: Այս դեպքում ընտանիքի խնդիրն է ապահովել բոլոր այն պայմանները, որոնք անհրաժեշտ են տվյալ հասարակության

մշակույթի և իրավունքի համատեքստում երեխայի հիմնարար կարիքների բավարարման համար՝ սկսած ֆիզիկական պայմաններ ստեղծելուց մինչև դաստիարակություն, պաշտպանություն, երեխայի հիմնական արժեհամակարգի ձևավորում: Այլ խոսքով՝ բոլոր այն պայմանները, հնարավորությունները և գործողությունները, որոնք կարող են ապահովել երեխայի պահանջմունքների համարժեք բավարարումը, իրավունքների պաշտպանությունը, անձնային աճն ու բնականոն զարգացումը, երեխայի լավագույն շահի իրացման անհրաժեշտ հիմքերն են:

Երեխայի լավագույն շահից բխող որոշման կայացման գործընթացում պետք է ընդգրկվի հենց ինքը՝ երեխան՝ իր տարիքային առանձնահատկություններին և հասունության մակարդակին համապատասխան: Թեպետ սա հեշտ չէ, բայց և անհնարին չէ:

Իրենց իրավունքները պաշտպանելու համար երեխաները հատուկ աջակցության կարիք ունեն, քանի որ փոքր են և խոցելի: Մեծահասակները երեխաների համար ապահովում են հավասար հնարավորություններ ու պաշտպանում են նրանց իրավունքները՝ երեխաների լավագույն շահերով պայմանավորված:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի չորս հիմնաբարային սկզբունքներից մեկը երեխայի լավագույն շահն է, որը պետք է կիրառեն բոլոր մարմինները: Գոյություն ունի մեծ կոնսենսուս, այդ թվում՝ միջազգային իրավունքում, ի պաշտպանություն այն սկզբունքի, որ երեխաներին վերաբերող բոլոր որոշումներում նրանց լավագույն շահերը պետք է առաջնային նշանակություն ունենան: Այդ պատճառով պետությունները ինչպես ազգային օրենքով, այնպես էլ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններով պետք է և՛ ուշադրություն դարձնեն դրանց, և՛ գնահատեն:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածում սահմանվում է երեխայի լավագույն շահի առաջնային գնահատման կարևորությունը. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ նրանից՝ դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»[1]:

Հայաստանի Հանրապետությունը երեխայի լավագույն շահերին անդրադարձել է երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ազգային օրենսդրությամբ՝

- ՀՀ Սահմանադրություն,

1 ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում, https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

- ՀՀ ընտանեկան օրենսգիրք,
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,
- ՀՀ քրեական օրենսգիրք,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք,
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք,
- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենք,
- «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
- ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշում «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Չնայած նշված իրավակարգավորումների առկայությանը՝ ԽՀՄ-ները պետք է նկատի ունենան, որ երեխայի շահերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս կարող են ի հայտ գալ բազմաթիվ գործոններ, որոնք օրենսդրական ակտերի շրջանակում սպառիչ թվարկված չեն: Ազգային օրենսդրությամբ չեն նախատեսվում երեխայի լավագույն շահը գնահատելու հստակ չափորոշիչներ կամ մեթոդներ՝ այն թողնելով դատական, վարչական մարմիններին, պաշտոնատար անձանց: Վերջիններս առաջնորդվում են որոշակի իրավիճակներով, ինչը մի կողմից թույլ է տալիս տվյալ վեճի շրջանակում առկա իրավիճակում լայն մեկնաբանությամբ գնահատել երեխայի լավագույն շահերը, մյուս կողմից հնարավորություն է տալիս չսահմանափակվելու միայն ազգային օրենսդրությամբ և օգտվելու նաև միջազգային իրավունքի հարուստ նախադեպային պրակտիկայից, ՀՀ-ի վավերացրած միջազգային պայմանագրերից: Դրանք են՝

- «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (այսուհետ՝ նաև Կոնվենցիա),
- «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա,
- «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա,

- «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր,

- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա,

- «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիա:

Անդրադառնալով ՀՀ պետական մարմինների՝ երեխայի լավագույն շահը առաջնային գնահատելու պոզիտիվ պարտականությանը՝ պետք է արձանագրել, որ խնամակալության և հոգաբարձության մարմինները և դրանց կից գործող հանձնաժողովները իրենց գործառույթներն իրականացնելիս և դրանց շրջանակներում եզրակացություններ կայացնելիս առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն երեխայի լավագույն շահին, ղեկավարվեն այն կարգավորող ներպետական և միջազգային նորմերով:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածի ուժով ՀՀ-ն՝ որպես մասնակից պետություն, պարտավորվում է երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրություն դարձնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներին ու պարտականություններին և այդ նպատակով ձեռնարկելով օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները: Նույն կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները, այդ թվում՝ ՀՀ-ն, ապահովում են երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանության համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և մարմինների համապատասխանությունն իրավասու մարմինների սահմանած չափանիշներին: Այս առումով պետք է արձանագրենք, որ ԽՀՄ-ն նույնպես հանդես է գալիս որպես երեխաների պաշտպանության համար պատասխանատու մարմին, հետևաբար երեխաների շահերը գնահատելիս պետք է առաջնորդվի նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով:

Ազգային օրենքներից բացի՝ ՀՀ-ի վավերացրած միջազգային պայմանագրերով առաջնորդվելու մասին է նշվում նաև ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ին ընդունած 631-Ն որոշման մեջ, որը սահմանում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, գործառույթները և հստակ շարադրում. «3. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, «Երեխայի իրավունքների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով,

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ»[2]:

Հարկ է շեշտել, որ պետական մարմինների համար ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված է, որ ՀՀ-ի վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը[3]: Նշվածի համատեքստում կարող ենք եզրակացնել, որ եթե ընտանեկան հարաբերություններում երեխայի իրավունքների պաշտպանության ժամանակ խնամակալության և հոգաբարձության մարմինները հանդիպեն իրավիճակների, որոնք ուղղակիորեն կարգավորված չեն ազգային օրենսդրությամբ, կարող են կիրառել միջազգային պայմանագրերի նորմերը, դրանց վերաբերյալ տրված մեկնաբանությունները, որոնք առավել կհեշտացնեն վճռին օբյեկտիվ լուծում տալը հօգուտ երեխայի լավագույն շահի:

Լինում են դեպքեր, երբ միայն ազգային օրենքներով տրված սկզբունքներով և նորմերով հնարավոր չէ լուծում տալ խնդրին: Այդ պարագայում դրանց լրացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որը նախատեսում է երեխաների իրավունքների միջազգային պաշտպանություն:

Ազգային օրենսդրության մեջ «երեխայի լավագույն շահ» հասկացությունը որոշակիորեն ներկայացված է ՀՀ ընտանեկան օրենսգրքում[4]: Այստեղ օրենսդիրը թվարկել է մի շարք գործոններ, որոնք պետք է հաշվի առնվեն երեխային առնչվող ցանկացած գործողության ժամանակ՝ վերոնշյալ հասկացությունը գնահատելու համար: Դրանք են երեխայի մտավոր, ֆիզիկական կարիքները, դրանց բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու նշանակությունը, ազգային պատկանելությունը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը, դաստիարակությունը ընտանեկան միջավայրում[5]:

---

2 ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշումը «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր (այսուհետ՝ ՀՀՊՏ) 2016.06.29/50(1230) Հոդ. 603, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152354 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

3 Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

4 ՀՕ-123-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152573 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

5 Մանրամասն տե՛ս ՀՕ-123-Ն, 1-ին հոդված, 7-րդ կետ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152573 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

Այնուհանդերձ, նույն օրենսգրքում «երեխայի լավագույն շահ» հասկացության սահմանման մեջ վերոնշյալ գործոնները սպառիչ թվարկված չեն, օրենսդիրը իրավական նորմը եզրափակել է «...և այլ կարիքները, պահանջները և շահերը»[6] ձևակերպմամբ՝ այն թողնելով նաև իրավակիրառ մարմինների հայեցողությանը:

Փաստորեն վերը հիշատակված իրավակարգավորումը խնամակալության և հոգաբարձության մարմիններին հնարավորություն է տալիս առաջնորդվելու օրենսդրի թվարկած գործոններով, բայց միևնույն ժամանակ կաշկանդված չլինելու միայն դրանցով, այլ հաշվի առնելու որոշակի իրավիճակում ու հանգամանքներում երեխայի շահը թելադրող այլ գործոններ, չափորոշիչներ, ձեռնարկելու միջոցներ և տարբեր մեթոդներով որոշելու և գնահատելու այն, այդ թվում՝ նաև համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Ավելին՝ օրենսդիրն իրապես առավել քան լայն հնարավորություն է տվել երեխայի լավագույն շահերի գնահատման տիրույթում՝ ամրագրելով առաջնայնության սկզբունքը նորմերի տարաբնույթ կիրառման ժամանակ և նշելով. «Եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ կիրառվել, ապա այն կիրառելիս առաջնահերթ հաշվի են առնվում երեխայի լավագույն շահերը»[7]:

ՀՀ Սահմանադրական դատարանն ավելի բովանդակալից մեկնաբանություն է տվել երեխայի լավագույն շահերի առաջնայնության սկզբունքին 2020 թվականի մարտի 20-ի ՍԴՈ-1515 որոշմամբ. «Օրենսդիրը, երեխայի լավագույն շահերն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ընտանեկան վեճերի քննության համար նախատեսել է բացառություններ, քանի որ նման գործերով պետությունն ունի առաքելություն՝ ապահովելու, երաշխավորելու ու պաշտպանելու երեխայի լավագույն շահերը՝ անկախ մրցակցային դատավարության պայմաններում ծնողների հայեցողությամբ իրացվող իրավունքներից ու պարտականություններից»[8]:

Նկատի ունենալով այն, որ խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց գործառույթների շրջանակներում ներգրավված են տարբեր վարույթներում, որտեղ երեխաների իրավունքները կարող են առնչվել կամ բախվել ծնողների իրավունքներին և պարտականություններին, նախաքննական մարմինների կողմից իրականացվող որոշակի գործողություններին (անչափահասի մասնակցությամբ կատարվող քննչական գործողություններ) և այլ պետական մարմինների գործառույթներին, նույնիսկ նրանք չպետք է կաշկանդված լինեն վերոնշյալ բոլոր գործողություններով և իրենց իրավասության շրջանակում ունենան հստակ առաքելություն՝ ապահովելու, երաշխավորելու ու պաշտպանելու երեխայի լավագույն շահը՝ անկախ ամեն ինչից: ԽՀՄ-ների մոտեցումը ցանկացած հարցում պետք է լինի երեխայակենտրոն. օրենսդիրն ազգային օրենքներով, դատարաններն իրենց նախադեպային որոշումներով լիարժեք տալիս են այդ հնարավորությունը:

---

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում, 1-ին հոդված, 8-րդ կետ:

8 Տե՛ս https://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1515.pdf [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

Պետք է ուշադրություն դարձնել այն դեպքերին, երբ անչափահասները հայտնում են կարծիք, որը չի բխում երեխայի լավագույն շահերից: Այս դեպքում կրկին պետք է գերակա լինի երեխայի լավագույն շահը, որը նաև կարող է չհամընկնել անչափահասի՝ տվյալ պահին արտահայտած տեսակետին: ՀՀ Սահմանադրական դատարանը 05.10.2010 թվականի ՍԴՈ-919 որոշմամբ անդրադարձել է այս իրավիճակին՝ արձանագրելով, որ ծնողների ամուսնալուծության դեպքում երեխայի բնակվելու վայրի վերաբերյալ համաձայնության բացակայության պարագայում դատարանների համար գերակա պայման պետք է լինի երեխայի լավագույն շահը, իսկ եթե դատարանի գնահատմամբ երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերի հետ, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով[9]:

Ընտանեկան հարաբերությունների գործերով «երեխայի լավագույն շահ» հասկացությունը կիրառելու նպատակով ձևավորվել է դատական պրակտիկա: Դա պայմանավորված է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով (տե՛ս Հավելված 6): Խնամակալության մարմինները կարող են առաջնորդվել Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով արձանագրված չափանիշներով և, դրանք հիմք ընդունելով, որոշել, թե երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող այս կամ այն հարցում ինչն է բխում երեխայի լավագույն շահերից:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների իրավունքների պաշտպանության ժամանակ պետք է առաջնորդվեն «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով ամրագրված հիմնաքարային 4 սկզբունքներով՝

- առանց խտրականության,
- երեխայի լավագույն շահ,
- կյանքի ու զարգացման իրավունք,
- մասնակցության իրավունք:

ԽՀՄ-ները պետք է առաջնորդվեն այն գիտակցմամբ, որ բոլոր երեխաներն ունեն նույն իրավունքները, և նրանք երբեք որևէ հիմքով չպետք է խտրականության ենթարկվեն: Սա ինքնին բխում է համապատասխան կոնվենցիայով սահմանված սկզբունքից: Երեխաների իրավունքներն առանց որևէ խտրականության պաշտպանելու սկզբունքն ամրագրված է նաև Եվրոպայի խորհրդի «Երեխայի համար սահմանված արդարադատության ուղեցույցներ» փաստաթղթի III C կետում. «Երեխայի իրավունքները պետք է պաշտպանվեն առանց որևէ հիմքով խտրականության՝

9 Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2010.10.13/50(784) Հոդ. 1132, https://www.arlis.am/documentview.aspx?docID=61311 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից կամ էթնիկ ծագումից,տարիքից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծնողների կարգավիճակից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, սեփականությունից, ծնունդից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից կամ այլ կարգավիճակից»[10]: Այսպիսով՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաներին հավասար հնարավորություններ տրամադրելու պարտավորություն ունեն:

Հաճախ են եղել դեպքեր, երբ որևէ կրոնական համոզմունք ունեցող ծնողների երեխային դպրոցում կամ բակում ծաղրել են, բռնության ենթարկել: Ծնողները դիմել են ԽՀՄ-ին, որպեսզի պաշտպանի իրենց երեխաների իրավունքները կամ որևէ կերպ լուծի վեճը, սակայն նրանք իրենց անգործությամբ ցուցաբերել են բացահայտ բացասական վերաբերմունք տվյալ ընտանիքի և երեխայի նկատմամբ՝ իրենց պաշտպանության տակ չվերցնելով անչափահասին միայն այն բանի համար, որ վերջինիս ընտանիքը Հայ առաքելական եկեղեցու հետևորդ չէ: Նման երևույթները պետք է բացառել, քանի որ երեխաների իրավունքները ենթակա են պաշտպանության առանց որևէ խտրականության:

Ավանդական լուծումներ առաջարկող եզրակացություններ կազմելը ևս պետք է հանել ԽՀՄ-ների պրակտիկայից: Այդպիսի տարածված օրինակ է ծնողի և ո՛չ երեխայի շահը հաշվի առնելը: Կարևոր է, որ խնամակալության մարմինները ծնողի և երեխայի շահերը հավասարակշռելիս վերհանեն վերջինիս շահը և ուղենշային համարեն այն:

Երեխաները իրենց իրավունքների սուբյեկտներն են, հետևաբար նրանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը պետք է բխի այս ելակետից: Երեխայի և ծնողների շահերի հավասարակշռման միջև երեխայի շահերի գերակայությանը անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումներով:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը պահանջում է, որ երեխայի և ծնողների շահերի միջև ապահովվի հավասարակշռություն: Այդ գործընթացում առանձնակի նշանակություն պետք է տալ երեխայի շահերին, որոնք, իրենց բնույթով և շրջանակներով պայմանավորված, կարող են գերակայել ծնողների շահերի նկատմամբ: Ծնողները իրենց ծնողական իրավունքները իրացնելիս չպետք է վնաս հասցնեն իրենց երեխաներին, նույնիսկ եթե ազդեցությունն անուղղակի է: Ծնողը չի կարող իրավունք ունենալ ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք վնաս են հասցնում երեխայի առողջությանը և զարգացմանը[11]:

---

10 Տե՛ս https://rm.coe.int/16804b2cf3 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

11 Ռիտչենկոն ընդդեմ Ռուսաստանի (գանգատ թիվ 22266/04, 2011 թվականի հունվարի 20), http://hudoc.echr.coe.int/eng?i=001-102894 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

Լինում են իրավիճակներ, երբ երեխայի կյանքը, առողջությունը, հոգեբանական վիճակը ծնողի մոտ վտանգված են լինում, քանի որ վերջինիս վարքագիծը մեծ վնաս է պատճառում նրա իրավունքներին: Այստեղ պատկան մարմինները պետք է ընտրություն կատարեն և քայլեր ձեռնարկեն երեխային սոցիալական աջակցության կենտրոն տեղափոխելու և ծնողի մոտ թողնելու միջև: Ակնհայտ է, որ ծնողներն ունեն իրենց երեխաներին դաստիարակելու և խնամելու նախապատվության իրավունք, բայց եթե դա չարաշահվում է այնքան, որ վնասում է երեխային՝ նրան թողնելով առանց սննդի, իր հետ աշխատանքի տանելով և աշխատել հարկադրելով, նվաստացնելով, վատ վերաբերվելով, դպրոց հաճախելուց զրկելով, ապա երեխայի լավագույն շահից է բխում, որ նրան առանձնացնեն ծնողից և վերցնեն պետական հոգածության ներքո այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացել երեխայի՝ ընտանիքից բաժանման համար հիմք հանդիսացող հանգամանքները, այդ թվում վատ վերաբերմունքի տարրերը: Երեխայի հետագա խնամքի մասին որոշում կայացնելիս առաջնություն պետք է տրվի երեխայի արժանապատվությանը, հանգստի, կրթություն ստանալու, անվտանգ կյանքի համար պայմանների ապահովմանը, նույնիսկ եթե այն ուղեկցվելու է ծնողից առանձնացնելու գործողությամբ:

Արդյունքում ԽՀՄ-ները կարող են միջամտել ծնողական իրավունքների իրացմանը և առանձնակի պաշտպանության տակ վերցնել երեխային այն պահից, երբ նրա իրավունքները խախտվում են, և վնաս է պատճառվում նրանց առողջությանը, զարգացմանը, կյանքին: Այս դեպքում երեխայի շահերը գերակայում են ծնողների շահերի նկատմամբ:

Երեխայի իրավունքների կոմիտեի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի մեկնաբանություններում առանձնացվել են երեխայի լավագույն շահի գնահատման չափորոշիչներ, որոնցից կարող են օգտվել խնամակալության և հոգաբարձության մարմինները:

Այսպես, Երեխայի իրավունքների կոմիտեի «Թիվ 14 ընդհանուր մեկնաբանություն երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու երեխայի իրավունքի վերաբերյալ» փաստաթղթով (այսուհետ՝ նաև Երեխայի իրավունքների կոմիտեի Թիվ 14 ընդհանուր մեկնաբանություն) սահմանված են այն չափորոշիչները, ըստ որոնց՝ դատական կամ վարչական մարմինների կողմից հնարավոր է լինում պարզել և գնահատել երեխայի լավագույն շահը՝ հետևյալ սկզբունքների համաձայն.

- երեխայի լավագույն շահերը և առանց խտրականության իրավունքը,
- երեխայի լավագույն շահերը և կյանքի իրավունքը, գոյատևումը և առողջ զարգացումը,
- երեխայի լավագույն շահերը և լսվելու իրավունքը[12]:

12 Մանրամասն տե՛ս https://www2.ohchr.org/English/bodies/crc/docs/GC/CRC_C_GC_14_ENG.pdf [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

Զափազանց կարևոր է, որ երեխայի լավագույն շահը գնահատվի ճշված սկզբունքների համաձայն: Օրինակ, երբ ԽՀՄ-ն պետք է լուծում տա վեճի, որում մի կողմից վտանգված է երեխայի կյանքի իրավունքը (երեխային պետք է տեղավորել որևէ աջակցության կենտրոնում ծնողի կողմից բռնության ենթարկվելուց պաշտպանելու համար), մյուս կողմից՝ ծնողի հետ վերամիավորման, նրա հետ ընտանիքում ապրելու իրավունքը, այստեղ արդեն երեխայի լավագույն շահը պետք է համարվի նրա կյանքի իրավունքը: Տվյալ իրավիճակում երեխայի լավագույն շահից է բխում աջակցության կենտրոն տեղափոխվելը:

Հանգամանքների բնույթով պայմանավորված՝ երեխայի լավագույն շահը կարող է փոխվել: Սակայն ցանկացած իրավիճակում ԽՀՄ-ները խնդրին լուծում պետք է տան՝ կրկին երեխայի լավագույն շահերով պայմանավորված: Իրավունքների և շահերի բախման այս խաչմերուկում, երբ մի կողմում երեխային ընտանիքից, ընտանեկան միջավայրից մեկուսացնելու, մյուս կողմում ծնողի՝ իր ծնողական իրավունքները իրացնելու, նրա համաձայնությամբ երեխաներին կենտրոն տեղափոխելու կամքն է, երեխայի լավագույն շահը ընտանեկան միջավայրում ապրելն է, նրան ընտանիքից չմեկուսացնելը, հոգեբանական ճնշման չենթարկելը, նրա կամքը, տեսակետը հաշվի առնելը: Սա պետք է գերակայի ծնողական իրավունքների իրացման նկատմամբ, եթե դրանք էապես վնասում են երեխային և նրան պատժելու միտում ունեն: Այստեղ երեխայի լավագույն շահը պետք է դիտարկել իր լսված լինելու իրավունքի համատեքստում՝ առաջնորդվելով ընտանեկան միջավայրից չհեռացնելու գործոնությամբ:

Փաստորեն տարբեր իրավիճակներում երեխայի լավագույն շահը կարող է թելադրել տարբեր լուծումներ. կարևորն այն է, որ դրա հիմքում անկյունաքարային լինի երեխայակենտրոն մոտեցումը: Հարկ է շեշտել, որ երեխայի լսված լինելու իրավունքը ամրագրված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով[13]:

ԽՀՄ-ները իր հայցքները ձևակերպելու ունակ երեխայի համար պետք է ապահովեն դրանք ազատորեն արտահայտելու իրավունքի իրացումն այն բոլոր դեպքերում, երբ հարցը վերաբերում է հենց իրեն՝ երեխային: Երեխայի հայցքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն: Այդ նպատակով նրան մասնավորապես հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով լսվելու թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով: Ըստ Երեխայի իրավունքների կոմիտեի

13 Մանրամասն տե՛ս ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում, https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503, Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի Թիվ 14 ընդհանուր մեկնաբանություն երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու երեխայի իրավունքի վերաբերյալ, Երեխայի լավագույն շահերը և լսված լինելու իրավունքը (հոդված 12), https://www2.ohchr.org/English/bodies/crc/docs/GC/CRC_C_GC_14_ENG.pdf [հասանելի են 01.03.2022-ի դրությամբ]:

մեկնաբանությունների՝ առանձնացվել են երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման չափորոշիչներ, որոնց կանդրադառնանք ստորև:

Թիվ 14 ընդհանուր մեկնաբանությամբ Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն հստակեցնում է երեխայի լավագույն շահ հասկացության իմաստը: Կոնվենցիայով սահմանված դրույթն այն մասին, որ երեխաներին առնչվող բոլոր գործողությունների շրջանակում երեխայի լավագույն շահը պետք է լինի առաջնային, իրավական պարտականություն է սահմանում պետությունների համար:

Ըստ Կոմիտեի՝ երեխայի լավագույն շահը գնահատելիս և որոշելիս պետք է նկատի ունենալ հետևյալ հարցերը.

ա) Երեխայի հայացքները

«Կոնվենցիայի[14] 12-րդ հոդվածը երեխաների համար նախատեսում է իրենց վրա ազդող բոլոր որոշումների վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտելու իրավունք: Եթե որևէ որոշում հաշվի չի առնում երեխայի տեսակետը և պատշաճ նշանակություն չի տալիս դրան նրա տարիքին և հասունության աստիճանին համապատասխան, նշանակում է, որ երեխային կամ երեխաներին հնարավորություն չի տրվել ներգրավվելու իրենց լավագույն շահերի որոշման գործընթացում: Երեխայի փոքր տարիքը կամ խոցելի դիրքը (օրինակ՝ հաշմանդամությունը, փոքրամասնության պատկանելը, միգրանտ լինելը և այլն) չի զրկում նրան իր տեսակետը արտահայտելու իրավունքից և չի նվազեցնում դրա ունեցած կշիռը իր լավագույն շահերի որոշման հարցում: Նման իրավիճակներում երեխայի իրավունքների հավասար իրացումը երաշխավորելուն ուղղված հատուկ միջոցների ընդունումը պետք է ենթակա լինի անհատական գնահատման, ինչը ապահովում է երեխաների դերը որոշումների կայացման գործընթացում և անհրաժեշտ հնարավորությունների տրամադրումը ըստ կարիքի, որպեսզի ապահովվի նրանց լիարժեք մասնակցությունը իրենց լավագույն շահերի գնահատման գործընթացին»[15]:

Թեպետ, ըստ վերոշարադրյալի, անգամ տարիքը կամ հաշմանդամությունը չի կարող զրկել երեխային իրեն վերաբերող որոշման գործընթացին մասնակցելու իրավունքից, սակայն պրակտիկայում հաճախ են եղել սրան հակադիր դեպքեր: Այսպես, ԽՀՄ-ն չի լսել ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխային, որպեսզի տեղաշարժման վերաբերյալ

14 ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում, https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

15 Մանրամասն տե՛ս Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի Թիվ 14 ընդհանուր մեկնաբանություն երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու երեխայի իրավունքի վերաբերյալ, https://www2.ohchr.org/English/bodies/crc/docs/GC/CRC_C_GC_14_ENG.pdf [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

անհանգստություն չպատճառի նրան, սակայն այս գործողությամբ ինքնին հանգեցրել է երեխայի լսված լինելու իրավունքի խախտման: Նման պարագայում, երեխայի երկու շահերը փոխհավասարակշռելով, պարզապես պետք է փոխել երեխային լսելու ձևաչափը, օրինակ՝ լսել նրան իր բնակության կամ գտնվելու վայրում, բայց ոչ մի դեպքում չզրկել արտահայտվելու իրավունքից:

բ) Երեխայի անհատականությունը

«Երեխաները՝ որպես խումբ, միատարր չեն, ուստի երեխայի լավագույն շահը գնահատելիս պետք է ուշադրություն դարձվի բազմազանությանը: Երեխաների ինքնությունը ներառում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են սեռը, սեռական կողմնորոշումը, ազգային ծագումը, կրոնը և համոզմունքները, մշակութային ինքնությունը, անհատականությունը: Թեև բոլոր երեխաները և երիտասարդները ունեն նույն հիմնական կարիքները, այնուհանդերձ, նրանց պատկերացումները կարող են պայմանավորված լինել անձնական, ֆիզիկական, սոցիալ-մշակութային տարբեր ասպեկտներով, այդ թվում՝ զարգացող ունակություններով: Իր ինքնությունը պահպանելու երեխայի իրավունքը երաշխավորված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով, և դա պետք է հարգվի ու հաշվի առնվի նրա լավագույն շահերը գնահատելիս: Ինչ վերաբերում է կրոնական և մշակութային ինքնության խնդիրներին, ապա, օրինակ, որդեգրման կամ երեխաների խնամքի համար նախատեսված համապատասխան հաստատություններում տեղավորելու հարց դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի դաստիարակության հաջորդայնությունն ապահովելու ցանկալիությունն ու նրա էթնիկական ծագումը, կրոնական ու մշակութային պատկանելությունը և մայրենի լեզուն (20-րդ հոդվածի 3-րդ կետ): Երեխայի լավագույն շահերը գնահատելիս և որոշելիս որոշում կայացնողը պետք է հաշվի առնի այս հատուկ համատեքստը: Նույնը վերաբերում է որդեգրման, առանձին բնակության և ամուսնալուծության դեպքերին: Երեխայի լավագույն շահերը պատշաճ նկատի ունենալը ենթադրում է, որ նրանք հասանելիություն ունեն իրենց երկրի և ծագման ընտանիքի մշակույթին, հնարավորության դեպքում՝ լեզվին, ինչպես նաև հնարավորություն ունեն տեղեկացվելու իրենց կենսաբանական ընտանիքի մասին՝ տվյալ երկրի իրավական և մասնագիտական կարգավորումներին համապատասխան (տե՛ս Հոդված 9, 4-րդ պարբերություն)»[16]:

գ) Ընտանեկան միջավայրի և հարաբերությունների պահպանումը

Ընտանեկան միջավայրի պահպանումը ներառում է երեխայի կապերի պահպանումն ավելի լայն իմաստով: Խոսքը ընդլայնված ընտանիքի անդամների՝ տատիկների և

16 Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի Թիվ 14 ընդհանուր մեկնաբանություն երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու երեխայի իրավունքի վերաբերյալ, https://www2.ohchr.org/English/bodies/crc/docs/GC/CRC_C_GC_14_ENG.pdf [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

պապիկների, հորեղբայրների, մորեղբայրների, հորաքույրների (մորաքույրների), ինչպես նաև դպրոցի ընկերների և լայն շրջապատի հետ կապի մասին է: Նշված հանգամանքները հատկապես կարևոր են այն դեպքերում, երբ ծնողները դադարել են միասին ապրելուց կամ ապրում են տարբեր վայրերում[17]:

դ) Երեխայի խնամքը, պաշտպանությունը և անվտանգությունը

Երեխաների շահերի գնահատման և որոշման ժամանակ պետությունը պետք է հաշվի առնի երեխայի բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանություն և խնամք տրամադրելու պարտավորությունը: «Պաշտպանություն» և «հոգատարություն» եզրույթները նույնպես պետք է մեկնաբանվեն լայն իմաստով, քանի որ դրանց նպատակը չի ձևակերպվել սահմանափակ կամ բացասական նշանակություն ունեցող եզրույթներով, ինչպիսին է, օրինակ, երեխային բացասական իրողություններից պաշտպանելը: Երեխաների բարեկեցությունը լայն իմաստով ներառում է նրանց նյութական, ֆիզիկական, կրթական և հուզական, ինչպես նաև սիրո և ապահովության կարիքները: Հուզական խնամքը երեխայի հիմնական կարիքն է: Եթե ծնողները կամ այլ խնամակալներ չեն բավարարում նրանց հուզական կարիքները, ապա միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի երեխան զարգանա հուսալի և առողջ միջավայրում: Բացի դրանից՝ երեխայի լավագույն շահերը գնահատելիս պետք է հաշվի առնվի նրա անվտանգությունը, այն է՝ նրան ֆիզիկական կամ հոգեբանական չարաշահման բոլոր ձևերից պաշտպանելը: Որոշում կայացնելիս լավագույն շահերի սկզբունքի կիրառումը նշանակում է գնահատել երեխայի՝ տվյալի պահի անվտանգությունը և անձեռնմխելիությունը: Այնուամենայնիվ, նախազգուշական սկզբունքը նույնպես պահանջում է գնահատել ապագա ռիսկի և վնասի հավանականությունը և որոշման այլ հետևանքները երեխայի անվտանգության տեսանկյունից[18]:

ե) Խոցելիություն

Վարչական մարմինները և որոշում կայացնողները պետք է հաշվի առնեն խոցելիության բնույթն ու աստիճանը յուրաքանչյուր երեխայի դեպքում առանձին, քանի որ նրանցից ամեն մեկն առանձնահատուկ է, և յուրաքանչյուր իրավիճակ պահանջում է հատուկ գնահատում: Բազմամասնագիտական թիմը պետք է ուսումնասիրի երեխայի պատմությունը՝ սկսած նրա ծննդյան պահից, պարբերաբար վերանայի և առաջարկի անհրաժեշտ հնարավորություններ[19]:

---

17 Մանրամասն տե՛ս նույն տեղում:

18 Մանրամասն տե՛ս Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի Թիվ 14 ընդհանուր մեկնաբանություն երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու երեխայի իրավունքի վերաբերյալ, https://www2.ohchr.org/English/bodies/crc/docs/GC/CRC_C_GC_14_ENG.pdf [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

19 Մանրամասն տե՛ս նույն տեղում:

զ) Երեխայի առողջության իրավունք

Երեխայի առողջության պահպանման իրավունքը և առողջական վիճակը կարևոր և առանցքային նշանակություն ունեն նրա լավագույն շահերի գնահատման հարցում[20]:

է) Երեխայի կրթության իրավունք

Երեխաներին վերաբերող գործողությունների կապակցությամբ ցանկացած որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվի նաև նրանց լավագույն շահը կրթական իրավունքի իրացման վերաբերյալ[21]: Երեխայի համար պետք է ապահովել որակյալ կրթության հասանելիությունը՝ այդ թվում վաղ մանկության շրջանում՝ ֆորմալ և ոչ ֆորմալ եղանակներով:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հաճախ ԽՀՀ անդամները կարիք են ունենում գնահատելու, թե ինչպես են ապահովվում երեխայի խնամքը և պաշտպանությունը ընտանեկան միջավայրում: Համապատասխան մասնագիտական ուղենիշներից բաջատեղյակ լինելը կօգնի այս հարցի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելուն և եզրահանգման գալուն:

Երեխայի լավագույն շահը ենթադրում է նրա խնամքի, աճի և զարգացման համար այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կապահովեն նրա ֆիզիկական և հոգեկան առողջության և առողջ զարգացման առավելագույն արդյունավետությունը:

Երեխայի խնամքի ու զարգացման համար ընտանիքն ամենալավ միջավայրն է, եթե այնտեղ երաշխավորված են նրա պաշտպանությունը, ապահովությունը: Ընտանիքում կապվածության և սիրո հարաբերությունները անհրաժեշտ նախադրյալներ են երեխայի անձի նորմալ ձևավորման ու զարգացման համար: Երեխայի բնականոն զարգացումը և սոցիալականացումը ենթադրում են նրա կենսական պահանջմունքների բավարարում և անհրաժեշտ խնամքի ու դաստիարակության ապահովում: Այդ տեսակետից առանձնացնում են հետևյալ գործոնները.

20 Մանրամասն տե՛ս նույն տեղում:
21 Մանրամասն տե՛ս նույն տեղում:

- ծնողների՝ երեխային սննդով, կացարանով, հագուստով և բժշկական խնամքով ապահովելու կարողությունը,

- ծնողների կյանքի ոճը, հարաբերությունների բնույթը, ծնող-երեխա հուզական կապի էությունը,

- երեխայի սոցիալական կապերը կրթական հաստատության, ընդլայնված ընտանիքի անդամների, սոցիալական միջավայրի հետ,

- երեխայի անձնային առանձնահատկությունները, անհատականությունը, նախասիրությունները:

Դժվար է գերագնահատել ընտանիքի դերը մարդու կյանքում: Այն բարդ սոցիալ-մշակութային միջավայր է, որտեղ և որի ազդեցությամբ ձևավորվում ու կայանում է երեխայի «ես»-ը: Հասարակություն մուտք գործելը ևս տեղի է ունենում ընտանիքի օգնությամբ. այն սոցիալական նորմերի և անհատի զարգացման միջնորդ օղակն է, կրում է ինչպես սոցիալական միջավայրի, այնպես էլ իր յուրաքանչյուր անդամի ազդեցությունը: Իր հերթին երեխայի լավագույն շահի ապահովման և պաշտպանության ընտանիքի կարողությունը պայմանավորված է նրա հիմնարար պահանջմունքների բավարարվածության մակարդակով: Սա անհրաժեշտ է ընտանիքին իր հիմնական գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար: Ընտանիքն այն կառույցն է, որը ենթադրում է անդամների պաշտպանվածություն և նրանց պահանջմունքների բավարարում: Խոսքը վերաբերում է անհատական, հասարակական, խմբային պահանջմունքներին:

Ընտանեկան կյանքն ուղեկցվում է բազմաթիվ սթրեսներով, որոնք հաղթահարելու համար ընտանիքների կարողությունները տարբեր են: Նրանց համար սթրեսածին գործոններ են կանխատեսելի և անկանխատեսելի այն իրադարձությունները, որոնք կյանքը բաժին է հանում (հաշմանդամություն, երկարատև հիվանդություն, անժամանակ մահ), ինչպես նաև միջավայրային այն գործոնների ազդեցությունը, որոնք ընտանիքի կառավարումից դուրս են (գործազրկություն, պատերազմ, ճգնաժամ և այլն): Բացի նշվածից՝ ընտանիքի համար սթրեսածին գործոններ են նաև նախորդ (ծնողական) ընտանիքից եկած, մանկության տարիներին, անցյալում տեղի ունեցած անհաջողություններն ու տրավմաները, հարաբերությունների անարդյունավետ մոդելները, որոնք անցնում են նոր ընտանիք:

Ընտանեկան խնդիրների պատճառ կարող է դառնալ զարգացման նոր փուլին անցնելու և նոր պայմաններին հարմարվելու անհրաժեշտությունը: Նույնիսկ դրական և երկար սպասված փոփոխությունները, ինչպիսին է, օրինակ, երեխայի ծնունդը, կարող են հանգեցնել սթրեսի: Հանկարծակի, անսպասելի իրադարձությունները, օրինակ՝ վաղահաս մահը, հիվանդությունը, աշխատանքից զրկվելը, կարող են դժվարացնել ընտանիքի զարգացման բնականոն ընթացքը՝ անցումը հաջորդ փուլին:

Ընտանիքում փոփոխությունները կարող են լինել «նորմալ» և «անհնորմալ»: «Նորմալ» փոփոխությունները այն ձևափոխումներն են, որոնք համապատասխանում են ընտանիքի սպասումներին, իսկ «անհնորմալները», հակառակը, հանկարծակի են, անսպասելի, ինչպես մահը, ինքնասպանությունը, հիվանդությունը:

Դ. Լևին առանձնացնում է ընտանեկան փոփոխությունների հետևյալ տեսակները[22]՝

- ընտանիքից դուրս մնալը (անդամների կորուստը տարբեր պատճառներով),
- ընտանիքի կազմի համալրումը (երեխայի ծնունդը, որդեգրումը, բանակից կամ այլ երկրից վերադառնալը),
- սոցիալական ազդեցությունները (տնտեսական ճգնաժամ, երկրաշարժ),
- կենսաբանական փոփոխությունները (սեռահասունության, կլիմաքսի շրջան),
- կենսակերպի փոփոխությունը (տեղափոխություն, աշխատանքի կորուստ),
- բռնությունը (ծեծ, բռնաբարություն, կողոպուտ):

Ընտանիքի համար սթրեսային են նաև կոնֆլիկտները: Չկա այնպիսի ընտանիք, որտեղ ժամանակ առ ժամանակ չառաջանան վեճեր, տարաձայնություններ: Դրանք կարող են նպաստել փոխըմբռնման բարելավմանը, խնդրի լուծման լավագույն տարբերակի մշակմանը:

Ընտանեկան կոնֆլիկտները կարելի է դասակարգել այսպես՝ ամուսնական, ծնող-երեխա (ինչպես նաև ծնողների և նրանց ծնողների միջև), պապ-թոռ կամ տատ-թոռ:

Բոլոր անբարենպաստ ընտանիքները դասակարգվում են երեք տեսակի՝ ճգնաժամային, կոնֆլիկտային և պրոբլեմային:

Ճգնաժամային ընտանիքում ամուսինների միջև հակասությունները սուր բնույթ ունեն և տարածվում են ընտանեկան կենսագործունեության բոլոր ոլորտների վրա. նրանք թշնամական դիրք են զբաղեցնում և չեն զիջում միմյանց:

---

22 Մանրամասն տե՛ս Прохорова О.Г., Основы психологии семьи и семейного консультирования: Учебно-методическое пособие по курсу, Под общей редакцией Торохтий В.С. – Москва, 2005, էջ 90:

Կոնֆլիկտային ընտանիքում կան ոլորտներ, որտեղ ամուսինների շահերը բախվում են՝ հանգեցնելով խիստ բացասական հոգեվիճակների:

Պրոբլեմային ընտանիքի անդամները բախվում են կենսական մեծ դժվարությունների, ինչպիսիք են ապրելու վայրի բացակայությունը, ամուսիններից մեկի ծանր հիվանդությունը և այլն, որոնք կարող են վտանգել ընտանիքի կայունությունը: Օբյեկտիվ դժվարությունները, սակայն, կարող են ազդել ընտանեկան կյանքի վրա նրա անդամների սուբյեկտիվ գնահատականի միջոցով:

Ընտանիքի գործառույթների ձախողման առավել տարածված տեսակը ընտանիքում երեխայի դեպրիվացիան է՝ զրկումը: Դա երեխայի՝ այս կամ այն աստիճանի զրկված լինելն է լիարժեք հուզական, սոցիալական ազդեցություններից: Ընդհանուր առմամբ սա այն երևույթն է, երբ երեխան հնարավորություններ և անհրաժեշտ պայմաններ չունի՝ յուրացնելու իրեն պիտանի սոցիալական դերերը, ձեռք բերելու այն որակները, որոնք հարկավոր են սոցիալական իրականությունը համարժեք ընդունելու, գնահատելու և որոշակի իրավիճակում գիտակից որոշումներ կայացնելու, ինչպես նաև սեփական գործողությունները վերահսկելու համար:

ԽՀՄ-ն իր գործունեության ընթացքում առանցքային խնդիրների շարքին պետք է դասի երեխայի՝ իր ծնողների հետ կանոնավոր փոխհարաբերություններ ունենալու իրավունքի ապահովումը՝ հաշվի առնելով, որ ՀՀ ընտանեկան օրենսդրությամբ սահմանվում է, որ երեխան ունի ազգականների հետ շփվելու իրավունք: Ծնողների ամուսնության դադարեցումը, դրա անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն սահմանափակում երեխայի իրավունքները:

Ծնողներից առանձին (այդ թվում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք ունի՝ բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին:

ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Երեխային առնչվող ցանկացած գործողության ժամանակ առաջնային է երեխայի լավագույն շահը. յուրաքանչյուր առանձին դեպքում այն պետք է սահմանվի՝ հաշվի առնելով նրա կարգավիճակը և ընթացիկ դրությունը:

Երեխայի կարծիքը լսելու տեսանկյունից կարևորվում են նրա կարգավիճակի առանձնահատկությունները, որոնք բնութագրվում են հետևյալ հատկանիշներով՝

- կախվածություն մեծահասակներից,
- կայացման գործընթացում եղող, անկայուն «ես»,
- հասունության համապատասխանությունը տարիքային զարգացման առանձնահատկություններին,
- տարբեր տարիքային փուլերում խնդիրների հաղթահարման մեխանիզմների տարբերություններ,
- շրջապատի ազդեցության առանձնահատկություններ (երեխաները չափազանց զգայուն են ազդեցության նկատմամբ),
- վարքի մոտիվացիայի խնդիր,
- երեխայի իրավական կարգավիճակը, որը հաճախ ընկալվում է որպես ձայնազուրկ վիճակ:

Երեխաները չափահասների համեմատ ավելի քիչ հնարավորություն ունեն իրենց լավագույն շահը գիտակցված, համակողմանիորեն հասկանալու, արտահայտելու և հիմնավորելու, հետևաբար դրանցից լավագույնս պետք է տեղյակ լինեն նրանց վրա ազդող որոշումների կայացման մեջ ներգրավված անձինք:

Չնայած այն հանգամանքին, որ թե՛ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և թե՛ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է երեխաների արտահայտվելու իրավունքը՝ երեխաները շատ հաճախ զգում են, որ չափահասները ո՛չ լսում և ո՛չ էլ հաշվի են առնում իրենց տեսակետները: Երեխաները զուտ մեծահասակների կողմից կայացվող որոշումների օբյեկտներ չեն, այլ ակտիվ, հավասար քաղաքացիներ և սոցիալական դերակատարներ, ինչը ենթադրում է, որ պետք է գնահատվեն որպես իրենց իրավունքներն ունեցող մարդիկ և ոչ պարզապես ծնողների կցորդներ:

Այն երեխաները, որոնք կարող են ձևավորել իրենց կարծիքը, իրավունք ունեն մասնակցելու և մասնակցության վերաբերյալ որոշում կայացնելու, միջամտելու իրենց առնչվող դատական և վարչական բոլոր գործընթացներին, ինչպես նաև այդ ընթացքում ազատորեն արտահայտելու իրենց տեսակետը: Պատշաճ կշիռ պետք է տրվի երեխաների կարծիքին՝ նրանց տարիքին և հասունությանը համապատասխան: Երեխայի մասնակցությունը իր վերաբերյալ կայացվող որոշումներին կարող է իրականացվել ինչպես ուղղակիորեն, այնպես էլ ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:

Անհրաժեշտության դեպքում դատարանը կամ այլ պաշտոնատար անձ կարող է ներգրավել հոգեբանի կամ այլ մասնագետի՝ երեխայի կարծիքն ու կարիքները ավելի լավ ըմբռնելու, ինչպես նաև երեխայի համար վարույթի հասկանալի ու մատչելի ընթացքն ապահովելու համար:

Նախքան մասնակցությունը երեխաներին պետք է տրամադրված լինեն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Նրանք նաև մասնակցելու շարժառիթ պետք է ունենան: Երեխայի մասնակցության բոլոր կողմերի և բաղադրիչների՝ նպատակների, ընթացակարգի կարևորության վերաբերյալ ցանկացած հարց պետք է բացատրվի նրանց համար ընկալելի, մատչելի լեզվով և եղանակով: Ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել այն դեպքում, երբ դրանք հակասում են նրանց արտահայտած կարծիքին կամ ցանկություններին:

Տեղեկացված լինելը կարևոր նախադրյալ է, որպեսզի երեխաները գիտակցեն իրենց մասնակցության վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու կարողությունը: Մասնավորապես երեխաները պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների, վարույթների (ներառյալ դրանցում իրենց տեղի և դերի), իրենց համար դրանց հնարավոր արդյունքների և հետևանքների, ուղղակի կամ ներկայացուցչի միջոցով հաղորդակցության տարբերակների, օգնություն և աջակցություն տրամադրող ծառայությունների առկայության և որոշումների վերանայման հնարավորության մասին: Բացի սրանից՝ նրանք պետք է իմանան, որ իրենց մասնակցությամբ ցանկացած գործընթացի ժամանակ կարող են օգնություն խնդրել՝ տհաճ կամ անհանգստություն առաջացնող իրավիճակներում տեղեկացնելով իրենց ինքնազգացողության, ինչպես նաև գործընթացը դադարեցնելու ցանկության մասին: Կարելի է պայմանավորվել, թե ինչպես, ինչ բառերի կամ գուցե նշանի միջոցով երեխան կարող է հայտնել իր համար անտանելի իրավիճակի մասին. դա հանդես կգա որպես դադարեցման ազդանշան և հնարավորություն կտա խուսափելու երեխային հոգեբանական վնաս պատճառելուց:

Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ մասնակցելը և լսված լինելը պարտականություն չեն, այլ իրավունք, և չեն կարող իրականացվել պարտադրանքի, ստիպելու միջոցով: Իրենց կարծիքը ձևավորելու ունակ երեխաները ազատ են վարույթին իրենց մասնակցության վերաբերյալ որոշում կայացնելու:

Երեխաների, անչափահասների հետ աշխատանքի ժամանակ շատ կարևոր է այն անցկացնել նրանց համար հարմարավետ պայմաններում՝ հնարավորինս բացառելով սթրեսածին գործոնների ազդեցությունը:

▸ Երեխաների մասնակցությունը խրախուսող վերաբերմունք և միջավայր

Երեխայի հետ աշխատանքում անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

- երեխային վերաբերվել որպես ուրույն բնութագրով, կյանքի փորձով ինքնավար անձի,
- մոտեցումները կառուցել նրա տարիքային զարգացման, կյանքի պայմանների և միջավայրի ազդեցության, պատկերացումների և կյանքի փորձի համատեքստում,
- երեխայի խնդիրների, հոգեվիճակի մանրակրկիտ ուսումնասիրություն,
- ընտանեկան և սոցիալական միջավայրի ուսումնասիրություն,
- բոլոր խնդիրների, դրսևորումների, օրինաչափությունների գնահատում երեխայի անհատականության համատեքստում,
- խոսքի և հաղորդակցման ոճի համահունչություն երեխայի զարգացման հնարավորություններին,
- վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման կարևորում,
- ապրումակցման (էմպատիայի), երեխայի հոգեվիճակը հասկանալու և անմիջական արձագանքի ունակության կարևորում,
- նորի նկատմամբ հետաքրքրվածություն, ընկալունակություն, համբերատարություն, հավասարակշռվածություն, զուսպ և հարգալից մոտեցում,
- ուշադիր լինել և զերծ մնալ սեփական հույզերը, պատկերացումները և պահանջները երեխային վերագրելուց և նրա վրա ազդեցություն գործելուց:

Միջավայրի, ինչպես նաև վարքագծի տարրերը կարող են խրախուսել երեխաների մասնակցությունը: Պետք է ստեղծել բարյացակամ, հարմարավետ, խրախուսող միջավայր, որպեսզի նրանք վստահ լինեն, որ գործընթացների համար պատասխանատու մեծահասակները ցանկանում են լսել իրենց կարծիքը, լուրջ են վերաբերվում դրան, և այն իսկապես հաշվի է առնվելու: Իրականում երեխաների մեջ շատ կասկածներ կարող են առաջանալ, քանի որ, որպես կանոն, բազմիցս համոզվել են, որ իրենց կարծիքը հաշվի չեն առնում: Հնարավոր է, որ սա առաջին տարբերվող փորձը լինի նրանց համար: Երեխաները պետք է զգան, որ իրենք անվտանգ միջավայրում են, և հարգում են իրենց:

Տարածքը, որտեղ երեխան գտնվելու է, պետք է համապատասխանի նրա տարիքային առանձնահատկություններին և կարիքներին, սենյակները և սպասասրահները հարմարեցված լինեն բարենպաստ միջավայրի ձևավորման պահանջներին: Նախադպրոցական և կրտսեր դպրոցական երեխաների համար հատկապես կարևոր է խաղային պայմանների ստեղծումը: Հաշվի առնելով նրանց տարիքն ու հասունությունը՝ հարցերը և այլ միջամտությունները պետք է լինեն հստակ, պարզ, լակոնիկ, առանց տերմինների, բարդ բառերի, երեխայի համար դյուրըմբռնելի լեզվով և այնպիսի տեմպով, որին նա կարող է հետևել: Երեխային անհրաժեշտ է դիմել անունով, զրուցելիս աչքերը գտնվեն երեխայի աչքերի մակարդակին, որպեսզի ճնշում չգործադրվի նրա նկատմամբ: Ազատ և անկաշկանդ մթնոլորտ ստեղծելու համար երեխային պետք է լսել ուշադրությամբ և հետաքրքրվածությամբ, նույնիսկ եթե նա հարցազրույցի ընթացքում շեղվում է դրա բուն էությունից:

Պետք է հիշել, որ երեխային լսելը բարդ գործընթաց է. զրույցի ժամանակ նա կարող է ենթարկվել տրավմատիկ ազդեցությունների: Նախադպրոցական տարիքի երեխաները կարող են պատրաստ չլինել զրուցելու կամ առանձին տարածքում գտնվելու անծանոթ մեծահասակի հետ առանց խնամողի, վստահելի անձի ներկայության: Անհրաժեշտության դեպքում պետք է ապահովել նման մարդու ներկայությունը կամ մի քանի հանդիպում կազմակերպել, ստեղծել հուսալիություն ներշնչող և ապահով միջավայր և երեխայի համաձայնությամբ առանձին զրուցել:

Բացի տարածական կազմակերպումից՝ էական են նաև ժամանակային բնութագրերը՝ տևողությունը, անհրաժեշտության դեպքում՝ ընդմիջումները, դադարները: Երեխաների և անչափահասների մասնակցությամբ գործընթացները անհրաժեշտ է նախօրոք պլանավորել և նախապատրաստել:

Մասնավորապես անհրաժեշտ է հաշվի առնել.

1. երեխայի տարիքային և սեռային առանձնահատկությունները,

2. երեխայի անձի իմացական, հուզական, կամային ոլորտների զարգացման առանձնահատկությունները,

3. սոցիալական կարգավիճակը և խոցելիությունը,

4. անհատականությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունները՝ կազմվում է նախնական հարցերի պլանը, որոշվում են հարցադրումների ձևը, քանակը, բովանդակությունը, ինչպես նաև

արտաքին պայմանները, սենյակի մեկուսացվածությունը, լուսավորությունը, այլ անձանց մասնակցությունը և այլն:

Նախադպրոցական տարիքի երեխան չի կարող ուշադրությունը կամածին կերպով երկար կենտրոնացնել մի բանի վրա և շուտ հոգնում է, այդ իսկ պատճառով ցանկալի չէ նրա մասնակցությամբ երկարատև զբույցների կազմակերպումը կամ նրան սպասեցնելը: Նույն կերպ չեն խրախուսվում երեխայի հաճախակի, պարբերական ներկայությունը դատարանի դահլիճում կամ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերի սենյակում բազմակի հանդիպումներն ու զբույցները: Շուտ չհոգնելու համար այդ ընթացքում երեխան կարող է շարժվել, նկարել կամ իրեն հաճելի ու հանգստացնող այլ գործողություններ կատարել, քանի որ նրա խաղային և շարժվելու պահանջմունքը կարևոր է:

Երեխայի մասնակցությամբ կամ նրա վերաբերյալ որոշումների կայացման գործընթացների ձգձգումները կարող են մեծապես վնասել երեխայի լավագույն շահը: Դրանք ավելացնում են նրա ճակատագրի վերաբերյալ անորոշությունը, իսկ երբեմն էլ կարող են խոչընդոտել արագ միջամտությունը, որը էական կարող է լինել նրա վիճակի վատթարացման տեսանկյունից: Ավելին՝ ընտանեկան հարցերում դրանք կարող են անբարենպաստ հետևանքներ ունենալ երեխաների և ծնողների հարաբերությունների համար:

Երեխաների կարծիքին իրենց տարիքին և հասունությանը համապատասխան կարևորություն տալու սկզբունքին հետևելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել տարիք և հասունություն երևույթների սահմաններն ու բնութագիրը: Այս հասկացությունների համատեղումը վկայում է, որ գնահատականը չի կարող տրվել սոսկ տարիքի հիման վրա, իսկ հասունությունը կարող է գնահատվել միայն ըստ անհատական դեպքի: Բանն այն է, որ պետք է գնահատել, թե երեխան որքանով կարող է ձևավորել և արտահայտել իր կարծիքը, ապա, ըստ գնահատման արդյունքների, որոշել, թե ինչ կշիռ պետք է տրվի դրան:

▸ Զարգացում

Զարգացումը աճող օրգանիզմի անցումն է ավելի բարձր աստիճանի. դա ապահովում է ինչպես ուսուցումը, այնպես էլ հասունացումը: Այն երեխայի անձի ֆիզիկական և հոգեբանական կողմերի քանակական և որակական փոփոխությունների օբյեկտիվ գործընթաց է:

Զարգացման կարևոր բաղադրիչներից է *տարիքը*. առանձնացվում են *ֆիզիկական և հոգեբանական տարիք* հասկացությունները: Առաջինը բնութագրում են տարիներով, ամիսներով, օրերով, իսկ երկրորդը՝ հոգեբանական զարգացման մակարդակով: Օրինակ՝ 5 տարեկան երեխայի հոգեկան զարգացումը կարող է համապատասխանել 6 կամ 7 տարեկանին, իսկ մտավոր հետամնացության դեպքում դիտվում է ֆիզիկական և հոգեբանական տարիքների հակադարձ համեմատական պատկերը:

Զարգացումը անհամաչափ է ընթանում, այն կարող է դանդաղել և արագանալ: Սա որակապես տարբեր փուլերի առանձնացման հիմք է: Հոգեբանական զարգացումը ինքնուրույն գործընթաց է, որն ունի իր ուրույն օրինաչափությունները: Այն բնածին, սոցիալական և դաստիարակչական գործոնների փոխազդեցության արդյունք է:

Մի տարիքից մյուսին անցումը կարող է տեղի ունենալ երեխայի և շրջապատի համար աննկատ: Այս անցումը պայմանավորված է երեխայի ֆիզիկական և հոգեբանական հատկանիշների փոփոխություններով, այսինքն՝ նրա օրգանիզմի և վարքի վերակառուցումներով: Վերակառուցումն արտաքինից ավելի նկատելի է, երբ ֆիզիկական և հոգեբանական տարիքային փուլերի անցումը համընկնում է: Անցումային շրջաններում շատ երեխաներ դառնում են դյուրագրգիռ, ագրեսիվ, ինքնամփոփ՝ իրենց վարքով առաջացնելով մեծերի անհանգստությունը:

Ճգնաժամերը վկայում են, որ երեխայի օրգանիզմում և հոգեկանում տեղի են ունենում զգալի փոփոխություններ, զարգացման գործընթացում ծագել են խնդիրներ, որոնց լուծումը կդառնա առաջընթաց ֆայլ դեպի երեխայի զարգացման ավելի բարձր մակարդակը, տարիքային հաջորդ փուլը: Ճգնաժամային փուլերը բնութագրվում են տարիքային զարգացման տվյալ փուլի ընթացքում երեխայի ձեռք բերած նոր հնարավորությունների և նախորդ փուլում շրջապատի հետ ձևավորած փոխհարաբերությունների անհամապատասխանությամբ:

Տարբերում են *մեծ և փոքր ճգնաժամեր*: Առաջին տեսակը ներառում է նորածնությունը, երեք տարեկանի, դեռահասության ճգնաժամերը, երկրորդը՝ մեկ, յոթ և տասնյոթ տարեկանների ճգնաժամերը: Մեծ ճգնաժամերը պայմանավորված են երեխայի և հասարակության հարաբերությունների վերակառուցմամբ, իսկ փոքրերը՝ ինքնուրույնության աճով, նոր հմտությունների ձեռքբերմամբ. դրանք ավելի հանգիստ են ընթանում:

Զարգացման շարժիչ ուժը երեխայի պահանջմունքները, շարժառիթները, ինչպես նաև գործունեության և հաղորդակցման արտաքին ազդակները, ուսուցման և դաստիարակության նպատակներն ու խնդիրներն են: Այս տեսանկյունից զարգացման լավագույն պայմանները ստեղծվում են այն ժամանակ, երբ ուսուցման և դաստիարակության նպատակները համապատասխանում են երեխայի ներքին մոտիվացիային և նույնիսկ ուժեղացնում այն: Որքան ավելի բարենպաստ են երեխայի զարգացման պայմանները, այնքան ավելի մեծ արդյունքների նա կարող է հասնել նույն ժամանակահատվածում:

Զարգացման սոցիալական իրավիճակը արտացոլում է երեխայի և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների՝ յուրաքանչյուր տարիքի ուրույն բնութագիրը:

Առաջատար գործունեության շնորհիվ տեղի են ունենում երեխայի անձնային առանձնահատկությունների և հոգեկան գործընթացների կարևոր փոփոխությունները,

ձևավորվում են մեծահասակների և հասակակիցների հետ բազային հարաբերությունները: Այս գործունեության յուրացման արդյունքում առաջանում են տվյալ տարիքային փուլի հիմնական նորագոյացությունները, օրինակ՝ խոսքը: Հոգեկան նորագոյացությունները բնորոշում են երեխայի գիտակցական անձի վերակառուցումները, որոնք տեղի են ունենում տարիքային զարգացման արդյունքում:

Հոգեկան զարգացման յուրաքանչյուր փուլում առաջատար գործունեությունն ունի վճռորոշ նշանակություն: Միևնույն ժամանակ գործունեության մյուս տեսակներն անհետանում են: Դրանք, իհարկե, մասամբ պահպանվում են, բայց զուգահեռաբար չեն համարվում գլխավոր հոգեկան զարգացման համար:

Զարգացման տեսակետից կարելի է առանձնացնել հետևյալ տարիքային փուլերը՝ *ճգնաժամային, կայուն, զգայուն* (sensitive): Ճգնաժամերը միշտ պայմանավորված են տարիքային, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական փոփոխություններով, որոնք առաջին անգամ դրսևորվում են որոշակի տարիքային փուլում և բնորոշում երեխայի գիտակցությունը, շրջապատի հանդեպ վերաբերմունքը և զարգացման ընթացքը: Ճգնաժամային փուլերը անցումային են՝ մի կայուն փուլից դեպի մյուսը: Երեխաների մեջ այդ փուլում նկատվում են կամակորություն, առաջադիմության և աշխատասիրության անկում, մեծանում է շրջապատի հետ կոնֆլիկտների քանակը: Երեխայի ներքին կյանքը այդ ժամանակ գերլցված է տառապալից ապրումներով: Կայուն փուլերի համեմատ սթրեսային իրադարձությունները և կտրուկ փոփոխությունները այս շրջանում ավելի վտանգավոր են երեխայի համար:

Յուրաքանչյուր փուլ պայմանավորված է ինչպես ներքին՝ ֆիզիոլոգիական, հոգեբանական, այնպես էլ արտաքին՝ սոցիալական գործոններով: Սակայն, ըստ տարիքի, այս երկու գործոնների կարևորությունը տարբեր է լինում (օրինակ՝ 3 տարեկանի ճգնաժամի համար կարևոր են ներքին գործոնները, 7 տարեկանի ճգնաժամի համար՝ արտաքինները):

Կայուն փուլերը ավելի երկարատև են: Ի տարբերություն ճգնաժամային փուլերի՝ այս ընթացքում կուտակվում են ոչ թե որակական, այլ քանակական փոփոխություններ: Դրանք կուտակվում են դանդաղ և աննկատ:

Զգայուն (sensitive) փուլերը ստաբիլ տարիքային փուլերի բաղկացուցիչն են: Այս ընթացքում առավելագույնս զարգանում է այս կամ այն հոգեկան գործառույթը՝ տվյալ տարիքին համապատասխան: Օրինակ՝ վաղ տարիքը զերզգայուն է խոսքի զարգացման համար, մեխանիկական հիշողությունը լավ է զարգանում 4-5 տարեկանում, 12-13 տարեկանում որպես հոգեբանական գործառույթ զարգանում է մտածողությունը մտապատկերների, հասկացությունների միջոցով, 6-9 տարեկանը զերզգայուն փուլ է արժեհամակարգի նորմերի յուրացման համար:

Հոգեբանական հասունություն հասկացությունը արտացոլում է անձի զարգացման տարբեր մակարդակների ձեռքբերումները: Հասունության մակարդակային և կառուցվածքային բնութագրերը

առանձնահատուկ են յուրաքանչյուր տարիքային փուլում: Հասունությունը սոցիալ-հոգեբանական երևույթ է, որ պայմանավորված է ինչպես անհատականության, անձնային ռեսուրսների դրսևորմամբ, այնպես էլ շրջապատի հետ փոխհարաբերություններով: Այն մեծապես առնչվում է սեփական գիտելիքների և կարողությունների արդյունավետ օգտագործմանը, որը տարիքային զարգացման համատեքստում կապվում է յուրաքանչյուր փուլի ձեռքբերումների, նորագոյացությունների, տարիքին համապատասխանող դրսևորումների հետ: Երեխայի կյանքում, ընտանիքում, շրջապատում կատարվող փոփոխությունները պետք է համապատասխանեն նրա աճի և զարգացման ներքին օրինաչափություններին և դրանց հետ փոխկապակցված կարիքների բավարարմանը:

Երեխաների հոգեկանի զարգացման տարիքային առանձնահատկությունները ֆիզիկական կամ հոգեբանական թերություններ չեն, ուստի նրանց արտահայտած կարծիքը կարող է համարվել հավաստի և ընդունելի: Առաջինը պետք է ուշադրություն դարձնել նրան, որ նախադպրոցական տարիքի երեխաների իրականության և երևակայության սահմանները դեռ լիարժեք ձևավորված չեն: Ժամանակակից հոգեբանների կարծիքով, սակայն, այդ տարիքային խմբի երեխաների վկայությունը կարող ենք արժանահավատ համարել, եթե դրանք ստացվել են ճիշտ կազմակերպված ուսումնասիրության ժամանակ:

Ամուսնալուծության գործընթացը հոգեբանական առումով չունի հստակ սահմանազատված սկիզբ և վերջ, այն սթրեսային է անգամ մեծահասակների համար, առավել ևս երեխաների, որոնք, իրենց կամքից անկախ, հայտնվում են իրադարձությունների կիզակետում: Հուզական առումով այն երկարատև է, հատկապես որ սկսում է շատ ավելի վաղ, քան իրավական գործընթացը, և կարող է չավարտվել դատական որոշումներից հետո: Այս հանգամանքն ավելի է խորացնում սթրեսի աստիճանը: Ավելին՝ այն կարող է դառնալ երկարատև, քրոնիկ սթրեսի պատճառ: Ծնողների ինքնագիտակցության, իրազեկվածության, ինքնակառավարման մակարդակից և երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններով պայմանավորված՝ յուրաքանչյուր անչափահաս ամուսնալուծության ընթացքը ապրում է յուրովի: Այս ընթացքում երեխաները ունենում են տարաբնույթ բացասական հույզեր և հուզավիճակներ: Երեխայի հուզական արձագանքի արտահայտվածությունը, ուժգնությունը, տևողությունը, բովանդակությունը պայմանավորված են երեխայի տարիքով և զարգացման աստիճանով:

Երեխան վշտի և կորստի զգացում է ունենում, որն ուղեկցվում է վշտի կամ սգալու գործընթացին բնորոշ համապատասխան ապրումներով և փուլերով: Նախ կարող է առաջանալ ժխտման զգացում, երբ երեխան ոչ մի կերպ չի ցանկանում անգամ լսել իրողության մասին և չի ընդունում այն: Ապա առաջ են գալիս բարկության, անարդարության և խաբվածության զգացումները: Այս հոգեվիճակին հաջորդում են ճնշվածության և տխրության ապրումները: Երեխաները սովորաբար ունենում են նաև մեղքի զգացում. իրենց են համարում ծնողների վատ վիճակի և ընտանիքի քայքայման պատճառը: Սա ուղեկցվում է առուտոագրեսիայով, ինքնապատժման գործողություններով, ինչպես նաև ընտանիքը «փրկելու» առաքելության

ստանձնմամբ: Երբ երեխային դա չի հաջողվում, նա իրեն է՛լ ավելի վատ և մեղավոր է զգում: Առաջանում է վախ, որ ծնողներն իրեն չեն սիրում և հեռանում են ոչ թե իրարից, այլ լքում են իրեն: Ամուսնալուծության պարագայում երեխաները կարող են դրսևորել հուզական և վարքային բազում խնդիրներ:

Երեխայի հակազդումներն ամուսնալուծությանը կարող են տարբերվել՝ պայմանավորված տարիքով.

- 0-2 տարեկանում երեխաները դեռևս չեն գիտակցում՝ ինչ է ամուսնալուծությունը: Նրանք զգայուն են ծնողների հոգեվիճակի և կենսակերպի փոփոխության հանդեպ, ինչն էլ նրանց համար կարող է սթրեսածին լինել:

- 2-5 տարեկանում լիարժեք չեն հասկանում կատարվածի իմաստը, կարելի է ասել՝ մեկնաբանում են յուրովի, զգում են ճնշվածություն, բարկություն, տագնապ, մեղավորություն՝ մտածելով, որ իրենց վարքով ծնողներին դրդել են բաժանության: Կարող է գրանցվել հոգեբանական նահանջ, վերադարձ զարգացման ավելի վաղ փուլին:

- 6-8 տարեկան երեխան գիտակցում է կատարվածը, նույնպես ունենում է բարկության և ագրեսիվության դրսևորումներ, տագնապ, մեղավորություն, փորձում է կառավարել իրեն և հոգ տանել ծնողների մասին: Սա նաև համընկնում է երեխայի զարգացման բնականոն վախերի շրջանին և շատ ավելի է ընդգծում դրանք:

- 9-13 տարեկանում երեխաները կարողանում են դիտարկել իրավիճակը տարբեր կողմերից, վերլուծել այն, դատողություններ անել ծնողների մեղավորության վերաբերյալ, կարող են մանիպուլյացիայի ենթարկել նրանց, կարիք ունեն խոսելու սեփական զգացողություններից, հատկապես բարկությունից:

Երեխաների մեջ սթրեսի որոշ ազդեցություններ շատ ակնառու են և կարող են դրսևորվել մղձավանջների, գիշերամիզության, մեծ ագրեսիվության, ծայրահեղ զրգռվածության, ընտանիքից և ընկերներից մեկուսացման, քնի և սնվելու ռեժիմի խախտման միջոցով: Հետևանքները, սակայն, կարող են շատ արտահայտված չլինել, կամ էլ երեխան իրեն պահում է այնպես, կարծես ոչինչ չի պատահել: Նա անտարբեր է թվում, չի խոսում խնդրահարույց թեմայի մասին: Երեխաները կարող են դառնալ ավելի լռակյաց, մեկուսացած, օտարացած, հուզականորեն չներգրավված: Պետք է նկատի ունենալ, որ երկարատև սթրեսային վիճակը, հոգետրավման կարող են ազդել երեխայի մտավոր, հոգեկան զարգացման վրա, առաջացնել բնավորության փոփոխություններ, սոցիալական օտարացման պատճառ դառնալ:

ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄ

ԽՀՄ-ների գործունեության մեջ հաճախ են հանդիպում դեպքեր, երբ նրանք պետք է եզրակացություն տրամադրեն երեխաների խնամքի և տեսակցության այնպիսի վեճերի կապակցությամբ, որոնք դատարանների վարույթում են: Սակայն որոշ իրավիճակներում այդ վեճերը կարող են ավելի արագ լուծվել արտադատական կարգով, եթե կողմերը փոխադարձ հաշտության ցանկություն ունենան:

Նման իրավիճակներում հնարավոր է լինում նաև նվազագույն ջանքերով հասնել երեխայի խնամքի և տեսակցության վերաբերյալ տարաձայնությունների լուծմանը: Դրա համար շատ կարևոր է հասկանալ ծնողների միջև գոյություն ունեցող վեճի շարժառիթը և, ըստ այդմ, օգնել ընտանիքին՝ կարգավորելու այն:

ԽՀՀ անդամները պետք է գիտակցեն, որ ցանկացած վեճ այս իրավահարաբերություններում պետք է լուծվի հօգուտ երեխայի, որին առնչվող յուրաքանչյուր գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Այս ամենի երաշխավորումը պետք է ուղղված լինի երեխայի իրավունքների արդյունավետ իրացմանը, ընտանիք վերադառնալուն կամ ընտանիքի հետ ապրելուն, ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելուն, որը կարևոր է երեխայի զարգացման համար: Առաջնային պետք է լինի երեխայի և ծնողների շահերի փոխհավասարակշռման և հաշտեցման քննարկումը: Միևնույն ժամանակ այն չպետք է վերածվի հաշտեցման պարտադրման:

Հաճախ ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարմանը և հետևապես վեճերի ավելի խաղաղ, փոխհամաձայնության վրա հիմնված լուծմանը կարող է նպաստել համապատասխան մասնագետների՝ հաշտարարի, հոգեբանի ներգրավումը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ԽՀՄ-ները իրենց գործառույթների շրջանակում կարող են բախվել նաև ընտանեկան բռնության դեպքերի և, որպես պատասխանատու մարմին, պետք է արձագանքեն դրանց:

Նրանք ունեն ընտանիքում բռնության կանխարգելումը և բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրականացնելու պարտավորություններ իրենց գործառույթների շրջանակներում նախատեսված չափով:

Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Հաճախ ենք լսում, թե ինչպես են ծնողներն ասում, որ իրենք են որոշում ինչպես դաստիարակել իրենց երեխաներին և վարվել նրանց հետ, ոչ ոք չի կարող միջամտել իրենց ընտանեկան կյանքին: Մինչդեռ պետք է գիտակցել, որ ԽՀՄ-ներն ունեն երեխաների մասին հոգ տանելու պարտականություն. դա նրանց առաքելությունն է:

Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի, հետևաբար նման իրավիճակի հանդիպելիս պետք է գործուն միջոցներ ձեռնարկել: Դրան են ուղղված ԽՀՄ-ների մշտադիտարկումները, որոնք պետք է կատարվեն ըստ ԽՀՄ գործառույթները կարգավորող Կառավարության 631-Ն որոշման:

Պետությունը համապատասխան մարմինների միջոցով իրականացնում է երեխայի պաշտպանությունը որևէ տեսակի բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավվելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրությանը կամ առևտրին մասնակցելուց, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից, իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից:

2017 թվականին ՀՀ-ն ընդունեց ընտանեկան բռնության պաշտպանությանն ուղղված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը[23], որը 2018 թվականից ուժի մեջ մտավ:

Հաճախ ընտանիքներում տեղի ունեցող բռնությունը ընտանիքի անդամը չի բարձրաձայնում: Պատճառներից մեկը կարող է լինել այն, որ, ըստ տվյալ անձի իրավագիտակցության, բռնությունը պետք է լինի ֆիզիկական: Այս տեսանկյունից կարևոր է, որ ԽՀՄ-ները իրազեկեն ընտանիքներին բռնության տարբեր տեսակների և դրսևորումների մասին՝ մատնանշելով, որ պարտադիր չէ՝ այն լինի ֆիզիկական: Բռնությունը կարող է լինել հոգեբանական, տնտեսական, ինչպես նաև երեխային անտեսելու միջոցով: Կարևոր է նաև ծնողների, երեխայի խնամքը հավակնող անձանց տեղեկացվածությունը նշված հարցին, որպեսզի նման իրավիճակներում բռնության զոհ դարձած անձը կամ երեխայի ծնողը ահազանգի համապատասխան մարմիններին:

Այսպես, ընտանիքում բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

---

23 Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2017.12.30/83(1358).1 Հոդ. 1347.1, https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում սահմանված են բռնության բոլոր տեսակների հասկացությունները[24], որոնք հայտնաբերելու դեպքում պետք է տալ համապատասխան արձագանք:

Ֆիզիկական բռնությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողություններն են, դիտավորությամբ առողջությանը վնաս հասցնելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը:

Սեռական բռնությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն են:

Հոգեբանական բռնությունը դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելն է, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը:

Տնտեսական բռնությունը անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելն է, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

Անտեսումը ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կացությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կացությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելն է, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Երեխաներն ու դեռահասները հատկապես խոցելի են ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնության տեսանկյունից: Բռնության դեպքեր են արձանագրվում ինչպես ընտանիքներում,

24 Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2017.12.30/83(1358).1 Հոդ. 1347.1, https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

այնպես էլ երեխայի սոցիալական միջավայրում՝ դպրոցում, համայնքում, խնամք իրականացնող հաստատություններում:

Հաճախ են լինում դեպքեր, երբ երեխան ընտանիքում հոգեբանական բռնության զոհ է դառնում, բայց այն այդպես էլ չի բացահայտվում կամ ուղղակի ճիշտ չի ընկալվում: ԽՀՄ-ները պետք է ուշադրություն դարձնեն նրան, որ հոգեբանական բռնության դեպքերը շատ հաճախ կրկնվող և ֆողարկված երևույթներ են, հետևաբար դրանք վերհանելու համար այս մարմինները պետք է բավական մեծ աշխատանք տանեն:

Գործնականում հանդիպել են դեպքեր, երբ երեխայի բնակության վայրի և խնամքի շուրջ առաջացած դատական վեճով ԽՀՄ-ները տվել են եզրակացություն հօգուտ երեխայի մոր՝ առաջնորդվելով կարծրատիպային և սովորույթային այն նորմերով, ըստ որոնց՝ երեխային ավելի լավ կարող է խնամել մայրը՝ անկախ հոր բոլոր դրական հատկանիշներից և գույքային դրությունից:

Վեճի լուծման ավարտից հետո, սակայն, պարզվել է, որ երեխայի մայրն ունի ֆողարկված հոգեկան խնդիրներ, երեխային պարբերաբար ենթարկում է հոգեբանական բռնության՝ գիշերները նրան տնից դուրս հանելով, նրա ներկայությամբ ինքնասպանության փորձեր անելով, մանկապարտեզում ընկերների ներկայությամբ վիրավորելով, մութ սենյակում պահելով:

Այս երևույթները հոգեբանական բռնություն են երեխայի նկատմամբ: Առաջին հայացքից դժվար է դրանք միանգամից նկատել, սակայն խնդրահարույց է այն, որ ԽՀՄ-ները բավարար չափով և բազմակողմանի չէին ուսումնասիրել հարցը՝ ուշադրությունը ավելի շատ կենտրոնացնելով վեճի՝ ավանդական ձևով լուծման մեթոդի վրա՝ «երեխային միշտ պետք է խնամի մայրը»:

Երեխայի լավագույն շահերը այս դեպքում նրա կյանքի, գոյատևման և առողջ զարգացման պայմանների ապահովումն են: Սա է առաջնային, և այն կարող է չհամընկնել մոր հետ ապրելուն: Ըստ այդմ՝ ԽՀՄ-ները կարող են շեղվել նախադեպային պրակտիկայից, քանի որ էական է երեխայի լավագույն շահերը ըստ տվյալ իրավիճակի գնահատելը:

Հիշատակված կոնկրետ դեպքում տրված եզրակացության և դրա հիման վրա դատարանի կայացրած որոշման հետևանքով երեխան շուրջ երեք տարի տառապել էր՝ ենթարկվելով հոգեբանական բռնության: Հետագայում հոր համառ պայքարի շնորհիվ հնարավոր եղավ փոխել որոշումը և երեխային «փրկել» այդ իրավիճակից:

Հոգեբանական բռնության դեպքերը հայտնաբերելու համար ԽՀՄ-ները նախ պետք է գիտակցեն դրա բնույթն ու էությունը, որը շարադրված է վերոնշյալ օրենքում: Հասկացության սահմանման

մեջ թվարկված երևույթներից որևէ մեկի առկայության դեպքում արդեն իսկ պետք է փաստել բռնության մասին:

Շատ են լինում նաև տնտեսական բռնության երևույթներ: ԽՀՄ-ների պրակտիկայում կարող են հանդիպել դեպքեր, երբ ընտանիքում ծնողներից մեկը իրենից նյութական կախվածություն ստեղծելու և իշխելու նպատակով զրկում է մյուս ծնողին կացարանից, դեղորայքից, սննդից: Սա արդեն իսկ կարող է իր բացասական ազդեցությունը թողնել բռնության զոհ դարձած ծնողի խնամքի տակ եղած երեխայի վրա:

Քիչ չեն դեպքերը, երբ հայրը լինում է ընտանիքի հիմնական նյութական կարիքներն ապահովողը և, օգտվելով այդ հնարավորությունից, կնոջը շարունակաբար զրկում է ֆինանսական աղբյուրներից, չի ապահովում սննդով և փորձում է նման քայլերի միջոցով ստանձնել երեխայի խնամքը:

Այս դեպքերի նպատակը հիմնականում այն է, որ ծնողը, որի խնամքի տակ են երեխաները, հրաժարվի նրանցից: Նման իրավիճակներում պետք է ուշադրություն դարձնել մյուս ծնողի կողմից երեխային խնամող ծնողին բողոքարկված և դիտավորյալ եղանակով իրենից կախյալ վիճակում հարկադրաբար պահելու, կախվածություն ստեղծելու միտումնավոր գործողություններին, որպեսզի միայն նյութական ապահովության հիմքով երեխային խնամելու իրավունքից չզրկեն ծնողին:

Երբեմն ծնողի՝ երեխային անհրաժեշտ սննդից, կացարանից կամ բժշկական օգնություն տրամադրելուց զրկելը դիտարկվում է որպես թերի դաստիարակության դրսևորում, և ԽՀՄ-ները շատ մակերեսորեն են մոտենում այս երևույթին, մինչդեռ այն բռնության մի տեսակ է՝ անտեսում:

Բռնության վերոնշյալ տեսակներից յուրաքանչյուրի հայտնաբերման դեպքում անմիջապես պետք է տեղեկացնել պատկան մարմիններին:

ԽՀՄ-ները նաև մասնակցում են նշված բնագավառում հանրության իրազեկմանը, ընտանիքում բռնության ենթարկվածներին սոցիալական և նյութական աջակցություն ցուցաբերելուն ուղղված միջոցառումների իրականացմանը:

ԽՀՄ լիազորություններն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում հետևյալն են[25].

1) օրենքով նախատեսված դեպքերում դիմում են դատարան՝ պաշտպանական որոշման համար,

25 Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2017.12.30/83(1358).1 Հոդ. 1347.1, 7-րդ, 8-րդ հոդվածներ, 13-րդ հոդվածի 5-րդ կետ, 14-րդ հոդված, 18-րդ հոդված, https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

ինչպես նաև հաղորդում են ներկայացնում իրավապահ մարմիններին՝ անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց նկատմամբ գործադրվող՝ ընտանիքում բռնության կամ դրա իրական սպառնալիքի մասին.

2) օրենքով և իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով կազմակերպում են ընտանիքում բռնության պատճառով առանց խնամքի մնացած երեխաների և անգործունակ անձանց խնամքը[26]:

Ըստ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 8-րդ հոդվածի՝ եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել նաև ԽՀՄ-ները՝ ի թիվս նրա մերձավոր ազգականների, օրինական ներկայացուցչի: Նույն դրույթի համաձայն՝ պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ երկու անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով: Այդ որոշման կայացման նպատակը ընտանիքում բռնության ենթարկվածի և նրա խնամքի տակ եղած անձանց պաշտպանելը և ընտանիքում բռնության նոր դրսևորումները կանխարգելելն է[27]:

ԽՀՄ-ների պրակտիկայում կարող են հանդիպել դեպքեր, երբ արդեն իսկ ընտանիքի մի անդամի նկատմամբ կիրառվել է պաշտպանական որոշում, և միևնույն ժամանակ ծնողը դիմել է դատարան տեսակցության կամ երեխայի խնամքով զբաղվելու պահանջներով: Որպեսզի ԽՀՄ-ները ճիշտ գնահատեն իրավիճակը, պետք է հասկանան, թե ծնողի նկատմամբ պաշտպանական ինչ որոշում է կայացվել, և արդյոք այն համատեղելի է երեխայի տեսակցության, բնակության վայրը իր մոտ տեղափոխելու ծնողի պահանջների հետ:

Այդ պատճառով ԽՀՄ-ները պետք է հասկանան յուրաքանչյուր պաշտպանական որոշման իմաստը և դրանից բխող սահմանափակումները:

Պաշտպանական որոշմամբ կիրառվող սահմանափակումները հետևյալն են[28].

1) հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը,

---

26 Նույն տեղում, 18-րդ հոդված:

27 Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2017.12.30/83(1358).1 Հոդ. 1347.1, 8-րդ հոդված, https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

28 Մանրամասն տե՛ս նույն տեղում, 8-րդ հոդված, 5-րդ կետ:

2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.

3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.

4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը բռնություն գործադրած անձի տիրապետման տակ եղած զենքն ի պահ հանձնել ոստիկանություն.

5) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա պարտականություն դնել՝ ընտանիքում բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անշափահաս կամ չափահաս անաշխատունակ երեխաների, ինչպես նաև իրենց համատեղ խնամքի տակ եղող անձանց խնամքի ծախսերը՝ ալիմենտային պարտավորությունների համար վճարման ենթակա գումարի չափով.

6) անհրաժեշտության դեպքում արգելել երեխաների հետ տեսակցությունները.

7) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, համակարգչային կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ.

8) ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն՝ անցնելու ռեաբիլիտացիոն (վերականգնողական) ծրագիր:

Պաշտպանական որոշումն ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից կատարվելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը: Հետևաբար եթե ԽՀՄ-ները ակնհայտ լինեն կամ իրենց վարույթում ընթացող վեճով բացահայտեն, որ պաշտպանական նշված որոշումներից որևէ մեկը չի կատարվում՝ ինքնին վտանգի տակ պահելով ընտանիքը, ապա պետք է արագ դիմեն ոստիկանություն:

Եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով

ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում:

Եթե անմիջականորեն սպառնացող վտանգի տակ եղած անձը անչափահաս կամ անգործունակ է, ապա որոշումը կայացրած ոստիկանության իրավասու ծառայողն այդ որոշման պատճենը և համապատասխան արձանագրությունն անհապաղ ուղարկում է ԽՀՄ-ին, որը, գնահատելով իրավիճակը, ձեռնարկում է օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված գործողություններ:

Եթե անհետաձգելի միջամտության որոշումը կիրառվում է անչափահաս կամ անգործունակ անձի հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, ապա երեխաների և անգործունակ անձանց ժամանակավոր խնամքը կազմակերպում են ԽՀՄ-ները՝ որոշման պատճենը ստանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 24 ժամում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առաջնորդվելով նրանց շահերով:

ԳԼՈՒԽ III

ԽՀՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԽՀՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպում է լսումների կամ, նույնն է, նիստերի միջոցով, որոնց ընթացքում էլ լուծում է ցանկացած հարց: Վեճի լուծման վերաբերյալ հանձնաժողովի անդամներն իրենց համաձայնությունը տալիս են ձայների միջոցով: Հանձնաժողովը պետք է ունենա նաև աշխատակարգ, որը հաստատվում է ԽՀՄ-ի կողմից: Դրա միջոցով էլ որոշվում է լսումների (նիստերի) հրավիրման ընթացակարգը[29]:

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի (հասցեն, սենյակը կամ դահլիճը) մասին և համապատասխան տեղեկություն փակցնում տեղական ինքնակառավարման մարմնի նստավայրի հայտարարությունների վահանակին: Նշված կարգը չպահպանելու պատճառով նիստերը կարող են անհարկի հետաձգվել, որով կծանրաբեռնվի տվյալ ԽՀՄ-ի աշխատանքը, ինչպես նաև կարող է հանգեցնել լսումների մասնակիցների դժգոհություններին: Այսօրինակ խնդիրներից խուսափելու նպատակով ծանուցման պահանջը պետք է պատշաճ կատարել՝ ապահովելով հասցեատիրոջ՝ նիստերին մասնակցելու հնարավորությունը:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

Հանձնաժողովի անդամը կարող է քննարկվող հարցի վերաբերյալ գրավոր ներկայացնել իր հատուկ դիրքորոշումը (կարծիքը), եթե այն տարբերվում է հանձնաժողովի ընդհանուր դիրքորոշումից: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ազատ է հարցի շուրջ իր մասնագիտական կարծիքն արտահայտելու, և դրա համար չի կարող հետապնդվել կամ պատասխանատվության ենթարկվել. շատ կարևոր է հարցին օբյեկտիվ և մասնագիտորեն մոտենալը:

Հանձնաժողովը կազմում ու ԽՀՄ է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրակացություն, որն արտացոլում է հանձնաժողովի դիրքորոշումը և ունի բացառապես խորհրդատվական բնույթ: Հատուկ կարծիքը կցվում է եզրակացությանը կամ ներառվում դրա առանձին բաժնում, և չի բացառվում, որ այն դատարանի հավանությանն արժանանա և դրվի դատական ակտի հիմքում կամ ազդի դատարանի ներքին համոզմունքի

29 Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2016.06.29/50(1230) Հոդ. 603, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152354 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

վրա: Դրա մասին է վկայում դատական պրակտիկան: Ուստի երբևէ չպետք է կաշկանդվել մյուս անդամներից տարբերվող դիրքորոշում արտահայտելուց կամ վեճի լուծում առաջարկելուց, եթե օբյեկտիվորեն առկա է նման հիմք:

Ինչպես արդեն նշվել է, վեճի էությունը ճիշտ ընկալելու և խնդրին օբյեկտիվ լուծում տալու համար անպայման պետք է ներգրավել տվյալ ոլորտի մասնագետի, որը կարող է մասնագիտական խորհուրդներով օգտակար լինել եզրակացության տրամադրման համար: Դա նաև կարող է հետագայում ԽՀՄ-ին զերծ պահել պատասխանատվությունից, որը կարող է առաջանալ տվյալ պահին ըստ անհրաժեշտության մասնագետ չհրավիրելու հետևանքով երեխային պատճառված վնասի համար:

Հանձնաժողովի նիստերն արձանագրում է հանձնաժողովի քարտուղարը: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Հանձնաժողովի նիստին ներկա անդամի հատուկ կարծիքը կցվում է արձանագրությանը և համարվում դրա անբաժանելի մաս: Նիստի արձանագրությունը տրամադրվում է հանձնաժողովի բոլոր անդամներին, իսկ դրա քաղվածքը՝ ստորագրված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից, կարող է տրամադրվել նիստին մասնակցած այլ անձանց կամ նրանց ներկայացուցիչներին: Հանձաժողովի նիստը կարող է արձանագրվել նաև ձայնագրառման սարքերի կիրառմամբ, բայց դրա մասին պետք է տեղեկացնել կողմերին և նաև լսել նրանց առարկությունները, եթե այդպիսիք կան:

Հանձնաժողովի նիստերին կարող են ներկա լինել այն անձինք, որոնց վերաբերում է քննարկումը, նրանց օրինական ներկայացուցիչները և (կամ) լիազորված անձինք: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանձնաժողովի նիստերին որպես դիտորդ կարող են ներկա լինել նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ այն անձի (անձանց) համաձայնության դեպքում, որին (որոնց) վերաբերում է տվյալ քննարկումը: Ցանկալի է, որ համաձայնությունները արձանագրվեն գրավոր և կցվեն գործին, որպեսզի հետագայում եզրակացությունն այդ հիմքով չվիճարկվի:

Հանձնաժողովի անդամները մասնակցում են հանձնաժողովի նիստերին, կարող են հարցեր ուղղել զեկուցողին, հանդես գալ առաջարկություններով, հայտնել իրենց դիրքորոշումը քննարկվող հարցերի վերաբերյալ: Եթե նիստի ժամանակ կամ նիստից առաջ հանձնաժողովի անդամները բացահայտեն իրենց մերձավորի կամ ծանոթի՝ վարույթում ներգրավված լինելու հանգամանքը, ապա պարտավոր են ինքնաբացարկ հայտնել և չմասնակցել լսումներին, հակառակ պարագայում ամբողջ եզրակացությունը կարող է կասկածի տակ դրվել: Նման առաջարկությամբ կարող են հանդես գալ նաև կողմերը, եթե հանձնաժողովի որևէ անդամի բացարկ հայտնելու հիմքեր լինեն: Բացի ազգակցական կամ այլ մտերիմ կապերից՝ կարող է ստեղծվել նաև այնպիսի իրավիճակ, երբ, որոշակի համոզմունքներով (կրոնական, գենդերային զգայունության կամ այլ) պայմանավորված, հանձնաժողովի անդամը չի կարող քննարկվող

հարցի վերաբերյալ օբյեկտիվ լուծում առաջարկել կամ ճիշտ եզրահանգման գալ: Նման իրավիճակում նա կարող է ինքնաբացարկ հայտնել:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանկալի է, որ լսումների սենյակը ունենա երեխաների համար հարմարեցված անկաշկանդ միջավայր և դրան նպաստող անհրաժեշտ պարագաներ: Երեխաների լսումները կարող են անցկացվել նաև այլ սենյակում: Երեխաներին լսելիս պետք է ցուցաբերել հատուկ մոտեցում՝ ըստ տարիքային առանձնահատկության:

Անչափահաս երեխային հարցաքննության նախապատրաստելիս պետք է հաշվի առնվեն նրա կարիքները, տարիքը, սեռը, զգայական, սոցիալական, իմացական, ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, կյանքի դժվարին իրավիճակը: Անչափահասի հետ աշխատելիս հանձնաժողովի անդամը չպետք է կատարի այնպիսի շարժումներ, որոնք կարող են բացասական վերաբերմունք արտահայտել, վախեցնել երեխային:

Հարցաքննության ժամանակ երեխան պետք է իրեն հարմարավետ և ապահով զգա: Լսումները կարող են անցկացվել նաև դռնփակ՝ հաշվի առնելով անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պահպանումը: Երեխայից առանձին ապրող ծնողի՝ երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի՝ կրթություն ստանալու հարցերը ծնողների փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ լուծում է դատարանը:

ԽՀՄ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻՆ

ԽՀՄ-ն ներգրավվում է հետևյալ վեճերով դատական վարույթներին՝

- ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերի քննություն,
- ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերի քննություն,
- ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերի քննություն,

- երեխաների բնակության վայրի որոշման գործերի քննություն,

- երեխաների տեսակցության կարգի որոշման գործերի քննություն, ՀՀ քաղաքացիների կողմից երեխաների որդեգրման, որդեգրումը վերացնելու գործերի քննություն:

Լինում են դեպքեր, երբ դատարանը ԽՀՀ անդամներին ներգրավում է որպես երրորդ անձի: Այնուհանդերձ, երկու դեպքում էլ նրանք համարվում են դատավարության մասնակիցներ:

Այն բանից հետո, երբ դատարանը ներգրավում է ԽՀՀ անդամներին, վերջիններս, լինելով դատավարության մասնակիցներ, օգտվում են դատավարական բոլոր իրավունքներից և կրում պարտավորություններ օրենքով իրենց վերապահված գործառույթների շրջանակներում:

ԽՀՀ անդամները դատական վարույթներին իրավունք ունեն[30].

1) ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ.

2) հայտնելու բացարկ.

3) ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը.

4) հարցեր տալու դատավարության մասնակիցներին.

5) միջնորդություններ ներկայացնելու դատարանին.

6) դատական նիստի ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու իրենց փաստարկները և դիրքորոշումը.

7) գործի քննության ընթացքում դիրքորոշում հայտնելու գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների և փաստարկների վերաբերյալ:

ԽՀՀ անդամները՝ որպես իրավասու մարմնի ներկայացուցիչներ, ներգրավվում են դատական վարույթներին դատարանի նախաձեռնությամբ, դատավարության մասնակիցների

30 Մանրամասն տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208, 32-րդ հոդված, https://www.arlis.am/documentview.aspx-?docid=146495 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

համապատասխան միջնորդության հիման վրա:

ԽՀՀ անդամները՝ որպես դատավարության մասնակիցներ, դատարանի կողմից պարտադիր ծանուցվում են դատական նիստի վայրի և ժամանակի մասին և ապահովում իրենց ներկայությունը: Համապատասխան հիմքերի առկայության դեպքում նրանք կարող են նախապես միջնորդություն ներկայացնել դատարանին դատական նիստին չմասնակցելը հարգելի համարելու և այն հետաձգելու վերաբերյալ:

ԽՀՀ անդամների՝ դատական նիստին մասնակցությունը և թույլատրումը պետք է հաստատվեն դատարանի կողմից համապատասխան լիազորությունների առկայության դեպքում (տվյալ անդամը դատարանում պետք է ներկայացնի տվյալ համայնքի անունից հանդես գալու իրավունք սահմանող լիազորագիր՝ տրված համայնքի ղեկավարի կողմից): Նշված փաստաթղթի բացակայության դեպքում դատարանը չի թույլատրում ԽՀՀ անդամի մասնակցությունը դատական նիստին, և վերջինս տվյալ պահին զրկվում է դատական նիստին մասնակցելու իրավունքից:

ԽՀՀ անդամները, այդ թվում՝ դատավարության այլ մասնակիցները բոլոր փաստաթղթերը դատարան են ներկայացնում հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հայաստանի Հանրապետությունում դատավարության լեզուն հայերենն է, ուստի ԽՀՀ անդամները պարտավոր են հետևել օրենքի այս պահանջին:

Դատարանը կարող է կիրառել դատական սանկցիա, երբ անձը.

1) չարաշահում է իր դատավարական իրավունքները կամ չարամտորեն չի կատարում իր դատավարական պարտականությունները.

2) չի ենթարկվում դատարանի կարգադրություններին կամ որևէ այլ կերպ խախտում է դատական նիստի կարգը.

3) դատական նիստի դահլիճում անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի նկատմամբ[31]:

Վերոնշյալով պայմանավորված՝ ԽՀՀ անդամները պետք է հետևեն դատարանի կարգադրություններին, անհարգալից վերաբերմունք չդրսևորեն դատարանի նկատմամբ,

31 Մանրամասն տե՛ս ՀՀ դատական օրենսգիրք, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153897 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

օրինակ՝ դատարանի դահլիճում դատավարության այլ մասնակիցներին հարցեր տալիս կամ պատասխանելիս վիրավորական կամ այլ անհարգալից արտահայտություններ չհնչեցնեն, ելույթ ունենան միայն դատարանի թույլտվությամբ, չընդհատեն դատավարության այլ մասնակիցների կամ դատարանի ելույթները, իրենց դիրքորոշումները ներկայացնեն կամ հարցերին պատասխանեն միայն հոտնկայս:

Դատական վարույթը կամ դրա մի մասն օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

ԽՀՀ անդամները երեխայի շահերի պաշտպանությունն իրականացնելու ժամանակ, ըստ անհրաժեշտության, կարող են միջնորդել դատարանին դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ կարգով ֆիքսելու համար: Այսպես, լինում են դեպքեր, երբ խնամակալության մարմինները լսումների ժամանակ արձանագրում են անչափահաս երեխային կամ նրա ծնողներին վերաբերող որոշակի տեղեկություններ, որոնք բանավոր կամ եզրակացության տեսքով պետք է ներկայացնեն դատարանին: Վերջինս պետք է հրապարակի դրանք, սակայն դռնբաց դատական նիստում սա կարող է նորանոր խնդիրներ առաջացնել երեխայի և ծնողների համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հրապարակվող տեղեկությունները կարող են վերաբերել վարույթի մասնակիցների մասնավոր կյանքին կամ կարող են հոգեբանորեն վնասել երեխային կամ սրել նրա ու ծնողի հարաբերությունը: Նման իրավիճակներում ԽՀՀ անդամները կարող են օգտվել դատական վարույթի դռնփակության հնարավորությունից:

Դատական նիստի ընթացքն օրենքով սահմանված կարգով արձանագրվում է: ԽՀՀ անդամները կարող են համապատասխան դիմում ներկայացնել դատարան՝ ստանալու դատական նիստերի արձանագրությունը կրիչով կամ պարզ թղթային արձանագրությամբ, որը կարող է նրանց անհրաժեշտ լինել տարբեր պատճառներով:

Դատական նիստին ներկա անձն ունի սղագրություն և ձայնագրություն կատարելու իրավունք: ԽՀՀ անդամները կարող են օգտվել դատավարական այդ իրավունքից և կատարել սղագրություններ, ձայնագրություններ, որոնք կարող են նաև հետացնել տվյալ դատական վարույթին առնչվող հետագա ցանկացած հարցի լուծում, եզրակացության կազմում, դատարանի կարգադրությունների ճշգրիտ կատարում, ապացույցների ներկայացում՝ նկատի ունենալով ԽՀՀ անդամների ծանրաբեռնվածությունը բոլոր դատական գործերով:

Ի տարբերության սղագրության և ձայնագրության՝ դատական նիստի ընթացքում լուսանկարելը, տեսաձայնագրելը կամ դատական նիստը հեռարձակելն իրականացվում են օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ: Նման անհրաժեշտության դեպքում ԽՀՀ անդամները անպայման միջնորդություն պետք է ներկայացնեն դատարանին. միայն դատարանի թույլտվությամբ

և համապատասխան որոշմամբ նիստը կարող է տեսաձայնագրվել, լուսանկարվել, հեռարձակվել:

Յուրաքանչյուր ոք, ինչպես և ԽՀՀ անդամը, իրավունք ունի ծանոթանալու ավարտված դատական գործին, որով եզրափակիչ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ՝ բացառությամբ դռնփակ դատական վարույթի կամ օրենքով պահպանվող գաղտնիքի կամ չհրապարակված կամ մասնակի հրապարակված դատական ակտի:

Դատական գործի նյութերին ծանոթանալու անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել որոշակի իրավիճակներով: Օրինակ՝ երեխայի կամ ծնողի կյանքի պայմանները հետազոտելիս անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել նախկին դատական վարույթների ընթացքում վերջիններիս դրսևորած վարքագծին, դիրքորոշումներին, նրանց վերաբերյալ դատարանի որոշումներին կամ երեխայի խնամքին հավակնող այլ անձի վարքագծին, նրա կյանքի նախապատմությանը, որտեղ կարող է առնչություն լինել որևէ դատական վարույթի, ինչը կարող է օգնել որոշակի տեղեկությունների հավաքման ժամանակ: Ընդ որում՝ պետք է ուշադրություն դարձնել, որ դատարանի հաստատած փաստերը կրկին ապացուցման ենթակա չլինեն այլ գործերով:

ԽՀՀ անդամները պարտավոր են անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը, և դատարան ներկայացնեն հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

ԽՀՀ անդամները միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների եզրակացության հիման վրա տալիս են նաև եզրակացություններ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքում՝ երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին:

Նկատի ունենալով, որ օրենքով սահմանված կարգով եզրակացությունը դատարան ներկայացնելը պարտադիր է՝ ԽՀՀ անդամները պետք է հնարավորինս սեղմ ժամկետում ձեռնարկեն համապատասխան գործողություններ, որպեսզի դատական նիստերն անհարկի չձգձգվեն: Սա չի բխի երեխայի շահերից, ինչպես նաև դատարանը կարող է դա որակել «դատավարական իրավունքների չարաշահում», «դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք» և համապատասխան կարգադրություն ուղարկել վերադաս մարմնին. նման խնդիրներից խուսափելու համար այդ ամենը պետք է կազմակերպել պատշաճ կարգով:

Իհարկե, կարող են լինել դեպքեր, երբ ԽՀՀ անդամներին անհրաժեշտ լինի լրացուցիչ ժամանակ հետազոտության և եզրակացության տրամադրման համար: Այս դեպքում կարող է հիմնավորված գրություն կամ միջնորդություն ուղարկվել դատարան՝ խնդրելով լրացուցիչ ժամանակ եզրակացությունը ներկայացնելու համար: Եթե նշված փաստաթղթում հիմնավորվի հավելյալ

ժամանակի անհրաժեշտությունը, ապա դատարանը կարող է իրավաչափ համարել նման վարքագիծը:

Չի բացառվում, որ լինեն դեպքեր, երբ երեխան կամ ծնողը, որի նկատմամբ պետք է կատարվի հետազոտություն և տրվի եզրակացություն, բացակայեն ՀՀ-ից, և անհնար լինի նրանց վերաբերյալ տեղեկություններ տալ դատարանին: Այս դեպքում ԽՀՀ անդամները կարող են այդ փաստը արձանագրել և դատարանին հայտնել տվյալ գործով համապատասխան եզրակացություն ներկայացնելու կամ տնայց իրականացնելու անհնարինության մասին: Որպեսզի նման պատճառաբանությունը հիմնավոր լինի և զերծ՝ շահարկումներից, դատարանին անպայման պետք է ցույց տալ, որ հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկվել և սպառվել են՝ տարբեր մարմինների հարցումներ ուղարկելու, տնայցի ժամանակ փակ դուռ արձանագրելու, հարևաններից բացատրություններ վերցնելու, ՀՀ սահմանը հատելու և ՀՀ-ից բացակայելու վերաբերյալ համապատասխան պետական մարմիններից տեղեկություններ ստանալու և այլ միջոցներով:

Եթե ԽՀՀ անդամները չեն կարողացել տեսնել երեխային և նրա խնամքին հավակնող անձին, չեն ուսումնասիրել նրա բնակարանային պայմանները, անհնար է եղել հավաքել նրանց վերաբերյալ տեղեկություններ, ապա նրանց մասին եզրակացություն տալ չեն կարող: Այն ոչ միայն կարող է անարժանահավատ համարվել դատարանում, այլև նույնիսկ դատավարության մասնակիցների բողոքների արդյունքում կարող է հանգեցնել անբարենպաստ հետևանքների ԽՀՀ անդամների համար՝ կեղծ տեղեկությունների, լիազորությունների չարաշահման և այլ մասերով:

Եթե ԽՀՀ անդամները եզրակացությունը և հետազոտության ակտը չեն ուղարկել դատավարության մյուս մասնակիցներին, ապա դատարան ներկայացնելիս պարտավոր են համապատասխան օրինակները հանձնել նրանց, որպեսզի վերջիններս ևս հնարավորություն ունենան ծանոթանալու այդ փաստաթղթերին և հարցեր տալու ԽՀՀ անդամներին:

Դատարան ներկայացված եզրակացությունը և հետազոտության ակտը դատարանում հաստատվում են տվյալ պահին մասնակից ԽՀՀ անդամի կողմից որպես տվյալ տարածքի խնամակալության մարմնի հավաքական դիրքորոշում: Եթե եզրակացությամբ արձանագրված որևէ փաստի մասով լրացուցիչ ճշգրտման կամ պարզաբանման կարիք լինի, ապա տվյալ պահին ԽՀՀ անդամը կարող է դատական նիստը հետաձգելու միջնորդությամբ ժամանակ խնդրել դատարանից եզրակացությանը վերաբերող հարցերի շուրջ լրացուցիչ պարզաբանում ներկայացնելու համար:

Նկատի ունենալով, որ ԽՀՀ անդամների լիազորությունը երեխայի շահերի պաշտպանությամբ հանդես գալն է, նրանք ազատ են դատական վարույթի շրջանակում երեխային որևէ կերպ վնասող կամ սպառնացող վտանգի առկայության, երեխային ճնշող հարցերի և այլ իրավիճակների

դեպքում առարկել այդ գործողությունների դեմ, ներկայացնել հիմնավորումներ, դատարանից խնդրել և միջնորդել երեխային վերաբերող այս կամ այն հարցի վերաբերյալ ձեռնարկել գործողություններ, տալ դատական հանձնարարություններ: Օրինակ՝ դատական նիստին ներկա երեխային դատավարության մասնակիցների ներկայացուցիչները կամ գործին մասնակցող անձինք կարող են տալ հարցեր, որոնք նրան հոգեբանական ճնշման են ենթարկում կամ վատ դրության մեջ դնում. ԽՀՀ անդամը կարող է առարկել հարցի դեմ կամ խնդրել դատարանին բացառել երեխայի մասնակցությունը դատական նիստին՝ կրկին երեխայի անվտանգության, նրան հոգեբանական ճնշումներից զերծ պահելու և այլ գործոններով պայմանավորված, եթե կան դրա համար բավարար և ծանրակշիռ հիմնավորումներ, որպեսզի միևնույն ժամանակ այն չհակադրվի երեխայի լսված լինելու և կարծիք արտահայտելու իրավունքներին:

Եթե դատական նիստի ընթացքում կամ դատական վարույթի ժամանակ որևէ նոր հանգամանք է ի հայտ գալիս, և այն կարող է էական նշանակություն ունենալ եզրակացության համար կամ ազդել հետազոտության ակտի վրա, ապա ԽՀՀ անդամը կարող է դատարանին միջնորդել ժամանակ տրամադրել եզրակացությունը վերանայելու և նոր հանգամանքների հաշվառմամբ լրացնելու կամ ի լրումն ներկայացնելու համար:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԽՀՄ-ները լիարժեք մասնագիտական եզրակացություն ներկայացնելու նպատակով հաճախ անհրաժեշտություն են ունենում հարցումներ կատարելու տարբեր գերատեսչություններ և կառույցներ: Այսպես, ծնողների գույքային դրությունը պարզելու կամ վերջիններիս ներկայացրած գույքային դրությունը ոչ արժանահավատ համարելու պարագայում ԽՀՄ-ները կարող են հարցում կատարել ՀՀ Կադաստրի կոմիտե՝ անշարժ գույքի առկայությունը, ծնողին պատկանելու հարցը պարզելու, ինչպես նաև համապատասխան բնակարանի մակերեսը իմանալու համար, իսկ տրանսպորտային միջոցների առկայությունը ստուգելու նպատակով կարող են հարցում կատարել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն (տե՛ս Հավելված 5): Շարժական գույքի առկայությունը կարող է պարզվել տնայցի ժամանակ:

Տվյալ ծնողի գույքային վիճակը պարզելը չափազանց կարևոր է, քանի որ երեխայի բնակության մշտական վայրը պետք է ունենա կայուն միջավայր: Շատ են դեպքերը, երբ ծնողը չունի բնակության վայր՝ բնակելի տուն, և երեխայի խնամքին հավակնելու ժամանակ ազգականի կամ մեկ այլ մտերիմ անձի բնակարանը ներկայացնում է ԽՀՄ-ին որպես իր բնակարան, ու արդյունքում երեխայի խնամքը ստանալուց հետո բնակվում են տարբեր բնակարաններում կամ դրսում հայտնվելու վտանգի առաջ են կանգնում:

Որոշ դեպքերում պարզվում է, որ բնակարանը բանկում գրավադրված է, և պարտավորությունները չկատարելու հիմքով բանկը անուրդի է հանել այն: Իհարկե, գույքային դրությունը ծնողներից որևէ մեկի օգտին բնակության վայրը որոշելու միակ որոշիչ պայմանը չէ, սակայն այն ենթակա է գնահատման երեխային հետագայում դրսում հայտնվելուց զերծ պահելու համար:

Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության ստորադաս դատարանը ՀՀ-ից ՌԴ անօրինական տեղափոխված երեխային Հայաստան վերադարձնելու որոշում էր կայացրել՝ հիմք ընդունելով ՀՀ ԽՀՄ-ի եզրակացությունը, ըստ որի՝ տնայցի ժամանակ արձանագրվել էին երեխայի ծնողի բնակության վայրը, բնակարանային պայմանները, երեխայի առանձնասենյակը: ՌԴ վերադաս ատյանը, սակայն, մյուս ծնողից ստանալով ապացույցներ առ այն, որ ՀՀ-ի նշված բնակարանը բանկում գրավադրված է և արդեն անուրդի է հանված Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում, փոխեց ստորադաս ատյանի որոշումը և մերժեց երեխայի վերադարձը ՀՀ՝ այն փաստի հիմքով, որ տվյալ ծնողը չունի բնակարան, այն գրավադրված է, և վերադառնալով նրա մոտ՝ երեխան դրսում հայտնվելու վտանգի տակ է լինելու:

Ուշագրավ է նաև այն, որ դատարանը հաստատել էր երեխայի՝ ՀՀ-ից անօրինական տեղափոխման փաստը, բայց միայն տվյալ ծնողի՝ ՀՀ-ում որպես սեփականություն բնակարան չունենալու հանգամանքը որոշիչ դեր ունեցավ, և ՌԴ դատարանը մերժեց երեխային իր մշտական բնակության վայր վերադարձնելը: Վերջինս, ի դեպ, ՀՀ քաղաքացի էր, ծնվել էր ՀՀ-ում և այնտեղ ապրել էր գրեթե 7 տարի:

Այստեղ դատարանը հավասարակշռել էր երեխայի՝ մշտական բնակության վայր ունենալու և մյուս ծնողի՝ երեխային ՀՀ-ից անօրինական տեղափոխելու վարքագիծը և, երեխայի լավագույն շահը գնահատելով, որոշել էր, որ վերջինիս՝ կայուն բնակվելու վայր ունենալու իրավունքը գերակշռում է, ուստի և նախապատվություն էր տվել դրան՝ այդպիսով զերծ պահելով անչափահասին դրսում հայտնվելու վտանգից:

Նման իրավիճակները բացառելու համար շատ կարևոր է, որ ԽՀՄ-ները ստուգեն դատավարության շահագրգիռ կողմերի ներկայացրած փաստերի արժանահավատությունը, պարզեն՝ արդյոք երեխայի բնակության վայր ներկայացվող բնակելի տունը պատկանում է ծնողին, ի՞նչ իրավունքով (սեփականություն, վարձակալություն, գրավ և այլն), որքա՞ն է բնակելի տան մակերեսը, քանի՞ անդամ է բնակվում այդտեղ, երեխայի առողջ զարգացման համար կա՞ն բոլոր պայմանները, բնակարանը հարմարեցվա՞ծ է հաշմանդամություն կամ այլ առողջական խնդիրներ ունեցող երեխայի կարիքներին: Վերոգրյալ բոլոր չափանիշները ենթակա են գնահատման եզրակացության տրամադրման ժամանակ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԽՀՄ-ն իր գործառույթների շրջանակներում հաճախ իրականացնում է նաև հետազոտություն, որի մաս է կազմում գնահատումը: Սա հետազոտական գործընթաց է, որի շրջանակում հանձնաժողովի անդամը բացահայտում և ուսումնասիրում է անհատ շահառուի կամ ընտանիքի սոցիալական վիճակը, հիմնախնդիրները և կարիքները, ուժեղ և թույլ կողմերը, ռեսուրսներն ու հնարավորությունները: Այդ իսկ պատճառով այն ընդունված է բնութագրել որպես սոցիալական գնահատում:

Գնահատման ընթացքում մասնագետը դիմում է տեղեկությունների հավաքման այնպիսի հիմնական եղանակների, ինչպիսիք են.

- կարիքների գնահատման հարցազրույցը, որի ընթացքում կամ որից անմիջապես հետո լրացվում է կարիքների գնահատման հարցաթերթը,
- հիմնախնդրին վերաբերող պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունը,
- կենցաղային և բնակավայրային պայմանների, հաղորդակցման ձևերի, հարաբերությունների բնույթի անմիջական դիտարկումը,

- տնային այցելությունը (տնայցը),
- սոցիալական միջավայրի ներկայացուցիչների հետ անցկացվող հարցազրույցները և քննարկումները,
- խնդրին առնչվող այլ կազմակերպությունների ունեցած տվյալների ուսումնասիրությունը:

Անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել գնահատման այլ մեթոդներ ևս:

Ընդունված է առանձնացնել գնահատման 4 տեսակ:

1) Սոցիալական գնահատումը՝ որպես ռիսկերի գնահատում

Գնահատման այս տեսակի դեպքում բացահայտվում և գնահատվում է որևէ հիմնախնդրի խորացման և բարդացման ռիսկայնությունը: Օրինակ՝ մասնագետը կարող է գնահատել անձի/երեխայի ձեռքբերովի հաշմանդամության հնարավոր ռիսկերը և դրանց շարքում առանձնացնել և ուսումնասիրել հետևյալ հարցերը՝ *հաշմանդամություն, գործազրկություն, ընտանիքի սոցիալական վիճակի վատթարացում, ընտանեկան հարաբերություններում կոնֆլիկտների հավանականություն և այլն*:

2) Սոցիալական գնահատումը՝ որպես կարիքների գնահատում

Կարիքը բնութագրվում է որպես այնպիսի հիմնարար պահանջմունք, որը բավարարված չէ և այդպիսով խաթարում է անձի բնականոն կենսագործունեությունը: Սոցիալական կարիքը առաջ է գալիս այն ժամանակ, երբ անձը չի կարողանում հասարակական ակնկալիքների շրջանակներում ինքնուրույն բավարարել իր պահանջմունքները: Ընդ որում՝ դրա պատճառները կարող են լինել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ:

Այդ նպատակով գնահատումն ուղղվում է անհատի կարիքների բացահայտմանը, ինչպես նաև դրանց բավարարումը խոչընդոտող անհատական, ընտանեկան կամ համայնքային գործոնների, պայմանների ուսումնասիրությանը: Գնահատման ժամանակ ուսումնասիրվում են շահառուի կամ նրա անմիջական սոցիալական միջավայրի (ընտանիք, հարազատներ, ընկերներ) ներկայացուցիչների՝ սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված փորձերը: Կարևոր է նաև պարզել, թե ինչ արդյունք են դրանք առհասարակ տվել կամ ինչու են ձախողվել:

3) Սոցիալական գնահատումը՝ որպես կարողությունների և ռեսուրսների գնահատում

Գնահատման այս ձևի կիրառմամբ բացահայտվում և ուսումնասիրվում են շահառուի՝ սեփական կարիքների բավարարման կարողությունները, ինչպես նաև այդ հարցում նրան աջակցող ցանցի ռեսուրսներն ու հնարավորությունները: Այդպիսով, գնահատման այս տեսակի դեպքում բացահայտվում են անձի և նրա սոցիալական աջակցության ցանցի ներուժը:

4) Սոցիալական գնահատումը՝ որպես ստուգման միջոց

Այս տեսակն ընդունված է բնութագրել որպես անձնական օբյեկտիվ հատկանիշների գնահատում: Այն կիրառվում է նաև սոցիալական որոշակի ծրագրերից կամ ծառայություններից բաղաբացու օգտվելու իրավունքը հստակեցնելու համար:

Գնահատման ամբողջականությունը ենթադրում է.

- հիմնական կարիքների բացահայտում, դրանց պատճառների և հետևանքների ուսումնասիրություն, բավարարման առաջնահերթությունների և հրատապության որոշում,
- գնահատման ընթացքում կենսագործունեության բոլոր հիմնական ոլորտների ուսումնասիրություն (ընտանիք, կրթություն, աշխատանք, առողջական վիճակ, տեղաշարժ և այլն),
- ուսումնասիրության ընթացքում գնահատման մի քանի մեթոդների համակցված կիրառում (օրինակ՝ դիտարկում, հարցազրույց, տնային այցելություն և այլն):

Գնահատման համալիրությունն ապահովվում է կարիքների բազմակողմանի (տարբեր տեսանկյուններից, տարբեր մոտեցումների կիրառմամբ) գնահատման, ինչպես նաև սոցիալական աջակցության ցանցի ռեսուրսների ու հնարավորությունների համապարփակ ուսումնասիրության միջոցով:

Գնահատման մյուս կարևոր սկզբունքը օբյեկտիվությունն է: Սա նշանակում է, որ գնահատման ընթացքում պետք է արտացոլվեն միայն իրականում տեղ գտած կամ տվյալ պահին կատարվող իրադարձությունների մասին տեղեկությունները, ինչպես նաև պահպանվի օբյեկտիվ վերաբերմունքը գնահատման գործընթացի հանդեպ: Այսպիսով, մասնագետը գնահատման ողջ ընթացքում զբաղեցնում է օբյեկտիվ և չեզոք ուսումնասիրողի դիրք՝ արձանագրության մեջ ներկայացնելով միայն անաչառ և ճիշտ տեղեկություններ: Այդ հարցում մասնագետին օգնում է մյուս կարևոր սկզբունքը, այն է՝ անձի ակտիվ մասնակցությունը գնահատման բոլոր ընթացակարգերին:

Ինչպես արդեն նշվեց, գնահատման ընթացքում մասնագետն ուսումնասիրում է կենսագործունեության բոլոր հիմնական ոլորտները, որոնց կանդրադառնանք ստորև:

Երեխայի կամ նրա ընտանիքի եկամուտները: Այս տվյալների ուսումնասիրությունը հանձնաժողովի անդամին հնարավորություն է ընձեռում պարզելու, թե որքանով է ընտանիքի եկամուտը բավականացնում ընտանիքի անդամներին, և որքանով է շարունակական ու կայուն եկամտի այս կամ այն աղբյուրը:

Բնակարանային պայմաններ և կենցաղի կազմակերպում: Այս դեպքում մասնագետն ուսումնասիրում է բնակարանային պայմանները՝ փորձելով հասկանալ, թե որքանով են դրանք բարվոք երեխայի կամ նրա ընտանիքի անդամների առողջության, հիգիենայի պահպանման, ազատ տեղաշարժման, հարմարավետության (բնակարանի վերանորոգվածության աստիճան, ընտանիքի գույքային ապահովվածություն և այլն) համար:

Հանձնաժողովի անդամն ուսումնասիրում է նաև ընտանիքի կենցաղային պայմանները, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման, ջեռուցման, օդափոխման համակարգերի, կապի ու հեռահաղորդակցության միջոցների առկայությունը:

Զբաղվածություն: Այս ոլորտում հանձնաժողովի անդամը ուսումնասիրում է աշխատանքային գործունեությունը՝ պարզելով աշխատանքի բնույթը, պայմանները՝ թե՛ ֆիզիկական, թե՛ սոցիալական (հարաբերություններ, կապեր գործընկերների, գործատուի հետ), աշխատանքային իրավունքների պահպանումը, ինչպես նաև այն, թե ինչ տեղ ու դեր ունի աշխատանքը մարդու կյանքում, արդյոք դա միայն եկամուտ ստանալու միջոց է, թե անձը նաև սիրում է այն և ստանում հոգեկան բավարարվածություն, դա մասնագիտական աշխատանք է, թե ոչ, նա արդյոք ցանկանում է փոխել աշխատանքը և ձեռք բերել նոր մասնագիտություն, տվյալ պահին մասնագիտական կարողությունների զարգացման ինչ կարիքներ ունի և այլն:

Ֆիզիկական և հոգեկան առողջություն: Անձի առողջական վիճակի գնահատումը ևս առաջնային նշանակություն ունի խնդրի ամբողջական պատկերը ստանալու համատեքստում: Այդ նպատակով մասնագետը պարզում է՝ արդյոք անձն ունի սուր կամ քրոնիկ հիվանդություններ, դրանց բուժման ընթացքն ու բուժման շարունակման կամ արդյունավետության բարձրացման հնարավորությունները: Կարևոր է ճշտել, թե արդյոք ընտանիքի անդամներից որևէ մեկն ունի հաշմանդամություն, նրա համար սահմանվել է հաշմանդամության կարգ, նա օգտվում է իրեն հասանելի բոլոր ծառայություններից և օրենսդրությամբ տրամադրված արտոնություններից:

Կրթություն: Գնահատման ընթացքում կրթությանն առնչվող ուսումնասիրությունները հիմնականում ուղղվում են կրթության մակարդակը, կրթություն ստանալու կամ կրթությունը շարունակելու ցանկությունն ու անհրաժեշտությունը պարզելուն: Առաջնային ուշադրություն է դարձվում հատկապես երեխաների կրթության հիմնահարցերին: Մասնավորապես հանձնաժողովի անդամը պետք է պարզի՝ արդյոք երեխաները հաճախում են դպրոց, եթե այո, ապա ինչ դժվարություններ ունեն ուսումնառության ընթացքում. դրանք կարող են պայմանավորված լինել ինչպես միջանձնային հարաբերություններով (երեխա-դասընկերներ,

երեխա-ուսուցիչ, ծնող-դպրոց և այլն), այնպես էլ սովորելու գործընթացով: Իսկ եթե երեխան դպրոց չի հաճախում, ապա դա ուսումնասիրության լուրջ առարկա է դառնում մասնագետի համար: Նա պետք է կարողանա պարզել՝ ինչն է խանգարում երեխայի դպրոց հաճախելուն և դրանով փաստացիորեն կրթության հիմնարար իրավունքը իրացնելուն, մինչ այդ ինչ քայլեր են ձեռնարկվել իրավիճակը շտկելու ուղղությամբ, և ինչ պետք է ձեռնարկել խնդիրը լուծելու համար:

Երեխաների կրթության ոլորտում կարիքների գնահատումը չի սահմանափակվում միայն դպրոցական կրթության հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Գնահատումն ուղղվում է նաև երեխայի ներգրավվածությունը մշակութային, սպորտային, ժամանցային միջոցառումներում և խմբակներում բացահայտելուն:

Ընտանեկան հարաբերություններ, համայնքի հետ կապ: Հանձնաժողովի անդամն ուսումնասիրում է ներընտանեկան հարաբերությունները, փորձում հասկանալ առկա խնդիրները, կոնֆլիկտները կամ հակասությունները, վերհանում ընտանեկան հաղորդակցման և շփման ձևերը՝ հասկանալու համար, թե որքանով են դրանք կառուցողական: Օրինակ՝ ընտանեկան բռնությունը ներընտանեկան շփման կամ հարաբերությունների ապակառուցողական և քայքայիչ ձևերից է, հետևաբար գնահատման ընթացքում հանձնաժողովի անդամի կարևոր խնդիրներից է ընտանեկան բռնության բացահայտումը, իսկ հետագայում նաև այդ հիմնախնդրի լուծմանը հասնելը:

Գնահատման մյուս թիրախը համայնքում ընտանիքի ինտեգրվածության կամ մեկուսացվածության աստիճանի բացահայտումն է, որի համար հանձնաժողովի անդամը կարող է ուսումնասիրել ընտանիքի անդամների մասնակցությունը համայնքային այնպիսի գործընթացներին, ինչպիսիք են տոնական կամ մշակութային և համայնքային համախմբող միջոցառումները, կրոնական ծիսակարգերը, փոխաջակցության ծրագրերը, համայնքային կառավարման ընթացակարգերը և այլն: Եթե վերոնշյալ գործընթացների կամ միջոցառումների մեծ մասում ընտանիքն ունի բավականին պասիվ մասնակցություն կամ առհասարակ մեկուսացած է դրանցից, ապա դա վկայում է ընտանիքի սոցիալական ներառվածության ցածր մակարդակի կամ մեկուսացվածության մասին: Այդ դեպքում կարևոր է գնահատման միջոցով պարզել այն պատճառները կամ պայմանները, որոնք հանգեցրել են նման վիճակի:

Հակասոցիալական վարք: Սա գնահատելը նույնպես առաջնային նշանակություն ունի ընդհանուր պատկեր ստանալու համար, քանի որ շատ դեպքերում հակասոցիալական վարքի դրսևորումները հանգեցնում են առողջության քայքայման, ինչպես, օրինակ, ալկոհոլի չարաշահման կամ թմրանյութերի օգտագործման պարագայում է, նաև սպառնում պետության կողմից կիրառվող խստագույն պատժամիջոցներով, ընդհուպ ազատազրկում: Այս դեպքում հանձնաժողովի անդամի համար կարևոր է վարքի ուսումնասիրությունը, վարքային խնդիրների (կախվածության տարբեր ձևեր, ագրեսիայի դրսևորում, կոնֆլիկտներ, բռնության կիրառում) գնահատումը և դրանց հաղթահարման նպատակով հասցեական աջակցություն տրամադրելու հնարավորությունների ուսումնասիրությունը:

Շահառուի իրավունքների իրացումն ու պաշտպանությունը: Հանձնաժողովի անդամը փորձում է պարզել, թե արդյոք այս կամ այն ոլորտում (առողջապահություն, կրթություն, աշխատանք, մշակույթ, ազգային կամ կրոնական պատկանելություն և այլն) անձի իրավունքները չեն ոտնահարվում, արդյոք նա կարողանում է իրացնել օրենքով իրեն վերապահված իրավունքները և օգտվել բոլոր այն հնարավորություններից ու արտոնություններից, որոնք իր համար ապահովում են պետությունը, մարզը կամ համայնքը:

Հանգիստ և ազատ ժամանակ: Քանի որ հանգստի և ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպումը կյանքի որակի ապահովման բաղադրիչ է, ինչպես նաև ֆիզիկական ու հոգեկան առողջության ապահովման գրավական, ապա պակաս կարևոր չէ ուսումնասիրել նաև դրանց առնչվող հիմնահարցերը: Այս դեպքում անհրաժեշտ է ուսումնասիրել՝ արդյոք երեխան ունենում է ազատ ժամանակ, ինչպես է փորձում այն տնօրինել, գոհ է դրանից, համարում է արդյունավետ, ինչպես և որ միջավայրում է նախընտրում կազմակերպել իր հանգիստը, և հաջողվում է դա իրեն: Չհաջողվելու դեպքում անհրաժեշտ է պարզել երեխայի ազատ ժամանակի և հանգստի կազմակերպման հիմնական խոչընդոտները:

Տրանսպորտ և տեղաշարժ: Ազատ տեղաշարժը և հաղորդակցումը, այդ թվում՝ այլ համայնքներում բնակվող հարազատների, բարեկամների, ընկերների հետ, նույնպես անձի հիմնարար իրավունքներ են, որոնց իրացման համար անհրաժեշտ են ֆիզիկական միջավայրի և տրանսպորտային միջոցների հարմարեցվածություն անձի կարիքներին ու հնարավորություններին: Որոշ բնակավայրերում դեռևս չլուծված խնդիր է տրանսպորտի առկայությունը: Թեև կարող է թվալ, որ այս խնդիրները դժվարլուծելի են և հանձնաժողովի անդամի լիազորությունների շրջանակում չեն, այնուամենայնիվ, դրանք ևս ենթակա են ուսումնասիրության: Մասնավորապես հանձնաժողովի անդամը սույն խնդիրների առնչությամբ պետք է փորձի պարզել՝ արդյոք շահառուի առօրյա տեղաշարժը հնարավոր է իրականացնել վերջինիս համայնքում, բնակության վայրում կա միջհամայնքային և/կամ ներհամայնքային տրանսպորտ, այն հարմարեցված է հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Բացասական պատասխանի դեպքում պետք է ճշտել՝ ինչպես է անձը կազմակերպում իր և/կամ իր ընտանիքի անդամների տեղաշարժը, հատկապես անհրաժեշտ ծառայություններից օգտվելու համար, ինչ դժվարություններ է ունենում այդ ընթացքում և ինչպես է փորձում դրանք հաղթահարել:

Այս բոլոր ոլորտների գնահատումը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել երեխայի և նրա ընտանիքի կարիքների բազմազանության, ինչպես նաև դրանց բավարարման հնարավորությունների մասին:

Գնահատման արդյունքում ստացված տվյալները արտացոլվում են գրավոր եզրակացության մեջ:

Երեխայի զարգացման կարիքների գնահատում

1. Առողջություն: Ներառում է երեխայի աճի և զարգացման, ինչպես նաև ֆիզիկական ու հոգեկան վիճակների ուսումնասիրությունը՝ աճի և զարգացման տեմպը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Պետք է նաև տեղեկություններ հավաքել՝ անհրաժեշտության դեպքում երեխան արդյոք ստանում է համապատասխան բուժում (պատվաստումներ), դեղամիջոցներ և սնունդ:

2. Կրթություն: Այս կարիքը բացահայտելու համար տեղեկություններ են անհրաժեշտ երեխայի ճանաչողական զարգացման վերաբերյալ: Հարկավոր է ուսումնասիրել նրա հնարավորությունները՝ մյուս երեխաների հետ խաղալու և հաղորդակցվելու կարողությունները, որոշ հմտությունների և հետաքրքրությունների ձևավորման, հաջողության և նվաճումների հասնելու փորձը:

3. Զգացմունքային և վարքային զարգացում: Դիտարկում է երեխայի գործողությունների և վարքի համապատասխանությունը նրա զգացմունքներին հատկապես ծնողների և խնամողների, իսկ աճին զուգընթաց՝ նաև այլ անձանց հետ հարաբերությունների համատեքստում: Զգացմունքային և վարքային զարգացումը ներառում է կապվածությունների բնույթը և որակը, բնավորության բնութագրերը, փոփոխություններին հարմարվելը, արձագանքը սթրեսին և ինքնավերահսկողության համապատասխան աստիճանը:

4. Ինքնություն/նույնականություն: Դիտարկում է երեխայի՝ որպես արժևորված անձի զարգացող անհատականության զգացումը և երեխայի «ես»-ի՝ որպես առանձին և արժևորված անձի զգացումը: Ներառում է երեխայի պատկերացումները իր անձի, հնարավորությունների, ինքնավստահության վերաբերյալ, այլ կերպ ասած՝ նրա տեսակետն իր և իր կարողությունների մասին, ինքնապատկերացումը և ինքնագնահատականը, անհատականության դրական զգացումը և ընկալումը: Ընտանիքին, ինչպես նաև խմբերին և մեծ հասարակությանը պատկանելու և նրանց կողմից սպասված լինելու զգացումները նույնպես վկայում են ինքնության զարգացման մասին:

5. Ընտանեկան և սոցիալական փոխհարաբերություններ: Երեխայի անձի զարգացման այս կողմի մասին պատկերացում կազմելու համար հարկավոր է ուսումնասիրել նրա ապրումակցման (էմպատիայի) և սեփական «ես»-ը մեկ ուրիշին ներկայացնելու կարողությունները: Սա ներառում է ծնողների կամ խնամողների կայուն և հոգատար փոխհարաբերությունները, լավ հարաբերություններն ազգականների հետ, տարիքի հարաճուն կարևորությունը, ընկերությունը հասակակիցների հետ և ընտանիքի արձագանքն այս փոխհարաբերություններին:

6. Հասարակությանը ներկայանալը: Վերաբերում է նրան, թե երեխան ինչպես է աստիճանաբար ավելի ու ավելի լավ հասկանում, որ մարդու վարքագիծը, նրա ցանկացած

թուլություն կամ առավելություն ընկալվում են շրջապատի կողմից և ստեղծում համապատասխան տպավորություն: Ներառվում են տարիքին, սեռին, մշակույթին և կրոնին հագուստի համապատասխանության, մաքրության և անձնական հիգիենայի հարցերը, տարբեր միջավայրերում ներկայանալու վերաբերյալ ծնողների խորհուրդները: Ծնողների կողքին ապրելով՝ երեխան պետք է սովորի շրջապատում պատշաճ պահել իրեն:

7. Ինքնախնամքի հմտություններ: Սրանք գնահատելիս հարկավոր է ուշադրության կենտրոնում պահել երեխայի անկախ ապրելու համար անհրաժեշտ գործնական, հուզական և հաղորդակցական հմտությունների ձեռքբերման և զարգացման ընթացքը: Ներառում է հագնվելու և ուտելու հմտությունների վաղ ձևավորումը, ընտանիքից առանձին ապրելու փորձերը, մեծ երեխայի նման ապրելու հմտությունները: Հարկավոր է հաշվի առնել նաև երեխայի՝ սոցիալական հիմնախնդիրներ լուծելու հմտությունների զարգացումը: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի երեխայի թույլ կողմերի և ինքնախնամքի հմտությունների զարգացման վրա ազդող սոցիալական պայմաններին:

Ծնողավարման կարողությունների գնահատում

1. Հիմնական խնամքի ապահովում: Որքանո՞վ են աճի և զարգացման ընթացքում բավարարվել և բավարարվում երեխայի ֆիզիկական կարիքները (սնունդ, հագուստ, հիգիենա և այլն)՝ տարիքին և պահանջմունքներին համապատասխան:

2. Անվտանգության ապահովում: Ծնողները երեխայի համար պետք է երաշխավորեն ապահով և անվտանգ միջավայր: Անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել երեխայի միջավայրի ապահովության և անվտանգության աստիճանը՝ արդյոք երեխան տանը կամ այլ վայրերում բավարար չափով պաշտպանված է վտանգներից և վնասվելուց:

3. Կայուն հուզական կապի ապահովում: Գնահատվում են յուրաքանչյուր ծնողի և երեխայի հուզական կապի առկայությունը և որակը, երեխայի զարգացմանը համապատասխան զգացմունքային կարիքների բավարարումը, ուշադրությունը դրանց նկատմամբ, ընտանեկան մթնոլորտը, ընտանիքի անդամների փոխհարաբերությունները: Ցանկացած տարիքում երեխան կարիք ունի մեծերի և հասակակիցների հետ կայուն, չընդհատվող, ջերմ հուզական կապվածության և ուշադիր վերաբերմունքի: Ծնողների արձագանքը փոփոխվում է երեխայի զարգացմանը զուգընթաց, որի արդյունքում երեխայի կապերն ընտանիքի բոլոր անդամների հետ համապատասխան կերպով զարգանում և խորանում են: Ծնողները պետք է կարողանան ապահովել երեխայի համար համապատասխան կայուն ընտանեկան միջավայր:

4. Երեխայի զարգացման խթանում, խրախուսանք: Ծնողները կարողանո՞ւմ են խթանել երեխայի սովորելու, մտավոր կարողությունների զարգացումը՝ ճանաչողական և սոցիալական հնարավորություններ ստեղծելով: Ճանաչո՞ւմ են արդյոք նրա կարողությունները, ունե՞ն

երեխայի հետ զրուցելու, նրան հասկանալու, հարցերին պատասխանելու հմտություններ, խթանո՞ւմ են նրա խաղային գործունեությունը, հետաքրքրությունների զարգացումը, նպաստո՞ւմ են հաջողություններին: Օգնո՞ւմ են հասկանալու և հաղթահարելու կյանքի տարբեր իրադարձություններն ու դժվարությունները:

5. Ուղղորդում և վերահսկում, սահմանները ուրվագծելու կարողություն: Ներառում է անհրաժեշտ ընտանեկան կայուն միջավայրի ապահովումը, որպեսզի երեխան հնարավորություն ունենա զարգանալու և ապահով հարաբերություններ ստեղծելու ընտանիքի, արտաքին աշխարհի և հասարակության հետ: Ծնողները դաստիարակության միջոցով և սեփական օրինակով նպաստում են, որ երեխան յուրացնի հասարակական նորմերը և վարքային կանոնները, ձևավորվեն նրա կամային որակները: Կանոնակարգվա՞ծ են արդյոք երեխայի առօրյան, գործունեությունը, ռեժիմը, կարգուկանոնին հետևելը, տարիքային նորմերին համապատասխան ձևավորվա՞ծ են նրա սոցիալական հմտությունները, խնդիրների լուծման կարողությունները:

Ընտանիքի և միջավայրի գործոնների գնահատում

1. Ընտանիքի պատմություն, կառուցվածք և գործառույթներ: Անհրաժեշտ է ուսումնասիրել ընտանիքի ստեղծման և զարգացման պատմությունը, անդամների կազմը և նրանց միջև եղած կապերը: Հատուկ ուշադրության առարկա պետք է լինի երեխայի հետ կապվածության աստիճանը: Ընտանիքի գործառույթները փոխկապակցված են ընտանիքի անդամների և նրանց կարիքների հետ: Ընտանիքը մշտապես կամ պարբերաբար բավարարում է որոշակի պահանջմունքներ, որոնց էլ ուղիղ համեմատական է նրա գործառույթների քանակը: Կարևոր գործոն են ընտանիքի կառուցվածքի էական փոփոխությունները, նրա կյանքի նշանակալից իրադարձությունների շղթան և դրանց դերը երեխայի համար, ծնողների կյանքի դժվարությունները, փոխհարաբերությունները:

2. Ընտանիքի արտաքին և ներքին սահմանները, միջսերնդային կապերը, կանոնները: Ընտանիքը բարդ համակարգ է: Այն իր հերթին ավելի մեծ համակարգերի՝ ազգականների, բարեկամների, տոհմի, հասարակության ենթահամակարգ է: Բացի դրանից՝ ընտանիքի ներսում նույնպես կան ենթահամակարգեր, օրինակ՝ ամուսինները, երեխաները: Ցանկացած համակարգ ունի իր սահմանները, որոնք որոշում են նրա կառուցվածքը, գործառույթները և դինամիկան: Արտաքին սահմանները բաժանում են ընտանիքը լայն հասարակական համակարգից, ներքինները՝ կառուցում ընտանիքի ներքին հոգեբանական տարածքը, նպաստում զարգացմանը: Սահմանները կարող են լինել կարծր, լղոզված և թափանցիկ: Սահմանների վերլուծությունը ներառում է.

- ընտանեկան հիերարխիայի սահմանումը, դերերի և գործառույթների բաշխումը,

- նորմերի, կանոնների և արժեքների սահմանումը, որոնք կարգավորում են հարաբերությունները ընտանիքի անդամների և շրջապատի միջև,

- տեղեկությունների փոխանակման հիմնական ուղիները:

Նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ է, որ սահմանները լինեն հստակ ուրվագծված և թափանցիկ: Հակառակ դեպքում դրանք շատ կարծր են, և ենթահամակարգերի միջև հաղորդակցումը սահմանափակ է կամ չափազանց լղոզված: Սա բերում է նրան, որ մի ենթահամակարգի սթրեսները հեշտությամբ փոխանցվում են մյուսին և անդրադառնում նրա վրա:

Ընտանիքի անդամների կենսագործունեությունը կարգավորվում է որոշակի կանոններով, որոնք վերաբերում են ընտանեկան կյանքի տարբեր ոլորտներին, ցույց են տալիս, թե ինչ կարելի է անել, ինչ՝ չի կարելի, ինչն է լավ, ինչը՝ վատ: Կարելի է ասել, որ դրանք ընտանեկան գաղափարախոսության բաղադրիչն են: Ընտանեկան կանոնները փոխկապակցված են, և դրանց միասնությունը ընտանեկան փոխհարաբերությունների, փոխազդեցության չափորոշիչների համակարգն է:

Հարկավոր է բացահայտել, թե երեխան և ծնողները ինչպես են ընկալում իրենց տոհմի սահմանները, ում են համարում դրա անդամ: Սա ներառում է ընտանիքին կապված և չկապված, այդ թվում նաև բացակայող անձանց: Պետք է պարզել, թե նրանք ինչ դեր ու նշանակություն ունեն երեխայի և նրա ծնողների համար: Էական է նաև հարևանական և համայնական կապերի ազդեցությունը երեխայի և ծնողների վրա՝ ներառյալ ընտանիքի ինտեգրվածության կամ մեկուսացվածության աստիճանը, նրանց առաջնային խմբերը, ընկերական և սոցիալական կապերը և դրանց կարևորությունը:

3. Բնակարանային պայմաններ, աշխատանք, եկամուտներ: Էական է, թե արդյոք տանը կան երեխայի և ընտանիքի մյուս անդամների տարիքին, սեռին և զարգացմանը համապատասխանող ներքին և արտաքին պայմաններ: Հիմնական պայմանները ներառում են ջուրը, ջեռուցումը, սանիտարական պայմանները, խոհանոցային հարմարությունները, ննջարանային պայմանները և մաքրությունը, հիգիենան, անվտանգությունը, անձնական հոգեբանական տարածքի ապահովումը և դրանց ազդեցությունը երեխայի վրա: Ընտանիքի անդամների աշխատանքային և այլ զբաղվածությունը, եկամուտները, ֆինանսական խնդիրների առկայությունը և դրանց ազդեցությունը երեխայի վրա նույնպես առանցքային նշանակություն ունեն:

4. Ընտանիքի սոցիալական ինտեգրում: Սա ներառում է հարևանության և համայնքի ուսումնասիրությունը, նրանց ազդեցությունը երեխայի և ընտանիքի վրա, ընտանիքի ինտեգրման և մեկուսացման մակարդակը, ռեֆերենտ խմբերի առկայությունը, սոցիալական կապերը, դրանց կարևորությունը:

ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Հոգեբանական հետազոտության մեթոդները միջոցների, գործիքների համակազմ են անձի, խմբի առանձնահատկությունների, որակների, վարքի, սոցիալ-հոգեկան երևույթների ուսումնասիրման, դրանց օրինաչափությունների և մեխանիզմների բացահայտման համար:

Հոգեբանության հիմնական մեթոդներից է դիտումը: Սրա օգնությամբ կարելի է տեղեկություններ ստանալ մարդու և նրա վարքի մասին: Դիտման մեթոդը մեծ նշանակություն ունի բնական պայմաններում երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար: Այն ենթադրում է ուսումնասիրվող երևույթների լիարժեք, ճշգրիտ նկարագրություն և հոգեբանական մեկնաբանություն: Նպատակն է բացահայտել դրանց հոգեբանական բովանդակությունը՝ փաստերի վրա հիմնվելով: Գիտական դիտումը, ի տարբերություն առօրյա դիտման, ունի մի շարք առանձնահատկություններ. այն համակարգված է, պլանավորված և նպատակաուղղված, պահանջում է հատուկ պատրաստվածություն, ենթադրում է նպատակի առկայություն, դիտման գործընթացի կազմակերպվածություն, ստացված արդյունքների գրանցում, ինչպես նաև գրանցվող նյութի ամբողջականություն և համարժեքություն:

Վարքի բնութագրիչներ կազմելու համար դիտման մեթոդի շրջանակում հաշվի են առնվում տարբեր չափանիշներ, որոնք պայմանավորված են տարիքի, իրավիճակի, մասնակիցների քանակի և այլ հանգամանքներով: Դիտման հիմնական չափանիշներն են միմիկան, պանտոմիմիկան, արտաքին առանձնահատկությունները, վարքը հիմնական գործունեության ընթացքում (խաղ, ուսուցում, աշխատանք), խոսքը, իր կամ ուրիշների նկատմամբ վարքային դրսևորումները, վարքը բարդ իրավիճակներում, հատուկ ընդգծված և բնորոշ գծերի օրինակներ (արտահայտություններ, սովորություններ, հետաքրքրություններ, նախասիրություններ և այլն):

«Դժվար» վարքի դիտման՝ Դ. Լեշլիի մեթոդիկան: Հեղինակը կարծում է, որ երեխայի խնդրի ճշգրիտ ընկալման համար անհրաժեշտ է անցկացնել դիտում և դրանից հետո հետևություն անել, թե որքան խորն է այն: Առանձնացնում են դիտման երեք ուղղություն՝

1) հաճախականություն. որքա՞ն հաճախ է դրսևորվում խնդիրը,

2) շարունակականություն. ամեն անգամ որքա՞ն երկար է շարունակվում «դժվար» վարքը, կամ օրվա ո՞ր ժամերին է այն բնորոշ,

3) ինտենսիվություն. վարքը «դժվար» չէ, բավականին «դժվար» է, ծայրահեղ «դժվար» է:

Հատկապես կարևոր է դիտման հաճախականությունը: Կարելի է հետևել երեխայի վարքին մի քանի օրվա ընթացքում կամ հաշվել «դժվար» վարքի դրսևորման հաճախականությունը: Վարքի հաճախական դիտումը երբեմն տալիս է շատ անսպասելի արդյունքներ: Թեպետ մեծահասակը մտածում է, որ երեխան օրվա մեծ մասը չարաճճի վարք է դրսևորում, սակայն դիտման արդյունքում կարող է պարզվել, որ ժամեր կամ անգամ օրեր շարունակ երեխայի վարքը բոլորովին էլ «դժվար» չէ[32]:

Դիտումը արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է դիտողականության հմտության մարզում, երեխային և ընտանեկան հարաբերությունները ուսումնասիրելու համար առավել կարևոր դրսևորումների թիրախավորում: Այն ցանկալի է իրականացնել տարբեր պայմաններում, տարբեր անձանց ներկայությամբ՝ համեմատականներ անցկացնելու նպատակով: Երեխայի վարքն ու հուզական արձագանքները կարելի է դիտել իրեն ծանոթ, սովորական միջավայրում, օրինակ՝ տանը կամ բակում, և համեմատել նոր անծանոթ վայրում նրա պահվածքի և արձագանքների հետ: Անհրաժեշտ է համեմատել՝ ինչպես է երեխան իրեն դրսևորում, ինչ է ասում հոր, մոր, անհրաժեշտության դեպքում՝ ընտանիքի այլ անդամների ներկայությամբ և մասնագետի հետ առանձին, ինչպես է հաղորդակցվում անծանոթ մարդու հետ, շփման ինչ պատնեշներ են նկատվում, կարողանում է որոշ ժամանակ անց մասնագետի օգնությամբ հաղթահարել դրանք, թե ոչ:

Պետք է ուշադրություն դարձնել, թե արդյոք երեխան կարողանում է հանգիստ խաղալ, խոսել մասնագետի հետ կամ զբաղվել այլ գործունեությամբ ծնողի ներկայությամբ կամ առանձին: Ծնող-երեխա շփման և հարաբերությունների առանձնահատկությունները հասկանալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ դրսևորումներին. տարածքում իրար նկատմամբ ի՞նչ հեռավորության վրա և ի՞նչ դիրքով են տեղավորվում, ինչպե՞ս են փոխվում դիրքերը և հեռավորությունը հանդիպման ընթացքում, երեխան կարողանո՞ւմ է ազատ տեղաշարժվել, անհրաժեշտության դեպքում դիմել ծնողին, չկաշկանդվել նրա ներկայությունից, ազատ խոսել և արտահայտվել իր կարիքների մասին, կարծիք հայտնել, դիմել ծնողի օգնությանը: Ինչպե՞ս է ծնողը դիմում երեխային, ուղղորդում, դիտողություններ անում. պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն խոսքին, այլև ձայնի բարձրությանը, հնչերանգին, դիմախաղին, երեխայի հուզական արձագանքին: Հատկապես կարևորվում են դիմախաղը և ժեստերը. կարողանո՞ւմ է ծնողը նկատել երեխայի արձագանքը, տրամադրության փոփոխությունը, կարիքները, համահո՞ւնչ է արդյոք ծնողի արձագանքը երեխայի հույզերին և խոսքին, կարողանո՞ւմ են նրանք երկխոսել, երեխան անհամաձայնություն հայտնո՞ւմ է: Դրսևորո՞ւմ է արդյոք երեխան տարիքին համապատասխան բավարար ինքնուրույնություն իր գործողություններում, խոսքում, ինքնասպասարկման, որոշումների կայացման, կարծիքի արտահայտման հարցերում:

Հարցումը առավել տարածված հոգեբանական մեթոդ է: Հարցման ժամանակ կարևորն

32 Մանրամասն տե՛ս Ավանեսյան Հ.Մ., Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում, Ուսումնամեթոդական ուղեցույց, Երևան, 2015 թ., էջ 13:

ընդհանրական պատկերն է, ոչ թե կոնկրետ հարցվողի պատասխանը: Սրանով էլ հարցման մեթոդը տարբերվում է հարցազրույցից, որտեղ կարևոր է հենց հարցերին պատասխանող մարդու տեսակետը: Հարցազրույցի ժամանակ կարևոր է մասնագետի անմիջական և ազատ շփումը երեխայի կամ ընտանիքի այլ անդամների հետ: Սովորաբար զրույցի մեթոդը կիրառվում է որպես օժանդակ մեթոդ այլ հոգեբանական մեթոդների հետ, որոնք ուղղված են անձի հոգեկան վիճակների, վարքի առանձնահատկությունների հայտնաբերմանը: Զրույցի անցկացման արդյունավետությունը պայմանավորված է վստահության և բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծմամբ: Դրա ընթացքը կախված է հարցադրումների ոճից և ձևից: Հարցազրույցը նախապես պլանավորվում է, ըստ նպատակի՝ կազմվում են համապատասխան հարցեր, որոնք կարող են լինել բաց և փակ: Առաջինը տալիս է պատասխանի լայն հնարավորություն, երկրորդը ենթադրում է «այո» կամ «ոչ» պատասխան: Բաց հարցերը սովորաբար սկսվում են հետևյալ կերպ՝ «ինչպե՞ս....», «ինչո՞ւ....», «կպատմե՞ս ինձ դրա մասին....»: Բաց հարցերի կիրառումը ակտիվացնում է հարցվողին, մտածելու տեղ տալիս, նոր մտքեր ձևակերպելու հնարավորություն ստեղծում: Վստահության և բարյացակամ մթնոլորտ ձևավորելու համար անհրաժեշտ է հարցազրույցը սկսել բաց հարցերից, որոնք ուղղված են հարցվողների կարծիքը, մոտեցումը, տեսակետը իմանալուն: Երեխաների հետ աշխատանքում զրույցը կառուցվում է ավելի ազատ, անցկացվում ոչ ֆորմալ միջավայրում, որպեսզի երեխան չկաշկանդվի:

Երեխայի համար բարդ բառերը և հասկացությունները պետք է բացատրել, հարցեր տալ՝ համոզվելու համար, որ նա ճիշտ է հասկացել դրանց իմաստը: Բանն այն է, որ մեծերի և երեխաների հասկացական ապարատը տարբերվում է, մոտ և նույն իմաստն ունեցող բառը կամ արտահայտությունը երեխայի համար կարող է այլ նշանակություն ունենալ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համոզվել, որ մասնագետն ու երեխան նկատի ունեն նույնը և իսկապես հասկանում են իրար:

Փակ հարցերը խոչընդոտում են հարցազրույցի հետագա զարգացումը, ուստի դրանց պետք է դիմել ոչ հաճախակի և միայն ճշտումներ կատարելու համար: Հարցազրույցի ժամանակ շատ կարևոր է լսելու հմտությունը: Անհրաժեշտ է խուսափել հետևյալ սխալներից՝ զրուցակցին ընդհատելուց, հապճեպ եզրակացություններ ու առարկություններ անելուց, անտեղի խորհուրդներ տալուց և այլն: Զրույցի ընթացքի վրա մեծապես ազդում են խոսքի արագությունը, հնչերանգը, ժեստերի կիրառումը: Անհրաժեշտ է խոսել զրուցակցի տեմպին համապատասխան (սա հատկապես պարտադիր է երեխաների դեպքում), կիրառել բաց ժեստեր՝ ձեռքերը առջևում, առանց խաչելու, բաց ափերով:

Հարցերը կարող են լինել նաև *ուղղակի* և *անուղղակի*: Առաջինը կիրառվում է այն ժամանակ, երբ անհրաժեշտ է իմանալ հարցվողի կարծիքը: Այն դեպքերում, երբ կարիք կա ուսումնասիրելու նրա բնավորությունը, ինքնագնահատականը, դրդապատճառները, ներհոգեկան այլ առանձնահատկություններ կամ խնդիրներ, նախընտրելի է երկրորդը: Նշված դեպքում շատ օգտակար է նաև ընտրություն պարունակող խնդիրների կամ իրավիճակների առաջադրումը. որպես պատասխան՝ հարցվողը կարող է նկարագրել, թե ինչպես կլուծի այն

կամ ինչպես կվարվի այս կամ այն իրավիճակում: Այսպես, ճիշտ չէ երեխային ուղղակիորեն հարցնել, թե ծնողներից ում է նախընտրում, սակայն կարելի է հարցը ձևակերպել այսպես՝ ճամփորդության մեկնելիս ինքնաթիռում մեկ ազատ տեղ մնալու դեպքում ո՞ւմ հետ կգնար՝ հայրիկի՞, թե՞ մայրիկի: Կարելի է պատկերել իրավիճակներ և դրանց վերաբերյալ տալ հարցեր: Օրինակ՝ մայրիկը գնացել է աշխատանքի, ո՞ւմ հետ կմնաս, ի՞նչ կզգաս, ի՞նչ կանես, կամ եթե հայրիկի հետ այգում զբոսանքի ժամանակ հանկարծ տեսնես, որ նա կողքիդ չէ, ի՞նչ կանես, ի՞նչ կզգաս, ի՞նչ կանի հայրիկը, կամ ինչպե՞ս կվարվեն ծնողներդ և դու, եթե հանկարծ բաժակն ընկնի ձեռքիցդ և կոտրվի:

Պրոյեկտիվ հարցերի կիրառումը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ, պատասխանելով հարցին, երեխան նույնանում է ենթադրյալ հերոսի հետ և արտահայտում սեփական ապրումները և վարքի դրդապատճառները: Երեխայի ինքնավերաբերմունքի, ընտանիքի անդամների, բնակվելու վայրի, ուսումնական հաստատության մասին կարծիքի, ծնողների հետ կապվածության ուսումնասիրման և գնահատման համար կիրառական է պրոյեկտիվ հարցազրույցը, որն առանձնանում է հարցերը կառուցելու հատուկ սկզբունքներով: Հարցը կարող է վերաբերել առհասարակ երեխաներին, ծնողներին, մարդկանց: Օրինակ՝ կարելի է հարցնել, թե ինչից են վախենում երեխաները կամ ինչից են տխրում: Հարցեր տալիս կարելի է օգտագործել նաև խաղալիքներ կամ նկարներ: Այսպես, ներկայացվում է իրավիճակ, երբ տղան տնակ է կառուցում, մտնում է քույրիկն ու քանդում, ի՞նչ է անելու տղան: Մյուս դեպքում նկարում պատկերված աղջկա ծնողները վիճել են և հեռացել տնից. ի՞նչ է անելու աղջիկը:

Հարցերի ձևակերպումների ճիշտ ընտրությունը հնարավորություն է տալիս երեխային արտահայտելու այն, ինչն ինքը դժվարանում է բարձրաձայնել:

1. Երեխային բացատրում են, որ տվյալ երևույթը նորմալ է, օրինակ. «Բոլորը երբեմն զայրանում են՝ և՛ մեծերը, և՛ փոքրերը, իսկ դո՞ւ»: Այնուհետև կարելի է պարզաբանել զայրանալու պատճառները թե՛ առհասարակ, թե՛ ծնողների դեպքում:

2. Առաջարկվում է երկու այլընտրանքային տարբերակ, որոնցից յուրաքանչյուրն ընդունելի է: Օրինակ. «Եթե եղբայրդ չարաճճի վարք է դրսևորում, ի՞նքդ կպատժես, թե՞ կպատմես մայրիկին»:

3. Սկզբում դրական հարցադրում է արվում, ապա դրան հետևում է բացասականը, օրինակ. «Դպրոցում ի՞նչն է դուր գալիս, և ի՞նչը՝ ոչ», «Ի՞նչն է դուր գալիս ձեր տանը կամ տատիկի տանը (եթե նախատեսվում է, որ հետագայում պետք է բնակվի այնտեղ), ի՞նչը՝ ոչ»:

4. Հարցը ձևակերպվում է այնպես, որ երեխան կարիք չունենա ժխտելու անցանկալի վարքագիծը կամ իրադարձությունը. այն ներկայացվում է որպես սովորական իրողություն: Օրինակ՝ «Վիճո՞ւմ ես արդյոք եղբորդ հետ» հարցի փոխարեն հարցնում ենք. «Ի՞նչ առիթով եք սովորաբար վիճում դու և եղբայրդ»:

Հարցազրույցը կարելի է կառուցել *կախարդական աշխարհ* ստեղծելու օրինակով: Այսպես, «Պատկերացրո՛ւ՝ դու կախարդական փայտիկ ունես, որը կատարում է բոլոր ցանկություններդ. ո՞ւր կցանկանաս գնալ, ի՞նչ կփոխես քո կյանքում, ի՞նչ կանես մայրիկի, հայրիկի, ընտանիքի այլ անդամների, ընկերներիդ, ուսուցիչներիդ համար, ի՞նչ կանես քեզ համար»:

Հոգեբանական հետազոտության ամենատարածված մեթոդներից են թեստերը: Դրանք աչքի են ընկնում տեղեկության ստացման և մշակման առավել հստակ ընթացքով: Թեստն այնպիսի առաջադրանքների, հարցերի շարք է, որոնք թույլ են տալիս չափել անձի հոգեբանական այս կամ այն որակի զարգացման աստիճանը: Պրոյեկտիվ թեստերը հիմնված են պրոյեկցիայի հոգեբանական մեխանիզմի մեկնաբանության վրա: Անձը, հայտնվելով որևէ իրավիճակում, փորձում է վերափոխել այն իր անհատականությանը համապատասխան, պրոյեկտում է իր հույզերը, պահանջմունքները, դրդապատճառները, վերագրում անորոշ, ենթադրյալ մի նյութի, որը ներկայացվում է նկարի, պատկերի, խորհրդանիշի տեսքով: Հետևաբար այդպիսի ռեակցիաների հիման վրա կարելի է վերակառուցել նրա ներաշխարհը: Պրոյեկտիվ թեստերը հիմնականում դասակարգվում են ըստ հինգ կարևոր սկզբունքների՝ զուգորդական, արտահայտչական, խաղային, նկարչական և պատկերավոր: Առաջարկվում է մեկնաբանել նկարներ, վերլուծել որևէ իրավիճակ, ավարտել անավարտ նախադասություններ, նկարել ըստ առաջադրանքի և այլն: Պրոյեկտիվ մեթոդները բարդ են մեկնաբանման տեսանկյունից և մասնագիտական որակավորում ու փորձ են պահանջում:

Պրոյեկտիվ թեստերը հիմնականում կիրառական են թե՛ մեծերի, թե՛ երեխաների հետ աշխատանքում: Դրանց շնորհիվ հնարավոր է ուսումնասիրել անձնային առանձնահատկությունները, վարքի դրդապատճառները, հոգեվիճակները, միջանձնային շփման յուրահատկությունները, կապվածության բնույթը: Այդպիսի մեթոդիկաներից են՝ «Տուն, ծառ, մարդ», «Ինքնադիմանկար», «Իմ ընտանիքը» ու «Գոյություն չունեցող կենդանի»[33][34], «Մարդը անձրևի տակ»[35] և այլն, որտեղ հետազոտվողին հրահանգ է տրվում նկարելու առաջադրված թեմայով: Ստեղծագործական գործընթացը զուգակցվում է հարցազրույցի հետ պատկերների անհատական նշանակությունն ու իմաստը վերհանելու, հետազոտվողի կյանքի պատմության համատեքստում մեկնաբանելու նպատակով:

«Մարդը անձրևի տակ» մեթոդիկայի նպատակն է ուսումնասիրել արտաքին միջավայրի անբարենպաստ ազդեցությունը: Առաջարկել են Ե. Ռոմանովը և Տ. Սիտկոն՝ հարմարվողական հնարավորությունների գնահատման, սթրեսային իրավիճակների ազդեցությունը ուսումնասիրելու համար: Այն կարող է նպաստել նաև անձի սթրեսակայունության

33 Մանրամասն տե՛ս Արզումանյան Ս. Ջ., Մկրտչյան Ս. Շ., Սարգսյան Վ. Ժ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Երևան, «Զանգակ-97», 2002 թ. էջեր 272-277:

34 Մանրամասն տե՛ս Թեստեր և մեթոդիկաներ, https://www.doctors.am/en/tests-and-methodologies [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

35 Մանրամասն տե՛ս «Психологические цветовые и рисуночные тесты для взрослых и детей», М. А. Шевченко., АСТ, Москва, 2015, էջ 23:

առանձնահատկությունների բացահայտմանը: Խորհրդանիշի միջոցով վերարտադրելով սթրեսային իրավիճակը՝ հնարավորություն է ստեղծվում դատելու անձի՝ դժվարությունների հանդեպ վերաբերմունքի և դրանց հաղթահարման միջոցների մասին: Այս մեթոդիկան բացահայտում է մարդու ներքին ռեսուրսները և անբարենպաստ իրավիճակը հաղթահարելու ունակությունները:

Կարևոր է նաև երեխայի և ծնողների միջանձնային փոխհարաբերությունների ուսումնասիրությունը: Ընտանիքի անդամների հետ հարաբերությունները, դրանց բնույթը, երեխայի վերաբերմունքը յուրաքանչյուր անդամի նկատմամբ, ծնողների հոգեբանական ազդեցության առանձնահատկությունները կարելի է ուսումնասիրել և բացահայտել հետևյալ մեթոդիկաների օգնությամբ՝ «Ութգույնանի ծաղիկ»[36], Դյուս-Դեսպերտի հեքիաթներ[37], «Անավարտ նախադասություններ»[38], Ն. Կեդրովայի «Կենդանի տուն»[39] և Է. Էյդեմիլլերի «Ընտանեկան սոցիոգրամմա»[40], Ռենե Ժիլի «Միջանձնային հարաբերությունների համակարգում կոնֆլիկտային ոլորտների բացահայտում»[41], Ե. Բենեի, Դ. Անտոնիի «Ընտանիքում հուզական հարաբերությունների ախտորոշում»[42] և այլն: Ռենե Ժիլի պրոյեկտիվ մեթոդը ուղղված է երեխայի սոցիալական հարմարման աստիճանը, միջանձնային հարաբերությունների ոլորտը և դրանց առանձնահատկությունները, ներընտանեկան հարաբերությունների ընկալումը, ինչպես նաև նրա վարքի բնութագրական առանձնահատկությունները ուսումնասիրելուն: Տվյալ մեթոդիկան թույլ է տալիս բացահայտել միջանձնային հարաբերություններում կոնֆլիկտային գոտիները՝ ազդելով դրանց վրա և նպաստելով երեխայի անձի զարգացմանը: Թեստի արդյունքում ստացված հոգեբանական նյութը պայմանականորեն բաժանում են երկու մասի. փոփոխականների մի մասն ուղղված է երեխայի՝ այլ անձանց հետ միջանձնային հարաբերությունների բնութագրերի ախտորոշմանը, իսկ մյուս մասը՝ երեխայի վարքի բնութագրերի ախտորոշմանը:

Ինքնագնահատականի առանձնահատկությունները, երեխայի ինքնընկալումը, ինքնագնահատականի համարժեքությունը, իր մասին պատկերացումները, այլ մարդկանց՝ իրեն տրվող գնահատականները

---

36 Մանրամասն տե՛ս «Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց», Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷԼԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2018 թ, էջեր 73, 84:

37 Մանրամասն տե՛ս նույն տեղում:

38 Մանրամասն տե՛ս «Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց, Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷԼԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2019 թ, էջ 20:

39 Մանրամասն տե՛ս «Դեռահասների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց», Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷԼԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2018 թ. էջեր 54, 61:

40 Մանրամասն տե՛ս նույն տեղում:

41 Մանրամասն տե՛ս Ռենե Ժիլի մեթոդիկան, https://vsetesti.ru/218/ [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

42 Մանրամասն տե՛ս Практикум по психологической диагностике семейных отношений: Учебно-методический комплекс. – Мн.: БГПУ им. М. Танка, 2002, էջ 296:

ուսումնասիրելու համար նպատակահարմար է կիրառել «Աստիճան» մեթոդիկան[43], երեխայի հուզական վիճակը ախտորոշելու նպատակով՝ «Հոգու թռչուն»[44], «Կակտուս»[45], Փիփ Ուիլսոնի «Ծառ»[46], Է. Վագների «Ջեռի թեստ»[47], Մ. Ա Պանֆիլովայի «Վախեր տնակում»[48], Թեմմլի, Դորկիի, Ամենի «Տագնապայնության թեստ», «Կյանքի քարտեզ»[49] և այլ մեթոդիկաներ:

Թեմմլի, Դորկիի, Ամենի «Տագնապայնության թեստ»[50] մեթոդիկայի նպատակն է բացահայտել երեխաների տագնապայնության արտահայտման մակարդակը, հուզական հարմարվողականությունը և վերաբերմունքը այս կամ այն սոցիալական իրավիճակի նկատմամբ: Այն տեղեկություն է տալիս նաև երեխայի միջանձնային փոխհարաբերությունների մասին:

Երեխաների հետ տարվող հոգեբանական աշխատանքների կազմակերպման համար կիրառական մեծ նշանակություն ունի հոգեախտորոշիչ մեթոդների և մեթոդիկաների համադրության մոդելը: Երեխաների հոգեբանական և անհատական առանձնահատկությունների, հոգեվիճակների, վարքային նորմատիվության, ինքնագնահատականի, հուզական հակազդումների արտահայտվածության աստիճանի ախտորոշման համար նախատեսված թեստերի հավաքակազմը ներառում է ինչպես պրոյեկտիվ, հարցարանային, այնպես էլ զրույցի և դիտման մեթոդները, որոնց համալիր կիրառումը նպաստում է ախտորոշման արդյունքների հուսալիության բարձրացմանը և հետազոտվողի մասին ընդգրկուն տեղեկություն ստանալուն:

---

43 «Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց», Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷՂԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2019 թ., էջ 24:

44 Մանրամասն տե՛ս Ս. Սեդրակյան, Ա. Ղազարոսյան, Ն. Հակոբյան, Հոգեբանական աշխատանքները ուսումնական հաստատություններում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, «Ուրարտու» համալսարան, 2016 թ., էջ 25:

45 Մանրամասն տե՛ս Панфилова М. А., Игротерапия общения: Тесты и коррекционные игры. Практическое пособие для психологов, педагогов и родителей. -М.: «Издательство ГНОМиД», 2001, էջ 54:

46 Մանրամասն տե՛ս «Ծառ» թեստը, http://www.vashpsixolog.ru/psycho-diagnostic-school-psychologist/123-projective-tests-of-personality-research/2685-2018-08-25-08-23-15 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

47 Մանրամասն տե՛ս «Դեռահասների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց, Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷՂԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2018 թ., էջ 33:

48 Մանրամասն տե՛ս Панфилова М, А. Игротерапия общения: Тесты и коррекционные игры. Практическое пособие для психологов, педагогов и родителей. -М.: «Издательство ГНОМиД», 2001, էջ 58:

49 «Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց», Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷՂԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2018 թ., էջ 76:

50 Մանրամասն տե՛ս Практикум по возрастной психологии, Под ред. Л.А. Головей, Е.Ф. Рыбалко. – СПб.: «Речь», 2001, էջ 271:

ՏՆԱՅՑԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Տնայցը ընտանիքի իրավիճակի, ռիսկայնության (կարիքավորության) աստիճանի հստակեցման և գնահատման գործիք է, որը կարող է օգնել հանձնաժողովի անդամներին՝ շահառուին իր բնական միջավայրում դիտարկելու, նրա անվտանգության կամ պահանջմունքների բավարարման աստիճանը պարզելու, կարիքները սահմանելու և գնահատելու, ընտանիքի վիճակը ճշտելու և հասկանալու համար:

Ներկայացված իրավիճակի ընդհանուր գնահատման և ընտանիքի ռիսկայնության աստիճանի հստակեցման խնդրի շրջանակում տնայցի նպատակն է անձամբ՝ սեփական աչքով տեսնել այն բոլոր հանգամանքները, որոնք վկայում են անձի հիմնախնդրի բնույթի ու խորության մասին: Երբ անձին դիտարկում ենք ընտանիքի շրջանակում, հաճախ պարզվում է, որ նրա խնդիրը նաև ընտանիքի հիմնախնդիրն է: Այսպիսով՝ կա՛մ ընտանիքն է կրում իր մեկ անդամի հիմնախնդրի ազդեցությունը, կա՛մ էլ հիմնախնդիրն է վերաբերում ընտանիքի յուրաքանչյուր անդամին: Օրինակ, երբ անչափահասը զբաղվում է մուրացկանությամբ, գողությամբ կամ մարմնավաճառությամբ, հասարակության պիտակավորումը կրում է ամբողջ ընտանիքը: Նույն կերպ ընտանիքի սոցիալ-տնտեսական դժվարին կացությունը վերաբերում է նրա բոլոր անդամներին: Լինում են հիմնախնդիրներ, որոնց դեպքում երբեմն խիստ անհրաժեշտ է մեկից ավելի տնայց կատարելը:

Ե՞րբ և ինչո՞ւ են կատարում տնայց

Հանձնաժողովի անդամները տնայց պետք է կատարեն հետևյալ դեպքերում.

- հանձնաժողովի անդամը կատարում է անձի խոցելիության աստիճանի գնահատում,
- հանձնաժողովի անդամն այց է կատարում՝ ստուգելու այն տեղեկության իսկությունը, որը ստացել է դեպքի մասին ահազանգողի բանավոր հայտարարությամբ, փաստաթղթերով կամ այլ կառույցի միջոցով,
- հանձնաժողովի անդամը ցանկանում է դիտարկել և ըմբռնել, թե ինչպես է ռիսկային ընտանիքը ընկալում իր խնդիրը և տեսնում դրանից դուրս գալու ելքը,
- կա վերահսկողության իրականացման անհրաժեշտություն,
- պետք է պարզել կայացված որոշման նպատակահարմարությունը և բավարար լինելու աստիճանը,

- հանձնաժողովի անդամը պետք է գնահատի տվյալ ընտանիքի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Տնայցի ընթացակարգը

Տնայցի իրականացման ընթացակարգը ներառում է քայլերի այնպիսի հաջորդականություն, որը նպաստում է վերջինիս արդյունավետ իրականացմանը: Այն բաղկացած է հետևյալ փուլերից՝

1. նախապատրաստական աշխատանքներ,

2. բուն տնայց,

3. արդյունքների ամփոփման և եզրակացության շարադրման քայլեր:

Այս փուլերից յուրաքանչյուրը շատ կարևոր է տնայցի հաջող իրականացման համար, և դրանցից որևէ մեկի ոչ լիարժեք կատարումը բացասաբար կանդրադառնա տնայցի ընդհանուր արդյունքի վրա:

Տնայցի նախապատրաստումը

Նախապատրաստական փուլը կարևորվում է հանձնաժողովի անդամի վերապատրաստմամբ: Ընդ որում՝ այն անցկացվում է մի քանի ուղղություններով, որոնց մանրամասն կարող եք ծանոթանալ ստորև:

Մասնագիտական: Սա կենտրոնանում է տնայցի նպատակի, առաջադրվող հարցերը և տեղեկությունները հավաքելու ձևի վրա: Այս փուլում հանձնաժողովի անդամը պետք է տիրապետի աշխատանքային գործիքին՝ հարցաթերթին, հասկանա դրա էությունը, տրամաբանական կառուցվածքը, լրացնելու ձևը և ակնկալվող պատասխանների բնույթը:

Մշակութային: Սա նշանակում է, որ հանձնաժողովի անդամը քիչ թե շատ պետք է ծանոթ լինի հետազոտվող ընտանիքներին, նրանց ենթամշակույթին. դա մասնագետին հնարավորություն կտա ավելի ճիշտ ըմբռնելու և հասկանալու իրավիճակը:

Հոգեբանական: Անհրաժեշտ է, որ հանձնաժողովի անդամը նախքան տնայց կատարելը հոգեբանորեն պատրաստ լինի ընտանիք մտնելուն, մարդկանց լսելուն, ճիշտ դիտարկումներ անելուն և տեղեկություններն օբյեկտիվորեն ներկայացնելուն: Պետք է իմանալ, որ

հետազոտվող յուրաքանչյուր ընտանիք յուրահատուկ է. նրան չպետք է վերաբերվել որպես հետազոտված մյուս ընտանիքների շարունակություն ու տնայց կատարել որոշակի նախատրամադրվածությամբ՝ պատրաստի տեսակետի առկայությամբ:

Տնայցի իրականացման հիմնական մեթոդը հարցազրույցն է: Որակական հարցազրույցներում տրվող հարցերը պետք է լինեն կարճ և պարզ, ինչպես նաև միանշանակ և հարցվողի համար հասկանալի լեզվով ձևակերպված:

Հարցազրույցի ընթացքում մասնագետը որևէ վերաբերմունք չպետք է արտահայտի պատասխանների նկատմամբ: Զրույցը պետք է կազմակերպվի այնպես, որ պատասխանողն իր հերթին անհարմար չզգա ճշմարտությունն ասելիս: Ընտանիքի հիմնախնդիրների բնույթի վերաբերյալ առավել համակարգված տեղեկություններ ստանալու համար կարելի է հարցազրույցը վարելիս ներառել չափանիշային կամ բնութագրական այն բաժինները, որոնք կարող են ուսումնասիրվել տնայցի ընթացքում:

Ցանկալի է նաև հաշվի առնել հետևյալ կետերը՝

1. ընտանիքի մարդկային ռեսուրսները, կազմը,
2. բնակարանային պայմանները,
3. կոմունալ-կենցաղային պայմանները և բնակարանի օգտագործելիությունը,
4. բնակարանի կահույքը և մաշվածությունը,
5. բնակարանի և ընտանիքի սանիտարահիգիենիկ պայմանները, դժվարությունները,
6. ընտանիքի ապրուստի միջոցները, եկամտի աղբյուրները,
7. ընտանիքի տնտեսական ակտիվության ձևերը և սպասումները,
8. ընտանիքի սննդապահովման վիճակը,
9. առողջապահական ծառայությունների մատչելիությունը,
10. կրթության մատչելիությունը,

11. հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները,

12. սոցիալական շփումները,

13. տնայցի արդյունքների ամփոփումը և եզրակացության կազմումը:

Տնայցի ժամանակ հավաքած տեղեկությունների վերլուծության համար հիմք կարող է դառնալ սղագրված, մտապահված և ձայնագրված նյութը: Կարելի է կատարել երկու տեսակի՝ համառոտ և ուղղակի դիտարկման գրառումներ:

Համառոտ գրառումները կատարվում են տնայցի ընթացքում, երբ հետազոտողը հարցազրույցին զուգահեռ որոշ նշումներ է անում հարցաթերթում: Այս գրառումների հիմքում հարցվողների բանալի բառերը կամ համառոտ նախադասություններն են, ինչը հետազոտողին հնարավորություն է տալիս մտապահելու ամբողջ տեղեկությունը:

Ուղղակի դիտարկման գրառումները կատարվում են ընտանիքից դուրս գալուց անմիջապես հետո: Սա համառոտ գրառման վերծանված և ավելի ամբողջական տեսակն է: Ամփոփումը տվյալ ընտանիքի դժվարին վիճակի գնահատումն է՝ մասնագետի տեսածի և լսածի համադրմամբ: Այդ տեղեկությունները կարելի է դասակարգել երկու խմբի՝ խորացնող՝ բացասաբար ազդող, և մեղմող: Սրանց համադրումը կհուշի, թե ինչ դեր կարող է ունենալ միջամտությունը տվյալ ընտանիքի համար:

Շատ կարևոր է, որ հանձնաժողովի անդամը կարողանա ամբողջապես ներկայացնել տվյալ ընտանիքի սոցիալ-տնտեսական պատկերը և հիմնավորված եզրակացություն տալ: Այդ պատճառով խորհուրդ է տրվում յուրաքանչյուր ընտանիքի եզրակացությունը գրել կա՛մ նույն օրը, կա՛մ հաջորդ օրը առավոտյան, երբ տպավորությունները և հիշողությունները դեռևս թարմ են: Եզրակացությունը գրվում է ինչպես օբյեկտիվ տեղեկությունների՝ մասնագետի տեսածի և լսածի, այնպես էլ սուբյեկտիվ տպավորությունների համադրության հիման վրա: Այն պետք է լինի ամբողջական, մտքերը՝ տրամաբանորեն շաղկապված և հիմնավորված, ինչը նշանակում է, որ կարդացողը պետք է հասկանա, թե ինչպես և ինչի հիման վրա է մասնագետը հանգել այդ եզրակացությանը: Այդ պատճառով խորհուրդ է տրվում, որ եզրակացության մեջ օգտագործվեն հարցաթերթի բոլոր բաժինները բնութագրող հիմնական տեղեկությունները, որոնք հանգեցրել են նման հետևության:

Սովորաբար տնայցի անմիջական ազդեցությամբ գրված եզրակացությունն ավելի շատ զգացմունքային է լինում, քան պրոֆեսիոնալ: Արժի ամփոփումը և եզրակացությունը գրանցել օրվա վերջում կամ հաջորդ օրվա սկզբում, երբ արդեն անցել է անմիջական տպավորությունը: Միևնույն ժամանակ խորհուրդ չի տրվում շատ հետաձգել, քանի որ էական հանգամանքները կարող են մոռացվել: Այսպիսով, եզրակացությունը ստացած տեղեկությունների համակարգված և համառոտ շարադրումն է ժամանակային և պատճառահետևանքային հիմնավորմամբ, այն փաստարկների մանրամասն

շարադրմամբ, որոնց հիման վրա, մասնագետի կարծիքով, գնահատվում է ընտանիքի հիմնախնդիրը: Ազնիվ և պրոֆեսիոնալ գնահատումը, բացի որակումներից, պարունակում է նաև հետևություններ և առաջարկություններ այլ անհրաժեշտ միջամտությունների վերաբերյալ: Բարեխիղճ մասնագետը անպայման հասցեագրում է նշված հետևություններն ըստ հասցեատերերի:

Այսպես, եթե ընտանիքի կարիքավորության գնահատման ընթացքում հայտնաբերվել է, որ ընտանիքն ունի տեղեկության պակաս, օրինակ, թե ինչպես և որտեղից ձեռք բերել հաշմանդամության օժանդակ սարքեր, կամ որտեղ են գործում աջակցող ծառայություններ, ապա կարելի է տնայցի ավարտին հստակ տեղեկություն հաղորդել նրան հուզող որոշակի հարցերի վերաբերյալ և/կամ համապատասխան ծառայություններին տեղեկացնել ընտանիքի յուրահատուկ կարիքների մասին:

Հետազոտողի դիրքը հարցազրույցի ընթացքում: Շատ կարևոր է նաև, թե որտեղ կնստի մասնագետը հարցազրույցի ժամանակ: Խորհուրդ է տրվում նստել հիմնական հարցվողին դեմ առ դեմ. դա թույլ կտա մշտապես տեսողական կոնտակտ պահպանել նրա հետ: Եթե առաջարկված դիրքը հարմար չէ այդ տեսանկյունից, ապա անհրաժեշտ է բաղաբավարի խնդրել և որևէ պատճառաբանությամբ տեղափոխվել: Զրուցելիս հայացքը պետք է ուղղված լինի հարցվողին: Նա պետք է զգա, որ մասնագետը հետաքրքրված է իր պատասխաններով և ճիշտ է հասկանում իրեն:

Տնայց իրականացնողներին առաջադրվող պահանջները

Ինչպե՞ս ներկայանալ: Պետք է գործածվեն ամենապարզ բառերը: Ավելի հարմար է ներկայանալ որպես հանձնաժողովի անդամ, որը եկել է ծանոթանալու տվյալ խնդրին և հասկանալու այն:

Տնայցի իրականացման ժամանակ հանձնաժողովի անդամը չպետք է ֆորմալ տարածություն պահպանի իր և հարցվողի միջև: Տվյալ պարագայում նա չեզոք չէ, այլ հանդես է գալիս որպես հարցազրույցի մասնակից, և նրա անհատական, հուզական, մշակութային առանձնահատկություններն իրենց ազդեցությունն են ունենում զրույցի վրա: Այդ տեսանկյունից տնայցի հաջողությունը մեծապես կախված է հետազոտողի անհատական հատկանիշներից և փորձից: Տնայցի նպատակը շահառու ընտանիքի վիճակը ցուցադրելը և մեկնաբանելն է, ուստի հանձնաժողովի անդամը պետք է խուսափի ճնշում գործադրելուց, քանի որ այդ դեպքում գերիշխող կլինի ոչ թե հարցվողի, այլ իր կարծիքը:

Տնայց իրականացնողի նկատմամբ առաջադրվող պահանջները հետևյալն են.

- *Թեմայի վերաբերյալ իրազեկություն:* Հետազոտող մասնագետը պետք է բաջատեղյակ լինի հետազոտվող խնդրից, դրա տարբեր կողմերից, որպեսզի կարողանա հարցազրույց վարել:

- *Համակարգված և կառուցվածքային մոտեցում:* Սա նշանակում է, որ մասնագետը պետք է լավ պատկերացնի հարցազրույցի ընթացակարգը: Նա պետք է կարողանա ներկայացնել հարցազրույցի նպատակը, ճիշտ անցումներ կատարել և ուղղորդող հարցեր տալ:

- *Պարզ և հասկանալի խոսք ու ձևակերպումներ:* Մասնագետը պետք է տա պարզ, հասկանալի, հեշտ և կարճ հարցեր: Չպետք է գործածի գիտական լեզու, պետք է խոսի հարցվողի մայրենի լեզվով:

- *Քաղաքավարություն և էթիկա:* Մասնագետը պետք է թույլ տա, որ հարցվողն ավարտի իր միտքը: Նա պետք է լինի համբերատար և խրախուսի այնպիսի կարծիք, որն ընդունված կամ տարածված չէ, ինչպես նաև շոշափի խնդրի զգացմունքային կողմերը:

- *Զգայունություն:* Մասնագետը ակտիվորեն պետք է լսի այն, ինչ ասվում է, և ըմբռնի հարցվողի խոսքի իմաստային երանգները:

- *Բաց լինելը:* Մասնագետը պետք է բաց լինի ասվածի հանդեպ, որպեսզի կարողանա բացահայտել եզրակացության համար կարևոր նշանակություն ունեցող խնդրի նոր կողմերը: Նա չպետք է ունենա կանխակալ կարծիք, քանի որ դա կխանգարի նոր տեղեկության ընկալմանը: Տեղեկությունները զտելիս մասնագետը պետք է շատ զգույշ լինի, որպեսզի հանկարծ բաց չթողնի արժեքավոր տվյալներ:

- *Ուղղորդում:* Մասնագետը միանշանակ պետք է իմանա, թե ինչ է ուզում հետազոտել, բացահայտել, և ողջ հարցազրույցը տանի այդ ուղղությամբ: Նա պետք է վերահսկի հարցազրույցի ընթացքը, անհրաժեշտության դեպքում մեղմ և քաղաքավարի ընդհատի հարցվողին կամ էլ խրախուսի նրան:

- *Քննադատական մոտեցում:* Մասնագետը քննադատաբար պետք է վերաբերվի ստացվող տեղեկությանը, այսինքն՝ նա չպետք է միանշանակ ընդունի այն ամենը, ինչ ասում է հարցվողը, այլ փորձի պարզել դրա հավաստիությունը և հուսալիությունը: Դա, սակայն, չի նշանակում, որ հարցազրուցավարը կասկածանքով պետք է մոտենա հարցվողի խոսքին և փորձի «հարցաքննել» նրան: Քննադատական մոտեցումը ենթադրում է հարցվողի դատողություններին առնչվող որոշակի նկարագրությունների, օրինակների բացահայտում, պարզաբանում, ինչպես նաև տրամաբանական հակասությունների բացառում:

- *Հիշողություն:* Մասնագետը պետք է ունենա լավ հիշողություն, կարողանա հիշել այն ամենը, ինչ ասվել է հարցազրույցի ընթացքում, որպեսզի հետագայում ավելի մանրամասնի այն զրուցակցի հետ:

- *Մեկնաբանում:* Մասնագետը պետք է կարողանա ճշտել և ընդարձակել հարցվողի դատողությունների մեկնաբանությունը և առաջադրել վարկածներ, որոնք կարող են հարցազրույցի հետագա ընթացքում հաստատվել կամ ժխտվել: Նա պետք է խուսափի իր ներկայությամբ և այցելությամբ անհարկի հույսեր արթնացնելուց՝ բացատրելով,

որ տնայցի գործընթացը գնահատման փուլերից մեկն է, և դեռ պետք է իրականացնել տվյալների համադրում:

- *Կեցվածքի մշակում:* Անկախ այն բանից, թե ինչպիսին է եղել այցելած նախորդ ընտանիքը, և ինչպիսի տպավորություններով է մասնագետն այնտեղից դուրս եկել, նա պարտավոր է մտնել հաջորդ ընտանիք բարեհամբույր կեցվածքով և ժպիտով: Ընտանիքում լինելու ողջ ընթացքում նա պետք է խուսափի քննադատ և կասկածամիտ երևալուց: Հարկավոր է հիշել, որ մասնագետը ոչ միայն դիտարկում է, այլև դիտարկվում, և նրա պահվածքը կարող է որոշիչ լինել հարցազրույցի ընթացքի համար:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԽՀՄ-ները ՀՀ Կառավարության 631-Ն[51] որոշմամբ ունեն նաև մշտադիտարկում և վերահսկողություն իրականացնելու գործառույթներ, որոնք պայմանավորված են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտման, նրանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու, երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման դեպքերի բացահայտման, ինչպես նաև նրանց մահացության, համայնքում անչափահասների թրաֆիքինգի դեպքերի, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառման և տեղավորման, երեխայի՝ խնամատար ընտանիք տեղավորման հանգամանքներով:

Եթե չլինեն համապատասխան մշտադիտարկումներ և վերահսկողություն, ապա նշված գործառույթների իրականացումն անհնարին կլինի: Այսպես, եթե մշտադիտարկում չկատարվի համապատասխան համայնքի ընտանիքներում, ապա այդպես էլ չեն բացահայտվի թրաֆիքինգի ենթարկված, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, օրենքով սահմանված կարգով ծնունդը չգրանցելու դեպքերը: Այդ պատճառով ԽՀՄ-ի դերն այս իրավիճակներում շատ մեծ է. այն ունի ուղղակի պարտավորություններ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկություններ ստանալու դեպքում ԽՀՄ-ն հանձնաժողովի միջոցով ուսումնասիրում է ծնողների, ծնողական խնամքի բացակայության, դրանից զրկվելու, համայնքում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, երեխաների մահացության, համայնքում երեխաների հանդեպ բռնության, թրաֆիքինգի և այլ դեպքեր:

Վերոնշյալ դեպքերի ուսումնասիրությունը ԽՀՄ-ներն իրականացնում են ոստիկանության,

51 Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2016.06.29/50(1230) Հոդ. 603, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152354 [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

առողջապահական հաստատությունների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և սոցիալական պաշտպանություն իրականացնող այլ կառույցների օգնությամբ:

Դատական, քրեակատարողական մարմինները ևս կարող են տեղեկությունների տրամադրման աղբյուր լինել, քանի որ ծնողների ձերբակալության, բանտարկության դեպքերում նրանք իրազեկված են միայնակ մնացած երեխաների մասին:

ԽՀՄ-ի ուշադրության կենտրոնում պետք է լինեն հատկապես այն ընտանիքները, որտեղ թեպետ ծնողներ կան, սակայն բացահայտվել է երեխայի անտեսման փաստ: Նման դեպքերում ԽՀՄ-ն աջակցում է ծնողներին՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունը ընտանիքում պատշաճ կազմակերպելու համար:

Եթե ԽՀՄ-ն համայնքում հայտնաբերել է երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության դեպքեր, ապա պետք է հրատապ տեղեկացնի այդ մասին քաղաքացիական կացության ակտերի գրանցման համապատասխան տարածքային բաժիններին (մարմիններին), միաժամանակ նախաձեռնի այս տվյալների պետական գրանցման գործընթացը:

Ծնողների կամ ազգականների՝ երեխային չխնամելու դեպքեր հայտնաբերելիս ԽՀՄ-ն պետք է հրատապ ապահովի նրա իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև տեղավորման հարցի լուծումը:

Առանց ծնողական խնամքի մնացած և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թվին պատկանող անձանց սկզբնական հաշվառումը և դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմումն իրականացնում է երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը:

ԽՀՄ-ին պարտավոր են տեղեկություններ հայտնել յոթնօրյա ժամկետում նաև դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության և նման այլ հաստատությունների ղեկավարները, որոնց գլխավորած կառույցներում կան առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ:

ԽՀՄ-ները նման դեպքերում պարտավորվում են եռօրյա ժամկետում հետազոտել երեխայի կենսապայմանները և պարզել ծնողական խնամքի բացակայության փաստը: Հաստատվելու դեպքում երեխայի տվյալները պետք է գրանցեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սկզբնական հաշվառման մատյանում և լրացնեն առանց ծնողական խնամքի մնացած երեխայի անձնական քարտը, որի պատճենը երեխայի լուսանկարի հետ պետք է ուղարկեն մարզպետարան (Երևանում՝ Երևանի քաղաքապետարան)՝ երեխային տարածքային հաշվառման վերցնելու համար:

ԽՀՄ-ն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավական կարգավիճակի փոփոխման դեպքում (ծնող(ներ)ի ծնողական իրավունքների վերականգնման, երեխայի որդեգրման և այլն) եռօրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է մարզպետարան (Երևանի քաղաքապետարան):

ԽՀՄ-ի լիազորության մեջ է մտնում նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձևերն ընտրելը (խնամակալ, հոգաբարձու նշանակելը, խնամատար ընտանիքում խնամքի և դաստիարակության հանձնելը)՝ պայմանավորված երեխայի լավագույն շահերի ապահովման սկզբունքով, զարգացման առանձնահատկություններով, երեխայի իրավունքներով և կարծիքով՝ նրա տարիքին և հասունությանը համապատասխան:

Երեխայի տեղավորման ձևի ընտրության հարցում պետք է հնարավորինս ապահովել երեխայի՝ ընտանիքում խնամվելու և դաստիարակվելու իրավունքը՝ նախապատվությունը տալով խնամքի ընտանեկան պայմաններին մոտ ձևերին, մասնավորապես խնամակալությանը (հոգաբարձությանը) և խնամատարությանը: Այդ հնարավորությունների բացակայության դեպքում է միայն դիտարկվում երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն (մանկատուն) տեղավորելու հնարավորությունը:

ԽՀՄ-ն ոստիկանությունից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կրթական և բժշկական կազմակերպություններից առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկություններ ստանալու դեպքում իրականացնում է իրավիճակի ուսումնասիրություն, կազմում երեխայի հայտնաբերման (նրան տեսակցելու) մասին արձանագրություն, կազմակերպում նրա առաջնային բուժզննումը, անհրաժեշտ օգնության տրամադրումը, անհրաժեշտության դեպքում երեխային բժշկական օգնություն տրամադրելու նպատակով կազմակերպում համապատասխան բժշկական հաստատություն տեղափոխելը, այդ մասին տեղեկացնում ՀՀ մարզպետարանին (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկությունը ստացել է այդ մարմիններից:

ԽՀՄ-ները նաև ընդունում են խնամակալություն նշանակելու որոշումներ 14 տարին չլրացած անչափահասների և հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացիների, հոգաբարձության որոշումներ՝ 14-18 տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների վերաբերյալ:

Մինչև համապատասխան որոշում կայացնելը ԽՀՄ-ն կազմակերպում է երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կենսապայմանների հետազոտություն, փաստաթղթային ուսումնասիրություններ, տնայցեր, հարցազրույցներ:

Խնամակալ նշանակելիս ԽՀՄ-ները պետք է հաշվի առնեն խնամակալ (հոգաբարձու) նշանակվող անձի անձնական հատկանիշները, այդ պարտականությունները կատարելու նրա ունակությունները, խնամակալի և երեխայի փոխհարաբերությունները, երեխայի

նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիքի անդամների վերաբերմունքը, ինչպես նաև հնարավորության դեպքում անչափահասի ցանկությունը:

Խնամակալներ կարող են լինել երեխայի մերձավոր ազգականները, ինչպես նաև նրա հետ ազգակցական կապ չունեցող անձինք: Եթե երեխայի ազգականները ցանկանում են դառնալ խնամակալ, ապա նախապատվությունը տրվում է նրանց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի բխում երեխայի շահերից:

ԽՀՄ-ն հսկողություն է իրականացնում խնամակալի և հոգաբարձուի գործունեության նկատմամբ և նախապես մշակված հարցաշարի միջոցով պարբերաբար կատարում նրանց կենսապայմանների ուսումնասիրություն (առնվազն տարեկան երկու անգամ)՝ երեխայի և ընտանիքի մյուս անդամների փոխհարաբերությունների, երեխայի առողջական վիճակի, ընտանիքի սոցիալ-տնտեսական դրության, երեխայի կրթական մակարդակի, վարքի, առաջադիմության և այլնի մասին անհրաժեշտ տեղեկություններ հավաքելով: Ցանկալի է հսկողությունը իրականացնել և այցելությունները կազմակերպել առանց նախազգուշացման:

Այս գործողությունները խիստ կարևոր են, քանի որ հաճախ խնամակալները կամ հոգաբարձուները չարաշահում են իրենց իրավունքները և իրենց գործողություններով վնասում երեխային՝ վերջինիս գույքի նկատմամբ նկրտումներ ունենալով կամ այլ թաքնված շահերով պայմանավորված: Նրանք ձևականորեն և մակերեսային իրացնում են խնամակալի պարտականությունները, սակայն դա չի ծառայում խնամակալ նշանակելու որոշման նպատակին, որը բխում է երեխայի լավագույն շահերից:

ԽՀՄ-ները իրավասու են երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու, ծնողների կամ ընտանիքի անդամների կողմից երեխայի հանդեպ ֆիզիկական, սեռական, հոգեբանական բռնության, անտեսման դեպքերում երեխային վերցնելու ծնողներից կամ խնամակալից, անհապաղ ապահովելու նրա ժամանակավոր տեղավորումը (խնամակալություն, ընտանիքի աջակցության կենտրոն): Այդ գործընթացում ԽՀՄ-ները ակտիվ համագործակցում են ոստիկանության հետ՝ նպաստելով երեխայի լավագույն շահի ապահովմանն ուղղված գործողությունների անխոչընդոտ իրականացմանը՝ այդ թվում հանձնաժողովի անդամի անվտանգությանը:

Նշված դեպքերում յոթնօրյա ժամկետում ԽՀՄ-ները դիմում են դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով:

ԽՀՄ-ները իրավասու են դիմելու դատարան՝ 14-18 տարեկան անչափահասի աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու միջնորդությամբ:

Բացի դատարանում երեխայի խնամքին վերաբերող հարցերին մասնակցելուց՝ ԽՀՄ-ները ներգրավվում են նաև բրեական վարույթում՝ որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, բաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ: Նրանք մասնակցում են նաև այն վարույթներին, որոնք առնչվում են խնամարկյալի գույքի օտարմանը՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու կամ գրավ դնելու գործարքներին, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող գույքի նկատմամբ իրավունքներից հրաժարվելուն, ինչպես նաև նրա գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն, և խնամակալին թույլտվություն, իսկ հոգաբարձուին համաձայնություն տալիս՝ կնքելու այդ գործարքները: Շատ կարևոր է բազմակողմանի ուսումնասիրություն կատարելը, քանի որ երբեմն նման իրավիճակներում երեխային պատկանող բնակարանը օտարելու կամ նվիրելու հետևանքով նա կարող է հայտնվել անօթևանի կարգավիճակում. այստեղ պետք է անպայման հաշվի առնել բոլոր հանգամանքները: ՀՀ-ում արդեն իսկ հայտնաբերվել են նման չարաշահումներ, և հարուցվել են բրեական գործեր: ԽՀՄ-ները նույնպես ներգրավվել են այս վարույթներում:

Եթե ԽՀՄ-ները ստանում են դիմումներ առ այն, որ ծնողները արգելում են երեխային շփվել ազգականների, պապի, տատի հետ, ապա կարող են պարտավորեցնել ծնողներին կամ ծնողին չխոչընդոտել այդ շփումը: Ի տարբերություն նախկին օրենսդրական կարգավորումների՝ ներկայում գործող օրենքով նման վարույթների իրականացումը և որոշման կայացումը վերապահված են ԽՀՄ-ին: Այժմ դատարանները երեխայի ազգականների, տատի, պապի հետ շփման տեսակցության պահանջները բնում են միայն այն դեպքում, երբ մինչև դատարան դիմելը շահագրգիռ անձը (ազգականը, պապը, տատը) դիմել է ԽՀՄ-ին և ստացել ծնողներին պարտավորեցնելու վերաբերյալ որոշում, որը, սակայն, չի կատարվում:

Իր իրավունքները ինքնուրույն իրացնել, պաշտպանել և պարտականությունները կատարել չկարողացող չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով ու համաձայնությամբ ԽՀՄ-ն նշանակում է քաղաքացու օգնականի (պատրոն): Նա վերահսկում է պատրոնի գործունեությունը, դրա մասին պարբերաբար տեղեկություն ստանում այն քաղաքացուց, որի նկատմամբ պատրոնաժ է սահմանվել: Այստեղ ևս վերահսկողությունը և մշտադիտարկումը պետք է լինեն հաճախակի:

ԽՀՄ-ները նաև առնչություն ունեն երեխաների աշխատանքային հարաբերություններին. մասնավորապես մինչև տասնվեց տարեկան անչափահասի հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է նրանց թույլտվությամբ: Այն, սակայն, կարող է լուծվել ծնողներից մեկի, օրինական ներկայացուցիչների, երեխայի առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժշկի կամ աշխատանքի անվտանգության հարցով ծառայողի պահանջով:

Այն դեպքերում, երբ ԽՀՀ անդամի տնայցի արդյունքում պարզվում է, որ տվյալ ընտանիքում երեխայի/ների իրավունքները և շահերը ոտնահարվում են, կամ ծնողները խուսափում են

նրանց դաստիարակությունից և իրավունքների ու շահերի պաշտպանությունից, կամ առկա են այլ հանգամանքներ, որոնց հետևանքով երեխաները փաստացի մնացել են առանց ծնողական խնամքի՝ հայտնվելով կյանքի դժվարին իրավիճակում, և փաստացի առկա են բոլոր հիմքերը երեխային/նրին ընտանիքից առանձնացնելու՝ նրանց լավագույն շահն ապահովելու նպատակով, հարկավոր է նկատի ունենալ, որ երեխաների ժամանակավոր խնամքը կազմակերպվում է ճգնաժամային աջակցության կենտրոններում:

Հայաստանի Հանրապետությունում ներկայում գործում են պետական աջակցության երեք կենտրոններ, որոնք ունեն շուրջօրյա խնամքի կազմակերպման բաղադրիչ՝ նախատեսված վերը նկարագրված ճգնաժամային իրավիճակների համար:

Աջակցության կենտրոնները Սյունիքի, Շիրակի և Լոռու մարզերում են, ընդ որում՝ հարկ է նկատի ունենալ, որ դրանք 24-ժամյա ռեժիմով պատրաստ են ընդունելու երեխային՝ ապահովելով նրա լավագույն շահը:

Վերը նշված կենտրոնների նպատակը երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելումը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրսբերումն է, այդ թվում՝ կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված ժամանակահատվածում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան երեխաներին խնամքի տրամադրումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը, ընտանիքում բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը:

Համաձայն «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ նշված կենտրոններից յուրաքանչյուրը.

1. իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր խնամք,

2. իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընդունելությունը,

3. կազմակերպության սոցիալական աշխատանքի մասնագետից, բժշկից և հոգեբանից կազմված մասնագիտական խմբի միջոցով իրականացնում է երեխայի կենսապայմանների ուսումնասիրություն,

4. երեխայի օրինական ներկայացուցչի հետ կնքում է պայմանագիր կազմակերպությունում երեխային խնամք տրամադրելու վերաբերյալ, ընդ որում՝ 10 տարին լրացած երեխայի դեպքում հաշվի է առնվում նաև նրա կարծիքը,

5. աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին՝ հարմարվելու նոր սոցիալական միջավայրում, ապահովում է ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ,

6. կազմակերպությունում երեխայի ընդունելությունից հետո եռօրյա ժամկետում ապահովում է կազմակերպության սոցիալական աշխատանքի մասնագետի և համապատասխան լիազորություններ ունեցող այլ աշխատողների (հոգեբան, բժիշկ, մանկավարժ և այլն) կողմից երեխայի անհատական սոցիալական ծրագրի կազմումը և դրան համապատասխան՝ երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը,

7. խնամքը տրամադրում է երեխայի գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան,

8. ապահովում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների աջակցության անհատական սոցիալական ծրագրերով կազմակերպությանը վերապահված իրավասությունների շրջանակներում նախատեսված միջոցառումների իրականացումը,

9. կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին տրամադրում է սնունդ և փափուկ գույք՝ ՀՀ Կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշման համապատասխան,

10. ապահովում է կազմակերպությունում խնամք ստացող դպրոցահասակ երեխաների դասապատրաստումը դպրոցական ժամերից հետո,

11. ապահովում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին գրենական պիտույքներով՝ ստեղծագործական ընդունակությունների և նախասիրությունների (նկարել, երգել, պարել, արտասանել և այլն) բացահայտմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու համար՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները,

12. կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին տրամադրում է մասնագիտական կողմնորոշում, աջակցում է նրանց աշխատանքային հմտությունների ձևավորմանը և զարգացմանը,

13. կազմակերպում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը համապատասխան ամբուլատոր բժշկական հաստատությունում,

14. կազմակերպում է կազմակերպությունում խնամվող երեխաների ազատ ժամանցը, այդ թվում՝ մարզական և մշակութային միջոցառումներին, արշավներին, էքսկուրսիաներին երեխաների մասնակցությունը, աջակցում է հոգևոր և մշակութային արժեքներին երեխաների հաղորդակցմանը,

15. ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես

նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններից դուրս մնացած (կամ այդ հաստատություններ չհաճախող) երեխաներին ուսումնական հաստատություններում տեղավորելու և նրանց հաճախելիությունն ապահովելու համար,

16. իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը միտված աշխատանքներ,

17. իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների հոգեբանական վերականգնմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքներ,

18. կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական անհատական ծրագրերի համաձայն՝ աջակցում է նրանց վերականգնողական օգնության տրամադրման և սոցիալական ներառման գործընթացին՝ այդ նպատակով համագործակցելով բուժատեխնիկական հանձնաժողովի, վերականգնողական օգնություն տրամադրող մարմինների և կազմակերպությունների, սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների և բաժինների հետ,

19. կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաներին ըստ անհրաժեշտության տրամադրում է օկուպացիոն թերապիա (վերականգնողական վարժանքներով թերապիա),

20. ըստ անհրաժեշտության իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների խոսքի դժվարությունների շտկման աշխատանքների իրականացում,

21. կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների հետ իրականացնում է միջավայրին հարմարվելուն և ինքնուրույնությունը զարգացնող աշխատանքներ,

22. ծնողավարման, ընտանեվարության հմտությունների ուսուցման, «ծնող-երեխա» փոխհարաբերությունների բացահայտման արդյունքում առկա հոգեբանական խնդիրների լուծման և խորհրդատվական օգնության տրամադրման միջոցով աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին,

23. իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների ընտանիքների, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների ընտանիքներում կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելմանն ու հաղթահարմանն ուղղված աշխատանքներ՝ նպաստելով ընտանիքում բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը,

24. իր իրավասությունների սահմաններում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության աշխատանքներին,

25. իրականացնում է կանխարգելիչ աշխատանքներ՝ ուղղված կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող այլ երեխաների մոտ թափառաշրջիկության, մուրացկանության, վնասակար սովորությունների ձեռքբերման կանխարգելմանը,

26. կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ դաստիարակության դժվարություններ ունեցող, վնասակար սովորություններով, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների նկատմամբ էթիրախավորված աջակցություն՝ ուղղված ընտանիքի հետ սոցիալական կապերի ամրապնդմանը, վնասակար սովորություններից ձերբազատմանը և սոցիալական ներառմանը՝ այդ նպատակով ըստ անհրաժեշտության համագործակցելով նաև «Սոցիալական աջակցության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իր գտնվելու վայրի աջակցող ցանցի և միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի հետ,

27. իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների ընտանիքների, այդ թվում՝ փոխարինող ընտանիքների համար կազմակերպում է ուսուցման դասընթացներ՝ ուղղված քաղաքացիական ակտիվ և արդյունավետ կենսակերպի ձևավորմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, ծնողավարման հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը,

28. իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների ընտանիքների, այդ թվում՝ փոխարինող ընտանիքների համար ձևավորում է ինքնօգնության խմբեր, կազմակերպում և (կամ) տրամադրում է անհատական և խմբային խորհրդատվություններ երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու, նրանց սոցիալական մեկուսացումը կանխարգելելու վերաբերյալ,

29. աջակցում է իր սպասարկման տարածքում բնակվող կենսաբանական այն ընտանիքներին սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի ծառայություններ տրամադրելուն, որոնց երեխաները դաստիարակություն են ստանում խնամատար ընտանիքներում,

30. կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների սոցիալական միջավայրի սուբյեկտներին, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների ղեկավարներին, մանկավարժներին, ընտանիքների և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններին ըստ անհրաժեշտության տրամադրում է խորհրդատվություն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին մասնագիտական սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ,

31. իր սպասարկման տարածքում իրականացնում է ընտանիքների և երեխաների հիմնախնդիրների լուծմանը վերաբերող, երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված հանրային իրազեկման և խորհրդատվական աշխատանքներ,

32. իր իրավասությունների շրջանակներում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներին,

33. վարում է կազմակերպությունում խնամվող երեխաների հաշվառման մատյան, կազմակերպությունում խնամվող յուրաքանչյուր երեխայի համար կազմում է անձնական գործ,

34. երեխային կազմակերպությունում տրամադրվող խնամքը դադարեցնելուց հետո վեց ամսվա ընթացքում այցելությունների կամ հանդիպումների միջոցով պահպանում է կապը երեխայի և նրա ընտանիքի հետ,

35. իրականացնում է կազմակերպության աշխատողների (բազմամասնագիտական թիմի) կարողությունների և հմտությունների զարգացմանն ու փորձի փոխանակմանն ուղղված շարունակական աշխատանքներ,

36. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Ստորև ներկայացվում է աջակցության երեք կենտրոնների վերաբերյալ տեղեկությունը.

Կազմակերպություն	Հասցե	Էլ. փոստ	Ղեկավար, հեռախոս
Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացու 10	shirak.childcarecenter@mlsa.am	Գոհար Յայլոյան 098 90 30 89
Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդի 27	syunik.childcarecenter@mlsa.am	Ռուզաննա Հովհաննիսյան 093 63 23 54
Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Սարկավագի 145բ	zatik.childcarecenter@mlsa.am	Սիրանուշ Անտոնյան 099 88 67 21

Հաշվի առնելով այն, որ բազմաթիվ են դեպքերը, երբ ԽՀՄ-ի ուշադրության տիրույթում են հայտնվում ընտանիքներ, որտեղ խնամք և դաստիարակություն ստացող երեխաները գտնվում են դժվարին իրավիճակում, և բարեբախտաբար անհրաժեշտություն չկա ընտանիքից երեխային հեռացնելու և ապավինելու այլընտրանքային խնամքի որևէ եղանակի՝ ԽՀՀ անդամներն այս պարագայում հարկ է, որ ֆաջատեղյակ լինեն ընտանիքից բաժանման ռիսկի կանխարգելմանը, կյանքի դժվարին իրավիճակի հաղթահարմանն ուղղված միջոցառումներին: 2020 թվականից պետության կողմից լիազորությունների պատվիրակման արդյունքում հասարակական կազմակերպությունների միջոցով իրականացվում են համանման միջոցառումներ:

«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակում իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների՝ ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու, երեխայի (ընտանիքի) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով գնահատված սոցիալական կարիքների հիման վրա համարժեք ծառայությունների տրամադրում:

Միջոցառման նպատակն է նպաստել երեխաների սոցիալ-հոգեբանական, կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալ-վերականգնողական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների սոցիալ-վերականգնողական, ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և կամ նրանց սոցիալական մեկուսացումը՝ խթանելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացումը:

«ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» միջոցառման շրջանակում իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ հաստատությունում հայտնվելու ռիսկի կանխարգելում, հաստատությունից դուրսբերում, ինչպես նաև ընտանիքների հզորացում երեխաների՝ ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով:

«ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» միջոցառման շրջանակում միջոցառման շահառու երեխաների ընտանիքներին տրամադրվում է բնաիրային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

Բնականաբար նմանօրինակ միջոցառումները ըստ կարիքի ենթակա են փոփոխման և պարբերաբար կարող են փոփոխվել, սակայն հաշվի առնելով այն, որ պետության բաղաքականության հիմնական նպատակներից է երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ ԽՀՄ-ները պետք է մշտապես իրազեկ լինեն իրականացվող միջոցառումներին, իրենց ներդրումն ունենան երեխաների, ընտանիքների շրջանում դրանց վերաբերյալ իրազեկումների, ինչպես նաև ուղղորդումների տեսանկյունից ևս:

2022 թվականին պետության կողմից պատվիրակման միջոցով ցերեկային խնամքի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մասին տեղեկությունը՝ ստորև.

Կազմակերպություն	Կազմակերպության ղեկավար	Հեռախոս	Ծառայության տրամադրման մարզ
«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ	Անտոնյան Միրա	**060540150**	Տավուշ
Վորլդ Վիժն	Ռաֆֆի Դուդակլեան	**060491010**	Տավուշ, Լոռի, Գեղարքունիք
Ընտանիք և համայնք	Քնարիկ Գարանֆիլյան	**099631970**	Շիրակ, Արմավիր
Հայկական Կարիտաս	Գագիկ Տարասյան	**031257201**	Շիրակ
Առաքելություն Հայաստան	Երվանդ Մխիթարյան	**010444792**	Արարատ, Գեղարքունիք
ՍՕՍ մանկական գյուղեր	Սպարտակ Սարգսյան	**060533355**	Կոտայք
«Գործընկերություն և ուսուցում»	Արտաշես Տոռոզյան	**094201817**	Սյունիք
Մանկական զարգացման հիմնադրամ	Լուսինե Սիմոնյան	**096004146**	Վայոց ձոր
Արմավիրի զարգացման կենտրոն	Նարինե Առաքելյան	**094502039**	Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Ֆիզիկական բռնությունը տարբերակելու հիմնական նշաններ

Երեխայի վարք	Մեծահասակի վարքի դրսևորումներ	Ֆիզիկական վիճակ	Հուզական դրսևորումներ
• Փախուստներ • Ագրեսիա • Հիպերակտիվություն • Զգուշություն ֆիզիկական կոնտակտից • Խուսանավում • Ինքնավնասող մտքեր և գործողություններ • Ապագայի տեսլականի կորուստ • Մանիպուլյացիոն վարք • Կախվածություններ	• Տրված բացատրությունները համարժեք չեն վնասվածքների բնույթին: • Անձը թաքցնում է այն, • փորձում շեղել ուշադրությունը, նշանակություն չտալ, չի կարեվորում կատարվածը, հրաժարվում է քննարկելուց:	• Հետքեր, սպիներ, փոքր վնասվածքներ՝ քերծվածքներ, ճանկռվածքներ, կապտուկներ, այրվածքներ, կոտրվածքներ: • Այնպիսի վնասվածքների տեղերը, որոնք հուշում են դրանց պատահական չլինելու հավանականության մասին, օրինակ՝ գլխի վնասվածք:	• Դեպրեսիա • Տագնապ • Ցածր ինքնագնահատական • Ցավի հանդեպ արձագանքի բացակայություն • Ձայրույթ • Ապատիա • Վախ • Հուզական անզգայացում, հույզերը արտահայտելու անկարողություն

Հավելված 2

Անտեսումը տարբերակելու հիմնական նշաններ

Անտեսումը տարբերակելու հիմնական նշաններն են.

- ֆիզիկական աճին, քաշին առնչվող խնդիրներ, հյուծվածություն կամ գիրություն,
- զարգացման խանգարումներ, զարգացման որևէ փուլի, դրան բնորոշ հմտությունների, նորագոյացությունների ձևավորման ուշացում (տե՛ս Հավելված 4), խոսքի զարգացման խնդիրներ, սոցիալ-հուզական հմտությունների պակաս,
- հաճախակի հիվանդացություն, հոսպիտալացում, դժբախտ պատահարներ, հիգիենայի կանոնների անտեսում,
- կապվածության նվազում, օտարացում, խուսափում,
- ագրեսիա, գերակտիվություն, իմպուլսիվություն, կոնֆլիկտայնություն,
- ցածր ինքնագնահատական, ուսուցման դժվարություններ, կենտրոնացման, հիշողության, մտածողության խնդիրներ,
- ինքնավնասումներ, կախվածություններ, օրինախախտումներ:

Հուզական բռնությունը տարբերակելու հիմնական նշաններ՝

- քնի, ռեժիմի, սննդային վարքի խանգարումներ,
- վախ, տագնապ, նյարդայնություն,
- ապատիա, անտարբերություն, դեպրեսիա,
- տրամադրության հաճախակի տատանումներ, անկայուն հուզականություն,

- դժվարություններ մեծահասակների և հասակակիցների հետ հարաբերություններում, անհանգիստ, խուսափողական վերաբերմունք, անբավարար սոցիալական հմտություններ,
- խոսքի, իմացական գործընթացների զարգացման խնդիրներ, նահանջ (ավելի փոքր տարիքին բնորոշ վարքի դրսևորում),
- անուշադրություն, ուսուցման դժվարություններ,
- օրինազանց վարք, գողություններ, փախուստներ,
- ինքնավնասում, ալկոհոլ, թմրանյութեր:

Հավելված 3

Սեռական բռնությունը տարբերակելու հիմնական նշաններ[52]

Երեխայի վարք	Ֆիզիկական վիճակ	Հուզական դրսևորումներ
• Տարիքին անհամապատասխան հետաքրքրություն իր և ուրիշների սեռական օրգանների հանդեպ • Ոգելից խմիչքի, թմրանյութերի օգտագործում • Թափթփվածություն, փնթիություն • Սննդային վարքի խանգարում • Անօգնականություն • Գաղտնապահություն • Ինքնամեղադրանք • Թվացյալ անհոգություն • Հասակակիցների հետ շփման դժվարություններ • Քնի խանգարումներ • Սոցիալական կարգավիճակի կորուստ	• Սեռական օրգանների կամ բերանի շրջանում վնասվածքներ • Վարակ, ցավ, վերքեր, այտուցներ, արյունահոսություն, բորբոքումներ • Սեռավարակներ, • սերմնահեղուկի առկայություն հեշտոցի կամ ուղիղ աղիքի մեջ, • հղիություն	• Անհանգստություն/ լարվածություն • Դեպրեսիա • Տագնապ • Մեկուսացում • Ցածր ինքնագնահատական • Վառ արտահայտված հուզական արձագանք • Հուզական անկայունություն

52 Մանրամասն տե՛ս Guidelines for Medico-Legal Care Victims of Sexual Violence, Child sexual abuse, https:()www.who.int/violence_injury_prevention/resources/publications/en/guidelines_chap7.pdf [հասանելի է 01.03.2022-ի դրությամբ]:

Հավելված 4

Երեխայի զարգացման հիմնական առանձնահատկություններն ու ձեռքբերումներն ըստ տարիքային փուլերի

Փուլ, տարիք	Առաջատար գործունեություն	Սոցիալական իրավիճակ	Նորագոյացություններ
Մանկիկային (0-1)	Հուզական շփում	Մեծահասակը միջնորդ է երեխայի և արտաքին աշխարհի միջև, երեխան ընդօրինակում է մեծերին:	Կապվածության ձևավորում, առարկայական գործողություններ/մանիպուլյացիա:
1 տարեկանի ճգնաժամ		Ընդլայնվում է աշխարհի ճանաչման հնարավորությունը, ակտիվանում է հետաքրքրասիրությունը:	Քայլելու ունակություն, առարկայաճանաչողական գործունեություն, առաջին կամային դրսևորումներ աֆեկտների տեսքով:
Վաղ մանկություն (1-3)	Առարկայական գործունեություն	Իրադրային-գործնական շփում մեծերի հետ, հուզական շփում հասակակիցների հետ: Մեծահասակը՝ որպես վարքային կանոնների կրող, հուզականորեն քաջալերում է երեխային, տալիս խոսքային բացատրություններ:	Առարկայական գործունեության զարգացում, գործիքների տիրապետում, «ես»-ի և ինքնագնահատականի, խոսքի ձևավորում, մտածողության, հիշողության, ուշադրության զարգացում:
3 տարեկանի ճգնաժամ	Հաղորդակցում, խաղ	Իրեն շրջապատից առանձնացնելու, համեմատելու կարողություն	Ինքնուրույնություն. խոսում է առաջին դեմքով, ինքնահաստատվում: Ինքնակամություն. ձգտում է ամեն ինչ ինքնուրույն անելու, ստեղծարարության, երևակայության զարգացում:

Փուլ, տարիք	Առաջատար գործունեություն	Սոցիալական իրավիճակ	Նորագոյացություններ
Նախադպրոցական (3-6)	Խաղ	Ճանաչողական, անձնային շփում մեծահասակների և հասակակիցների հետ, սոցիալական միջավայրում կողմնորոշվելու, ինքնասպասարկման կարողություն, պարտականությունների ձեռքբերում. հաշվի է առնում շրջապատի վերաբերմունքը:	Գիտակցում է սեփական վարքը, գործունեության դրդապատճառները դասակարգվում են, սյուժետադերային խաղ, սոցիալական գործունեության յուրացում, ներքնայնացում, կողմնորոշվում է տարածության, ժամանակի մեջ, ճանաչում է առարկաների հատկանիշները, «ես» պատկերի ձևավորում, գործունեության տեսակների ընդլայնում՝ նկար, ծեփ, ապլիկացիա, սեռային նույնացում, վարքի կայունություն, խոսքի իմաստային կողմի գիտակցում, կայուն հուզական վիճակ, գործունեության հետևանքի հուզական կանխատեսում, պարտքի զգացում, կամային վարքի առաջացում, գործողությունների հնարավորությունների գիտակցում:
7 տարեկանի ճգնաժամ	Խաղ և ուսուցում	Արտահայտված են իր հանդեպ հարգանքի պահանջմունքը, հաջողության հասնելու, ընդունված լինելու դրդապատճառները, հասարակական հարաբերություններում կարգավիճակի փոփոխությունը:	Վարքի ինքնակարգավորում, սոցիալական «ես»-ի ձևավորում, ինքնագիտակցություն, ինքնավերլուծություն, ապրումների վերաիմաստավորում:

Փուլ, տարիք	Առաջատար գործունեություն	Սոցիալական իրավիճակ	Նորագոյացու-թյուններ
Կրտսեր դպրոցական (6-11)	Ուսուցում	Ինքնագիտակցությունը զարգանում է՝ պայմանավորված առաջադիմությամբ և ուսուցիչների հետ շփման առանձնահատկություններով: Ունի ինքնահաստատման պահանջմունք. սրա համար էական է ընտանիքում և դասարանում նրա զբաղեցրած տեղը:	Ձեռքբերումների մոտիվացիա. ձեռք է բերում գրավոր խոսքի ունակություն, ամրապնդվում է բառատրամաբանական մտածողությունը, հասկանում է կանոնների ու նորմերի իմաստը, ուսումնառության շարժառիթները: Զարգանում են ինքնավերահսկողությունը, կամածին ուշադրությունը և հիշողությունը:
Դեռահասություն (11-15)	Շփում հասակակիցների հետ	Զարգացման անհավասարաչափություն, հասակակիցների հետ շփման մեծ պահանջմունք: Նրանց կարծիքը դեռահասի համար դառնում է գերակա, ճանաչված, ընդունված լինելը՝ նույնպես: Դեռահասային ենթամշակույթների յուրացում, կոնֆլիկտայնություն:	Աճի արագացում, հորմոնալ փոփոխություններ, սեռական հասունացում, ինքնագիտակցության վերաձևավորում, անձնային անկայունություն, ինքնավերլուծություն, ինքնաճանաչում, նոր հետաքրքրություններ, ինտելեկտուալ բարդ խնդիրների լուծում, վերացական մտածողություն:
Պատանեկություն (15-18)	Ուսումնամասնագիտական գործունեություն	Ինքնուրույնություն, ինքնագնահատականը պայմանավորված է իրադրությամբ և արժեքային կողմնորոշմամբ:	Անձնային և մասնագիտական ինքնորոշում, աշխարհայացքի, համոզմունքների համակարգի ձևավորում, ինքնակրթություն, ապագայի կողմնորոշում, գաղափարական, հոգևոր հասունություն:

Հավելված 5

Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձև

Պետական մարմնի, կազմակերպության անվանումը

Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն-ազգանունը

Համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի

հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ, անդամ, քարտուղար

ԽՀՄ հասցեն՝----------

ԽՀՄ հեռախոսահամարը՝----------

ԽՀՄ էլեկտրոնային փոստի հասցեն՝----------

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

(ԽՀՄ-ի կողմից ՀՀ Կառավարության 631-Ն որոշմամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակում)

Հարգելի՛ պրն/տկն _____,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ _____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____ (ձևակերպել անհրաժեշտ տեղեկությունը) մասին:

Խնդրում եմ սույն տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Խնդրում եմ պատասխան գրությունը ուղարկել էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

Կից փաստաթղթեր՝

/---------- ------/----------/

Անուն, ազգանուն, պաշտոն ստորագրություն

Պարզաբանում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ 1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով: 2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված է, որ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետևյալ դեպքերում. 1) բանավոր հարցումներին պատասխանելիս. 2) մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս. 3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս. 4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս. 5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով և 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս. 6) տեղեկության տրամադրումը մերժելիս:

Հավելված 6

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունք

Վճռաբեկ դատարանը՝ երեխայի լավագույն շահ հասկացության մասին

Վճռաբեկ դատարանը 2011 թվականի հուլիսի 1-ի թիվ ԵԱՔԴ/1688/02/08 քաղաքացիական գործով որոշմամբ անդրադարձել է «երեխայի լավագույն շահ» հասկացությանը ամուսնալուծությունից հետո ծնողներից մեկի մոտ երեխայի ապրելու վերաբերյալ համաձայնության բացակայության շրջանակում: Դատարանը սահմանել է, որ համաձայնության բացակայության դեպքում դատարանը հարցը պետք է լուծի՝ «առաջնորդվելով երեխայի լավագույն շահերով», ըստ որի՝ տարբեր երկրներում բնակվող ծնողների երեխայի ապրելու վայրը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի երեխայի՝ ծնողների նախապես որոշած բնակության վայրը, երեխայի տարիքը, կրթության վայրը, համապատասխան երկրի և այդտեղ բնակվող ծնողի հետ երեխայի կապվածությունը հիմնավորող այլ հանգամանքներ, ինչպես նաև երեխայի ապրելու վայրի պարբերաբար փոփոխության հնարավոր բացասական հետևանքները երեխայի հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման և դաստիարակության վրա: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը որոշել է, որ տվյալ դեպքում առաջին ատյանի դատարանը չէր կարող երեխայի ապրելու վայրը որոշել՝ առաջնորդվելով երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու միայն ծնողներից մեկի իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ՝ առանց հաշվի առնելու երեխայի լավագույն շահը:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի մարտի 23-ի թիվ ԵԱՔԴ/0474/02/11 քաղաքացիական գործով սահմանել է, որ ստորադաս ատյանները «երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը, դատարանները պետք է հաշվի առնեն երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն)»:

Վճռաբեկ դատարանը ԱՐԱԴ/0264/02/11 գործով նշել է, որ տվյալ պարագայում 10 տարին լրացած երեխաների կարծիքը հաշվի առնելու հիմքով վերջիններիս խնամակալությունը հարազատներին հանձնելու պայմաններում, ըստ էության, խախտվել են մոր՝ այլ անձանց հանդեպ երեխային դաստիարակելու նախապատվության, երեխաների դաստիարակության,

առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար հոգ տանելու իրավունքները և պարտականությունները:

Վճռաբեկ դատարանը ԵԱՔԴ/1688/02/08 գործով հայտնել է, որ անկախ այն հանգամանքից, թե երեխան ծնողներից ում հետ է ապրելու, և հետագայում նրա բնակության վայրը որտեղ կորոշվի, երկու ծնողներն էլ ունեն հավասար հնարավորություններ՝ մասնակցելու երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը: Տվյալ դեպքում որևէ հանգամանք չի կարող արգելել, և ոչ ոք չպետք է խոչընդոտի հոր շփումը զավակի հետ, մասնակցությունը նրա խնամքին ու դաստիարակությանը, քանի որ սույն վեճի կարգավորման առարկան երեխայի ապրելու հարցի որոշումն է:

Վճռաբեկ դատարանը 01.04.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով սահմանել է, որ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է հիմք ընդունել միմիայն երեխայի լավագույն շահերը, ապահովել նրան բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ:

Հավելված 7

Օժանդակ գրականություն

1. Ավանեսյան Հ.Մ., Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում, Ուսումնամեթոդական ուղեցույց, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2015 թ., 50 էջ:

2. Արզումանյան Ս. Ջ., Մկրտչյան Ս. Շ., Սարգսյան Վ. Ժ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Երևան, «Զանգակ-97», 2002 թ., 392 էջ:

3. «Դեռահասների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց», Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷԼԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2018 թ., 88 էջ:

4. «Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց», Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷԼԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2018 թ., 188 էջ:

5. «Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց», Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար, Կազմ.՝ Անի Խուդոյան, Երևան, «ՎԷԼԱՍ Պրինտ» ՍՊԸ, 2019 թ., 136 էջ:

6. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում», Մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ, Երևան, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2018 թ., 150 էջ:

7. Ս. Սեդրակյան, Ա. Ղազարոսյան, Ն. Հակոբյան, Հոգեբանական աշխատանքները ուսումնական հաստատություններում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, «Ուրարտու» համալսարան, 2016 թ., 184 էջ:

8. «Հոգեդիագնոստիկա», Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ, Կազմ.՝ Ռ. Ստեփանյան, Ա. Գալստյան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012 թ., 210 էջ:

9. Выявление насилия в отношении детей. Руководство для специалистов, работающих в системе защиты детей (психологи,

социальные работники, социальные педагоги, медицинские работники детских учреждений и др.). – Бишкек: «Блиц», 2014. - 40 с.

10. Никольская И.М. Метод серийных рисунков и рассказов в психологической диагностике и консультировании детей и подростков. Учебное пособие для врачей и психологов. – СПб.: «Речь», 2014.- 56 с.

11. Панфилова М. А. Игротерапия общения: Тесты и коррекционные игры. Практическое пособие для психологов, педагогов и родителей. -М.: «Издательство ГНОМиД», 2001. -160 с.

12. Потемкина О. Ф., Потемкина Е. В.Психологический анализ рисунка и текста. СПб.: «Речь», 2006. - 524 с.

13. Практикум по возрастной психологии, Под ред. Л.А. Головей, Е.Ф. Рыбалко. – СПб.: «Речь», 2001. - 688 с.

14. Практикум по психологической диагностике семейных отношений: Учебно-методический комплекс. – Мн.: БГПУ им. М. Танка, 2002. - 341 с.

15. Прохорова О.Г. Основы психологии семьи и семейного консультирования: Учебно-методическое пособие по курсу, Под общей редакцией Торохтий В.С. -Москва, 2005. - 398 с.

16. Романова Е.В., Потемкина О.Ф. Графические методы в психологической диагностике. М.: Дидакт, 1992. -164 с.

17. Թեստեր և մեթոդիկաներ, https://www.doctors.am/tests-and-methodologies

18. Ռենե Ժիլի մեթոդիկան, https://vsetesti.ru/218/

19. Փիփ Ուիլսոնի «Ծառ» մեթոդիկան, http://www.vashpsixolog.ru/psychodiagnostic-school-psychologist/123-projective-tests-of-personality-research/2685-2018-08-25-08-23-15

ABSTRACT

The purpose of the “Handbook for Guardianship and Trusteeship Bodies and Committee Members” is to provide effective support to Guardianship and Trusteeship Bodies and Committees, especially in disputes and issues concerning children's rights, to enable them to apply professional skills, to make decisions and to provide conclusions.

This is a practical guide to help GTC members decide on the principles and procedures to be followed in each situation, based on the best interests of the child. The manual includes legal rules and standards related to the GTB’s functions, as well as instructions for psychological and social work. The handbook can be useful not only in the day-to-day work of committee members, but also in organizing elections or examinations for the appointment of GTC members, thus serving as a textbook for testing the knowledge of candidate members.

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«Խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների անդամների համար ձեռնարկ»-ի նպատակն է գործուն աջակցություն ցուցաբերել խնամակալության և հոգաբարձության մարմիններին և հանձնաժողովներին հատկապես երեխաների իրավունքներին առնչվող վեճերի և խնդիրների ժամանակ մասնագիտական հմտություններ գործադրելու, որոշումներ կայացնելու և եզրակացություններ տրամադրելու հարցերում:

Սա գործնական ձեռնարկ է, որը կօգնի ԽՀՀ անդամներին կողմնորոշվելու, թե յուրաքանչյուր իրավիճակում ինչ սկզբունքներով ու ընթացակարգերով է անհրաժեշտ առաջնորդվել՝ հիմք ընդունելով երեխայի լավագույն շահը: Ներառված են ինչպես ԽՀՄ/ԽՀՀ գործառույթներին առնչվող իրավական նորմեր ու չափորոշիչներ, այնպես էլ հոգեբանական և սոցիալական աշխատանքի վերաբերյալ ցուցումներ և խորհուրդներ: Կարող է օգտակար լինել ոչ միայն ԽՀՀ անդամների ամենօրյա գործունեության ընթացքում, այլև նրանց նշանակման համար ընտրություն կամ քննություն կազմակերպելիս՝ իբրև ԽՀՀ անդամների թեկնածուների գիտելիքների ստուգման դասագիրք:

«ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո պատրաստված այլ հրապարակումներ

- Սոցիալական հետազոտության էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց, 2021, https://epfarmenia.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021
- Բռնության մշակույթը Հայաստանում. անդրադարձ և առաջարկներ, 2020, https://epfarmenia.am/hy/document/Roots-ofViolence-in-Armenia-recommendations
- Հետազոտություն ՀՀ-ում վեճերի այլընտրանքային լուծման ոլորտի վերաբերյալ, 2020, https://epfarmenia.am/hy/document/Researchon-Alternative-Dispute-Resolution-in-Armenia
- Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության վերաբերյալ հետազոտություն, 2020, https://epfarmenia.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities
- Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում. Մաս 1, 2020, https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA
- Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020, https://epfarmenia.am/hy/document/Issues-Related-to-theRights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia
- Հարաբերություններ առանց շփումների, 2020, https://epfarmenia.am/hy/document/Relations-without-Interactions
- Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2020, https://epfarmenia.am/hy/document/Arme-nia-3-0-Understanding-20th-Century-Armenia
- Կրոնի կամ հավատքի ազատության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանում, Վրաստանում և դրանից դուրս: Համաժողովի հաշվետվություն (անգլերեն), 2019, https://epfarmenia.am/document/EPF-FoRB-2019-Report
- Հայաստանը և տարածաշրջանը, 2019, https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region
- Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019, https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs
- Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, 2019, https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-TricksCritical-Thinking
- Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, https://epfarmenia.am/hy/document/MSTACreative-Game
- Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, https://epfarmenia.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018

- ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art
- Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-inArmenian-Literature

Publications under the ‘EPF University’ headline

- Ethical Guidelines for Social Research (in Armenian). (2021) https://epfarmenia.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021
- CULTURE OF VIOLENCE IN ARMENIA. Reflection and recommendations (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations
- Research on Alternative Dispute Resolution in Armenia. (2020)https://epfarmenia.am/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia
- Research On Custody and Guardianship Authorities in Armenia (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/ResearchOn-Custody-and-Guardianship-Authorities
- The Probation Service in the Republic of Armenia. Part 1 (in Armenian). (2020) https://epfarmenia.am/hy/document/Baselineresearch-on-probation-service-in-RA
- Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia. (2020) https://epfarmenia.am/document/IssuesRelated-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residingin-Armenia
- Relations Without Interactions. (2020) https://epfarmenia.am/document/Relations-without-Interactions
- Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020) https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia
- Contemporary Issues of Freedom of Religion or Belief in Armenia, Georgia and Beyond. Conference Report. (2019) https://epfarmenia.am/document/EPF-FoRB-2019-Report
- Armenia and The Region (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region
- Publishing Guide (in Armenian, with English abstracts). (2019) https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian, with English abrstracts). (2019) https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs

- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) https://epfarmenia.am/document/MSTA-Creative-Game
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) https://epfarmenia.am/document/OAS-Highlights-CELoG-2018
- Culture, Literature and Art. (2018) https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian, with English abstracts). (2018) https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature

The handbook was created by Human Rights Power (HRP) in partnership with Eurasia Partnership Foundation (EPF) and Helsinki Association for Human Rights (HAHR) within the framework of the “Partnership for Justice Reform” project. The contents of this publication are the sole responsibility of Human Rights Power (HRP) and can in no way be taken to reflect the views of Eurasia Partnership Foundation and Helsinki Association.

Human Rights Power (HRP), 2022 - 124 pages

This publication is a part of the series of manuals published under the“EPF University” heading. This publication is a part of Civil Society (CS) direction. The series include texts which belong to four large thematic directions:

Critical Thinking (CT)

War and Peace (WP)

Civil Society (CS)

Education, methodology of history, culture and values (EMHCV)

© Human Rights Power, 2022

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ

ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՁԵՌՆԱՐԿ



ԵՀՀ
ՀԱՍԱԼՍԱՐԱՆ

ISBN 978-9939-1-1344-9